

Նարեկ արք. Ալեեմեղեան

ԿԵԱՆՔԷՆ ՊԱՀԵՐ

Լաւալ – Քանատա
2026

Ի յիշատակ
Մուշեղ աւ. քին. Տէր Գալուստեանին

«ԿԵԱՆՔԷՆ ՊԱՀԵՐ»-ՈՒ ԱՌԻԹՈՎ

Հոգեւոր անձի ծառայողական արդիւնաւէտ գործունէութեան կարելորագոյն նախահիմքը իր յարաբերութիւնն է ժողովրդի, իր հօտի եւ հաւատացեալ մարդկանց հետ: Մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, թէ հոգեւորականը սահմանափակում է զուտ իր պաշտօնի թէկուզ անթերի կատարումով, թէ՛ իր պարտականութիւններից զատ, իր պաշտօնական պարտականութիւններից դուրս մղում է դէպի պարզ մարդկանց կեանքը: Ճշմարիտ հոգեւորականը իր վեղարի տակից տեսնում է շատ բան, տեսնում է մանրամասներ, հոգեբանական վիճակներ, որոնք երեւան են հանում մարդկային բնաւորութիւնները, կերպարները, կեանքի թաքուն եւ չերեւացող կողմերը...

Հոգեւորականներն էլ տարբեր են լինում: Եւ մարդկանց հետ յարաբերութիւններում յատկապէս գնահատում է նաեւ հոգեւորականը՝ իր բնաւորութեամբ, իր նկարագրի գովելի կամ մերժելի կողմերով:

Նարեկ արքեպիսկոպոս Ալեկմեղեանը տարիներ շարունակ գրանցել է մարդկային յարաբերութիւնների, մարդկանց վարքութեան իր դիտումներն ու դատումները: Այդ մանրադէտքերի եւ մանրապատումների մէջ յստակօրէն երեւում է, մի կողմից, հոգեւորականի բարեմիտ ու բարեհոգի վերաբերմունքը իր պատկերած նիւթի հանդէպ, միւս կողմից՝ պարզ մարդկանց կեանքն ու հոգեբանութիւնը իր ողջ բազմազանութեամբ:

Նարեկ սրբազանի մանրապատումները նուրբ եւ ուշադիր դիտողականութիւն եւ մարդկանց հանդէպ հոգածու վերաբերմունքի արդիւնք են: Հեղինակի խօսքում ե՛ւ երգիծանք կայ, ե՛ւ ժպիտ, ե՛ւ բարեմիտ հումոր: Լաւագոյն գրքերը գրում է կեանքը, հեղինակները առաւել կամ պակաս յաջողութեամբ գրանցում են կեանքի հեղինակածը:

Նարեկ սրբազանի գրանցած մանրապատումների բուն հեղինակը կեանքն է՝ իր խրատական եւ ուսուցչողական կարելոր ու արժէքաւոր բովանդակութեամբ:

Երուանդ Տէր-Խաչատուրեան

ՄՈՒՏՔ

Իւրաքանչիւր անհատի կեանքը լեցուն է այնպիսի դէպքերով եւ դէմքերով, որոնք երբ պատմուին՝ այլ անհատներու կեանքը կը քաղցրացնեն եւ գրգիռ կը դառնան որպէսզի անոնք եւս նման դէպքեր ու դէմքեր յիշեն, պատմեն եւ արձանագրեն՝ պատմութեան համար:

Այս մանրապատումներու շարքը կը սկսիմ հոգելոյս Մուշեղ աւ. քին. Տէր Գալուստեանով, որուն կեանքը մանրապատումներով լի եղած է: Մանրապատումներս կը ձօնեմ քահանայ հօր անթառամ յիշատակին:

Այս մանրապատումները ժամանակագրական ու աշխարհագրական յաջորդական ընթացքի մը պիտի չհետեւին. պիտի ներառեն բոլոր այն վայրերը ուր գտնուած եմ եւ բոլոր այն անձերը որոնց հանդիպած եմ կամ որոնց մասին սիրելիներ պատմած են ինծի:

Նկատողութիւն մը տեղին կը գտնեմ. Ժամանակակիցներս կրնան որոշ մանրամասնութիւններ տարբեր ձեւով ներկայացնել. այս ալ իրենց արդար իրաւունքը կը նկատեմ, որովհետեւ իւրաքանչիւրս մեր հայեցակէտը ունինք:

Իրաւամբ “Good old days!” կ’ըսեն...: Միաժամանակ ընդունինք, թէ մեր ապրած իւրաքանչիւր օրն ալ նոյնիսկ իր դառնութեան մէջ ունի իր անուշութիւնը: Վայելենք զայն մեր սիրելիներուն հետ՝ ամե՛ն օր:

(1)

Իմ ծնունդէս առաջ (1962), Մուշեղ աւ. քին. Տէր Գալուստեան մի քանի տարի մեր ծխատէր քահանայն եղած է: Հայրս, որ մեր եկեղեցիին մէջ ուրարակիր եղած է, մեծ գովեստով կը պատմէր տէր հօր իւրայատուկ ձայնին եւ բարեմասնութիւններուն մասին. մանաւանդ կը յիշէր, թէ լիբանանահայութեան 1958-ի եղբայրասպան կոիւներու օրերուն, մեր շրջանին մէջ տխուր դէպքեր չեն պատահած, որովհետեւ տէր հայրը զանազան կուսակցութիւններու պատկանող տաքարիւն երիտասարդները իր շուրջ հաւաքած է ու *ֆուլթայնլով* զբաղուցած, եւ ինքն ալ իրաւաբարութիւն կատարած մրցակից խումբերուն միջեւ: Առաւել, որպէս հոգեւոր հովիւ միշտ ընտանիքներու անդորրութեան հետամուտ եղած է՝ ծոյլ ու խման ամուսինները սաստելով եւ ի պահանջել հարկին «որ ոչ լուիցէ բանիւ, լուիցէ գանիւ» («Ով որ խօսքով չի՝ լսեր, գաւազանով կը լսէ») առածը գործադրելով:

Անդրանիկ Ծառուկեան ՆԱՅԻՐԻ-ի 21 դեկտեմբեր 1958-ի թիւի էջ 5-ի աջ անկիւնը տփիկ մը ունի, ուր, սեւ *ֆոնի* վրայ, հետեւեալ «*քարտը*» տպած է.

Միշտ Հայերէ՛ն խօսինք...

Այս օրուրնէ սկսեալ այն երիտասարդն ու երիտասարդուհին որ կը փորձէ թրքերէն խօսիլ, մեր որոշումով պիտի վճարէ որպէս տուգանք 25 Լ. Դիկ. Ազգ. Բուժարանի սնտուկին որ մեր մօտ կը գտնուի:

ՄՈՒՇԵՂ ՔԱՀԱՆԱՅ

ՊՈՒՐՃ - ՀԱՄՈՒՏ 12 - 12 - 58

Ապա, իրեն յատուկ *հիւմըրով* Ծառուկեան կը խորհրդածէ. «Երիտասարդ, շատ երիտասարդ քահանայի մը նախաձեռնութիւնն է այս... հրովարտակը: Պէյրութի ամենէն աղքատիկ ու պզտիկ ու խեղճ մէկ եկեղեցիին հովիւը, որ պայքարելու համար թրքախօսութեան ախտին դէմ, գտած է այս բաւականին ինքնատիպ միջոցը, տպագրելով եւ ցրուելով վերի թռուցիկը:

Կասկած չունինք, որ եթե ոչ ամբողջապես, բայց գոնե զգալի չափով մը կը նուագի թրքախօսութիւնը այդ շրջանին մէջ: Մինչեւ հոս՝ պատկերին մէկ երեսն է: Միւս երեսը այն է, որ, ինչպէս կ'իմանանք, այս երիտասարդ քահանան ի մօտոյ ...Ամերիկա կը տեղափոխուի: Հարց է, թէ իր մեկնումէն ետք իր ստեղծած լեզուական վարչակարգը պիտի յարգուի՞ իր յաջորդին կողմէ:

Երկրորդ հարց մը. Պէյրութի թրքախօսներուն այսպէս տուգանք սահմանելէ ետք, Տէր Մուշեղ ի՞նչ պատիժ պիտի տանի արդեօք իրեն հետ Ամերիկայի անգլիախօս հայերուն: Եթէ կը մտածէ ամերիկահայ ծովներն ալ ենթարկել նոյն տուգանքին, կը թելադրենք այժմէն իսկ թռուցիկը թարգմանել... անգլիերէնի: Աւելի ազդու է: Արդիւնքը նոյնն է անշուշտ, որովհետեւ հայերէն չկարդացող մը դժուար թէ այնտեղ ըլլայ նաեւ հայերէն խօսող մը, բայց անգլիերէն կարդացուելով թռուցիկը, կը դիւրանայ, գոնէ, տուգանքներուն գանձումը...

Աւելիին համար պատրանքներ պէտք չէ սնուցանել»:

* * *

Տարին՝ 1958: Այսօր՝ 2022: Ո՛չ «Պէյրութի ամենէն աղքատիկ ու պզտիկ ու խեղճ մէկ եկեղեցիին հովիւը» մնաց, ո՛չ եկեղեցին մնաց, ո՛չ թրքախօսութիւնը մնաց, ո՛չ Անդրանիկ Ծառուկեանը մնաց, ո՛չ ՆԱՅԻՐԻ՝ ն մնաց: Իսկ տէր Մուշեղներու «Միշտ Հայերէն խօսինք...» կտակը մնա՞ց... իւրաքանչիւրս իր կեանքով պիտի պատասխանէ այս մարտահրաւերին:

(2)

1991-ին, արմատներով Սանճագ գեմբէն սրտի մասնագէտ բժիշկ քարեկամի մը հրաւերով, Նիւ Եորք՝ տէր Մուշեղին հետ ճաշի ենք:

«Մէկ ժամէն սրտի գործողութիւն ունիմ», կ'ըսէ բժիշկը՝ կարծես մեր ճաշի տետղութիւնը սահմանելու համար:

Իրեն յատուկ սրամտութեամբ, տէր հայրը կը պատասխանէ. «Ի՞նչ ըսել կ'ուզես կոր, *տոքթո՛ր*, կէս ժամէն ուտենք-ելլե՞նք»:

Զուարթ է մթնոլորտը՝ մանաւանդ տէր հօր ներկայութեամբ:

Բժիշկը բարձր տրամադրության մեջ է, եւ մի քանի բաժակ աւելի գինի կը խմէ:

Տէր հայրը նկատողութիւն կ'ընէ. «Տոբթո՛ր, ի՞նչ կ'ըլլանք կոր. գործողութիւնը մոռցար կ'երեւի»:

«Ի՞նչ կայ», կը հակադարձէ ան, «դուք ալ պատարագի ատեն գինի չէ՞ք խմեր»:

«Անշուշտ կը խմենք, բայց՝ պատարագի վերջաւորութեան. քարոզը կու տանք, հաղորդութիւնն ալ կու տանք եւ յետոյ կը խմենք», կ'եզրակացնէ տէր Մուշեղ:

(3)

Նիւ Եորքի սաստիկ ձմեռներէն մին է: Ամեն կողմ սառոյց կապած է: Տէր Մուշեղին չար բախտէն այդ օր թաղում կայ: Մեռելակառքը եւ հինգ ինքնաշարժ մեծ դժուարութեամբ գերեզմանատուն կը հասնին: Միայն տէր հայրը եւ երիտասարդ մը գերեզմանին կը մօտենան: Տէր հայրը ցուրտէն ակռաները կրճտելով հապճեպօրէն գերեզմանի կարգը կը կատարէ, եւ մեռելաթաղը հողով կը ծածկէ գերեզմանը: Ինքնաշարժ վերադարձի ճամբուն վրայ երիտասարդը յանդիմանական շեշտով տէր հօր կ'ըսէ. «Է՛հ, աղուոր մը կարճի կապեցիր հա...»: Տէր հայրը կը պատասխանէ. «Հոս նայէ՛. ես քառասուն տարիէ ի վեր մարդ կը թաղեմ եւ իմ թաղածներէս մէկը ետ չէ եկած...»: Երիտասարդը մեծ մտահոգութեամբ կը յարէ. «Բայց, տէ՛ր հայր, ասիկա իմ *դայնանաս* է. դուն ասո՛ր ինչ ըլլալը չես գիտեր. ասիկա ետ եկող տեսակէն է...»:

(4)

Տէր Մուշեղ կը պատմէ, թէ երբ 1959-ին Լիբանանէն Ամերիկայի Միացեալ Նահանգներ կը հասնի, Ռէյսինի (Շիքակոյի շրջան. 900 մղոն հեռու Նիւ Եորք քաղաքէն) հոգեւոր հովիւ կը նշանակուի:

«Հազիւ երկու շաբաթ անցած էր, երբ մայրիկի մը տունը կը հրաւիրուիմ: “Տղա՛ս”, կ'ըսէ մայրիկը, “շատոնց է տունս չէ օրհնուած. աղօթք մը ըրէ ալ՝ *շէշշ* թող երթայ”: “Պահպանիչ” մը կ'ըսեմ եւ “Հայր մեր”

մը կ'երգեմ: Մինչ այդ շունի հաչոց կը լսեմ սենեակի մը փակ դուռին ետեւէն: Խերով-բարով լսած չըլլայի հաչոցը...: “Ամա՛ն *եալորում*”, կը յարէ մայրիկը, “լաւ միտքս ինկաւ. սա մեր ձագուկը վերջերս բաներ մը կ'ըլլայ կոր. *հէչ* աղէկ չէ. բերեմ ալ, մէկ հատ ասոր վրալ ալ աղօթք մը կարդայ”: Ըսելը եւ սենեակ վազելը մէկ կ'ըլլայ:

Ես կ'անճրկիմ: Ի՞նչ պիտի ընեմ, ի՞նչ պիտի աղօթեմ: Մենք դպրեւանքին մէջ շուն օրհնելու աղօթք չենք սորված, ես Լիբանան շուն չեմ օրհնած. ի՞նչ գիտնամ՝ հոս Ամերիկա է, արդեօք արտօնուած է շուն, կատու, թռչուն, ձուկ օրհնելը. թերեւս առաջնորդին պէտք է հարցնեմ, ան ալ Նիւ Եորք է. այն օրերուն *սելուլէր-մելուլէր* ալ չի՛ կար եւ ո՞վ կը համարձակէր մէկու մը տունէն long-distance հեռաձայն ընել, այն ալ այսպիսի զգայուն հարցի մը մասին՝ եւ մայրիկի՛ն ներկայութեան: Ես այս մտորումներուն մէջ էի, երբ արդէն մեր մայրիկը “մե՛ր ձագուկը” գրկած կու գայ եւ քովս կը բազմի:

Կայծակնային արագութեամբ Աստուած օգնութեան կը հասնի եւ կը յանձնարարեմ մայրիկին. “Մայրի՛կ, ես առաջին անգամ կը տեսնեմ մեր անուշիկ ձագուկը: Աստուած պահէ: Ես շուներէն կը վախնամ: Այնպէս կ'երեւի, որ ձագուկն ալ ինձմէ կը վախնայ կոր: Կը դողայ կոր... (քիչ մնաց “*հայվանը*” պիտի ըսէի եւ կաթը թափէի) ձագուկը: Եկուր դուն ձագուկը գիրկդ պահէ եւ ես քեզ կ'օրհնեմ եւ ձագուկն ալ կ'օրհնուի”:

Մայրիկը շատ գոհ կը մնայ: Ես ալ գոհ կը մնամ: Կը խորհիմ, որ Աստուած ալ գոհ կը մնայ: Եւ եթէ օր մը առաջնորդ սրբազանը եւ ուրիշներ ալ իմանային անոնք ալ գոհ պիտի մնային, որովհետեւ ես շունը չէ որ կ'օրհնեմ, այլ՝ մայրիկը, որ գիրկին մէջ իր ձագուկը պահած էր...:

Ամերիկայի առաջին նուէրս եռապատիկ կ'ըլլայ. ուղղակի՝ տնօրհնէք ու մայրիկօրհնէք եւ անուղղակի՝ ձագուկօրհնէք...»:

(5)

Մի քանի տարի յետոյ, տէր Մուշեղ Ռէյսինէն Նիւ Եորք կու գայ եւ Ս. Լուսաւորիչ Մայր եկեղեցիի հոգեւոր հովիւ կը կարգուի:

«Առաջին շաբաթն է Նիւ Եորք ենք», կը պատմէ, «ակոռայի ահաւոր ցաւ մը կ'ունենամ: Առաջնորդ սրբազանը Քուինզի մէջ հայ ատամնաբուծի մը կը դրկէ զիս: Կը ժամադրուինք եւ կ'երթամ: Չեմ դիմանար կոր: Կը նայի:

“Պէտք է քաշեմ”, կը վճռէ: Կը համակերպիմ. ինչ կրնամ ընել, anyway: Ասեղը կը կոխէ: “Տասը վայրկեան պէտք է սպասէք. կը թմրի, կը քաշեմ” կ’ըսէ, եւ *օֆիսէն* դուրս կ’ելլէ: Առանձին կը մնամ: Բարեբախտաբար ցաւս ալ հետը կը տանի: Տասը վայրկեան, քսան վայրկեան, երեսուն վայրկեան. ցաւը ետ կու գայ, *տոքթորը* չի՛ գար: Ցաւը կը սկսի անտանելի դառնալ: Քառորդ ժամ եւս կը սպասեմ եւ ես ալ կծիկը կը դնեմ: *Օթոս* կ’առնեմ եւ ամենէն մօտիկ ատամնաբուծին կ’երթամ: Յետոյ կ’իմանամ, որ մեր մարդը խմիչքի տկարութիւն ունի եղեր եւ *ուիսքի* մը խմելու համար քովի *պաշտ* գացեր է եւ տասը վայրկեանը Աստուած գիտէ քանի՛ վայրկեան եւ քանի՛ գաւաթ եղեր է...»:

(6)

«Տէ՛ր Մուշեղ, կիրակի իրիկուն ժամը 9-ին Ֆլորիտայէն Լակուարտիա կը հասնիմ. եկուր զիս առ եւ տուն հասցուր, հաճիս»: Մեսրոպ արք. Աշճեանն է հեռախօսողը:

Ճշդուած ժամուն տէր հայրը Նիւ Եորքի օդանաւակայանն է եւ կը տեսնէ, որ առաջնորդ սրբազանը վճարովի հեռաձայնի կէտէ մը կը խօսի (այդ օրերուն տակաւին բջիջային հեռախօս չկար) եւ ձեռքի շարժումով զինք իր մօտ կը կանչէ: Տէր Մուշեղ կը մօտենայ եւ Մեսրոպ սրբազան կը յանձնարարէ. «Տէ՛ր հայր, պզտիկ *վաշիզ* մը ունիմ, առ եւ հոս բեր. կ’երթանք», եւ հեռախօսազրոյցը կը շարունակէ: Տէր հայրը պայուսակներուն քով կ’երթայ: Բոլոր ճամբորդները իրենց պայուսակները առնելով դուրս կ’ելլեն եւ միայն շատ պզտիկ պայուսակ մը կը մնայ: Տէր հայրը կը զարմանայ, թէ ինչո՞ւ սրբազանը զայն հետը օդանաւ չէ հանած, երբ մանաւանդ ձեռքի պայուսակ ալ չունի: Տէր հայրը երբ տակաւին այս շուարումին մէջ կը գտնուէր, սրբազանը կու գայ եւ քիչ մը խիստ ոճով կ’ըսէ. «Ի՞նչ կեցեր ես, ա՛ռ եւ քալենք. ուշ է արդէն»: Տէր Մուշեղ կ’առնէ պայուսակը եւ վրան կը կարդայ. “Աճիւն այսինչ այսինչեանի”: Ժպիտ մը կ’ուրուագծուի տէր հօր դէմքին վրայ: Կծիկը քակուած է: Սրբազանը չէ ուզած եւ հիմա ալ չ’ուզեր աճիւնին հպիլ: Ընդհանրապէս Նիւ Եորքի մէջ ուշ ժամերուն ամեն տեղ *թաքսիով* գացող սրբազանը տէր Մուշեղը անհանգիստ ըրած էր այս աճիւնը կրող պայուսակին պատճառով:

Երբ տէր Մուշեղ ինքնաշարժին դուռը կը բանայ, որպէսզի աճիւնի պայուսակը ետեւի աթոռին վրայ դնէ, Մեսրոպ սրբազան դարձեալ յանդիմանական շեշտով կ'ըսէ. «Ի՞նչ կ'ընես կոր. սնտուկը դի՛ր»:

Կը հասնին սրբազանին տունը եւ տէր հայրը կը պատրաստուի աճիւնի պայուսակը տալու, երբ սրբազանը բաճկոնին գրպանէն պահարան մը կը հանէ եւ կ'ըսէ. «Բոլոր մանրամասնութիւնները արձանագրուած են հոս: Այս պայուսակը հետդ տուն տար. *օթոյին* մէջ չձգես: Վաղը առտու գերեզմանատուն գնա եւ պէտք եղածը կարգադրէ: *Չէք*-ն ալ մէջն է, աւելիով: Գիշեր բարի»: Սրբազանին առաքելութիւնը հոս կ'աւարտի: Արդէն օդանաւակայանէն առ որ անկ է աւետած էր, թէ պայուսակը «ողջամբ» տեղ հասած էր...:

Յաջորդ առաւօտ տէր Մուշեղ ժամը 8-ին գերեզմանատուն կ'ուղղուի: Ինքն է պատմողը.

«*Թէրս* պիտի ըլլայ *ես*: *Թրաֆիք* մը, չտեսնուած: Ստիպուած եղայ աջ գիծը, “երկու հոգի եւ աւելի” ըսուածը, առնելու: Չար բախտէս ոստիկանը կեցուց: Բարեբախտաբար Մեսրոպ սրբազանը քովս չէր եւ իր աթոռին վրայ բազմած էր աճիւնի պայուսակը: Ոստիկանը *օթօ* քշելու տետրակս ստուգելէ յետոյ ըսաւ, որ *թիքէթ* պիտի տայ, որովհետեւ առանձին էի եւ “երկու հոգի եւ աւելի” նշուած գիծէն կ'անցնէի: Առարկեցի եւ պայուսակը իրեն երկարեցի ու առաջարկեցի, որ վրայի անուն-մականունը կարդայ: Մարդը *այլն-պէյին* եղաւ: Մէյ մը ինծի նայեցաւ, մէյ մը նորէն պայուսակին նայեցաւ, “Գնա՛. իրաւունք ունիս. երկու հոգի էք. կեանքիս մէջ ասանկ բանի չէի հանդիպած” ըսաւ...»:

(7)

Տէր Մուշեղին հետ յուղարկաւորութիւն մը ունինք Նիւ Ճըրզի, մեռելատունին մէջ, որուն կը մասնակցի նաեւ տեղոյն Հայ աւետարանական եկեղեցիի երիտասարդ նորոգ նշանակեալ հոգեւոր հովիւր: Ապա, երեքս միասին իմ ինքնաշարժովս գերեզմանատուն կ'երթանք:

Տէր հայրը, իրեն յատուկ զուարթախօսութեամբ, պատուելիէն անոր կենսագրական նախնական տուեալները առնելէն ետք՝ կը հարցնէ. «Է՛, պատուելի՛, ամուսնացա՞ծ ես մը»: Ան ալ, արդէն ամչկոտ, հազիւ լսելի ձայնով. «Այո, տէ՛ր հայր» կը պատասխանէ: Անխուսափելի երկրորդ հար-

ցումը կը հասնի. «Դուք ի՞նչ կ'ըսեք, երեցկին չէ՞ ալ, փամփուշտ-բամբիշ, ի՞նչ է նէ, կնիկդ հա՞յ է մը»: «Այո՛. վեց ամիս առաջ ամուսնացանք», դարձեալ նոյն ամչկոտ շեշտով: Այս անգամ գոնէ նախադասութիւնը քիչ մը երկար է. ուրեմն ամչկոտութիւնը կը սկսի խոյս տալ, երբ տէր Մուշեղ երրորդ հարցումը կ'ուղղէ. «Օլուխ-չօճուխ կա՞յ մը կրակին վրայ»: Պատուելին, դարձեալ մեղմ ձայնով կը պատասխանէ. «Ո՛չ դեռ. բայց այդ մասին կը մտածենք կոր»: Այս անգամ տէր հայրը պատուելիին գլխուն պաղ ջուր կը թափէ. «Պատուելի՛, այս գործը մտածելով չըլլար...»:

(8)

Կը պատմեն. Սանճագ գեմբը երկու փոքր եղբայր գնդիկ խաղցած ատեն, իրենց տարեկից փոքրիկ մը կը ծեծեն: Ծեծ ուտողին մայրը կ'ըսէ անոնց. «Ի՞նչ է՝ ձեր *զախմ* (կեղծ հերոս) քեռիի՞ն վստահեցաք եւ տղաս ծեծեցիք»: Փոքրիկները կը մոռնան պատահարը եւ կը շարունակեն իրենց խաղը: Այդ օրերուն զոյգ ասորճանակով պտտող *զախմ* ընկերները շատ էին...: Յետոյ բոլորն ալ կամաց-կամաց հրապարակէն մաքրուեցան:

(9)

Կը պատմեն. Սանճագ գեմբի դրացնութեան կը գտնուէր *թիրոն*, որ աղանի որսալու վայր էր: Օր մը վիրաւոր աղանիին քար նետած ատեն, Սագօ դրացիին տղուն ճակատը կը պատռէ: Մայրը կ'ըսէ. «Վնաս չունի, բան մը չեղաւ. խենթ արիւնդ ելաւ»: Դէպքը շուտով կը մոռցուի եւ բարի դրացնութիւնը կը շարունակուի:

(10)

Կը պատմեն. Նուպարեան վարժարանին մէջ, պարոնը աշակերտ մը կ'ապտակէ եւ զայն հոլի պէս կը դարձնէ: Քառորդ ժամէն լուրը կը տարածուի թաղին մէջ եւ աշակերտին *զախմ* (կեղծ հերոս) եղբայրը ասորճանակը ձեռքը դպրոց կը խուժէ: Ընկեր տնօրէնը՝ «Ընկերըմ, հան-

դարտի՛ր» ըսելով համոզիչ շեշտով կը փորձէ բորբոքած կրակը մարել։ Անօգուտ։ Պարոնը դասարանէ դասարան կը փախցնեն։ Ան այլեւս կը խուսափի դպրոց եւ թաղ ոտք կոխելէ...։

(11)

Թուրքին հետ առաջին շփումս մեր տունին մէջ տեղի կ'ունենայ։ Աղջիկութեան մայրս Պէյրութը, մատամ Ֆերնանտին մօտ, կարի դաս առած էր եւ որպէս յաւելեալ եկամուտի աղբիւր՝ տունը կիներու հագուստ կը կարէր։ Չեմ գիտեր ուրկէ-ուր Պոլիսէն թրքուհի յաճախորդուհի մըն ալ ունէր, որ տարին մի քանի անգամ լոխումով, խաղալիքներով ու այլ նուէրներով ծանրաբեռնուած եւ «Մանուկը՛մ, Մանուկը՛մ» փաղաքշական ձայնարկումներով մեր տունը կը մտնէր։ Ես զինք «*Թեզզէ*» կը կոչէի։ Յատկապէս դպրոցը այնքա՛ն լսած էինք Հայկական ցեղասպանութեան մասին, որ մայրս հազիւ կը զսպէր զայրոյթս, երբ ամեն անգամ կը սպառնայի. «*Մամ*, չեմ ուզեր որ այս կինը մեր տունը մտնէ։ Կ'ըսեմ կոր *հա*. եթէ նորէն գայ, պիտի սպանեմ զինք...»։ Միւս կողմէն ալ բերածները կ'առնէի եւ մեծ հաճոյքով կը վայելէի...։

(12)

Տունին մէջ տարօրինակ իրարանցում մը կը տիրէ։ Մեծ հայրս եւ մեծ մայրս ամեն տեղ մեծ հօրս գլխարկը կը փնտռեն։ Պահարանին մէջ, արթոններուն վրայ, անկողիններուն վրայ, սեղանիկներուն վրայ, գլխարկը չկայ ու չկայ։ Ո՞ր գացած կրնայ ըլլալ սա անիծեալ գլխարկը։ «Հիմա՛ հոս էր», կը բացագանչէ մեծ հայրս։ «Ե՛ս ալ տեսայ», կ'աւելցնէ մեծ մայրս։ Մայրս խոհանոցէն սենեակ կը մտնէ եւ կը հարցնէ. «Խե՛ր է, ի՞նչ կայ իրար անցեր էք»։ «*Տէտէին* գլխարկը կը փնտռենք», կը պատասխանէ *նենէս*։ Մայրս զարմացական շեշտով կը յարէ. «Գլխարկը հայրիկին գլուխն է...»։ Մեծ հայրս ձեռքը գլուխը կը տանի, գլխարկը կը շօշափէ եւ մեծ մայրս կը յանդիմանէ. «Ես իմ գլուխս չեմ կրնար տեսնել. դո՞ւն ալ չես տեսներ կոր. զարմանալի կին մըն ես...»։

(13)

Հազիւ սկսած եմ քալել եւ Մագրա՛աթ Քըֆըրտըպիան գիւղն ենք՝ Պէյրութի տաք եւ խոնաւ օդէն խոյս տուած: Մեծ հայրս՝ նշանաւոր Ապու Եա՛աուպը ամբողջ գիւղին մէջ ծանօթ է, որովհետեւ պարտէզէ պարտէզ կ'անցնի, պտուղ կը հաւաքէ եւ շաբաթը քանի մը անգամ Սանճագ գէմբ կը տանի ծախելու համար: Նաեւ երեկոները մարոնիթ եկեղեցին կ'երթայ, որովհետեւ գիւղը հայկական եկեղեցի չունի: Այդ երանելի՛ օրերուն Լիբա՛նանի հայկական եկեղեցիներուն մեծամասնութեան մէջ առաւօտ եւ երեկոյ ամենօրեայ ժամերգութիւն կ'ըլլար եւ ես մինչեւ դպրոց երթալս հօրենական մեծ ծնողներուս կ'ընկերանայի, ինչպէս նաեւ՝ կիրակնօրեայ սուրբ պատարագին, որուն կը յաջորդէր,՝ ճաշէն ետք,՝ կիրակնօրեայ վարժարանը: Այսպէս էր, որ կրօնական դաստիարակութեան եւ ապագայ հոգեւորականի սերմերը կը ցանուէին իմ եւ նմաններուս մէջ:

Գիւղի քահանան յաճախ մեր տունը կու գար եւ մեծ ծնողներս իրենց գիտցած-չգիտցած արաբերէնով ու հայկական հիւրասիրութեամբ ժամանակ կ'անցընէին հետը: Ան յաճախ ալ խաչիկներ ու սրբանկարներ կու տար ինծի եւ զիս կ'օրհներ: Մտերմացած էինք: Օր մըն ալ քահանային գիրկը կը նետուիմ եւ «Աթթինի հայտա» (Տուր ասի) ըսելով՝ կը սկսիմ մօրուքը քաշել: Խեղճ մարդը անմիջապէս «Հայտա մէպիսիր» (Ասի չըլլար, ասի չի՛ տրուիր) պոռալով զիս գիրկէն վար կ'իջեցնէ եւ մեր տունէն դուրս կը վազէ՝ գաւաթ մը սուրճը կէս ձգելով: Ան անգամ մըն ալ մեր տունը ոտք չի՛ կոխեր այլեւս:

Երախտապարտ եմ Աստուծոյ, որ քահանային փոխարէն ի՛նք տուաւ մօրուքը եւ շատ աւելին...:

(14)

Դպրեւանքի մեր գրաբարի ուսուցիչը՝ պարոն Գէորգ Գանտա՛հարեան քերականութեան կանոն մը բացատրած ատեն, գրատախտակին վրայ դիտմամբ սխալ մը կը գրէ եւ դասարանին հարց կու տայ. «Մէջերնիդ բողոքական չկա՞յ»: Մենք ալ միամիտ-միամիտ կը մտածենք, թէ առաքելական դպրեւանքին մէջ բողոքական աշակերտ ի՞նչ գործ ունի, կը

պատասխանենք. «Ո՛չ, պարոն»: «Ուրեմն դասէն բան մը չէք հասկցած», կ'եզրակացնէ եւ իր հայրական ժպիտը կը սփռէ մեր վրայ...:

Ուրիշ դասապահի մը ընթացքին, պարոն Գանտահարեան հայերէնի ուղղագրական կանոն մը կը բացատրէ եւ կը հարցնէ. «Ղա-էն յետոյ ջէ կու գայ. օրինակ՝ զիղջ, գաղջ: Ո՞վ կրնայ օրինակ մը տալ»: Ուսանող մը կը պատասխանէ. «Պաղ ջուր»: Պարոնը խնդալով կ'ըսէ. «*Ամմա տա* ըրիր *հա*, պզտիկ տիրացո՛ւ»: Ամբողջ դասարանը կը խնդայ:

(15)

Խորէն արք. Բարոյեան Ս. Նշանի առաջնորդարանէն կաթողիկոսարան պէտք է երթայ եւ առաջնորդարանի ինքնաշարժը նորոգութեան մէջ է: Մայր եկեղեցիի սարկաւազներէն մէկուն կը յանձնարարէ. «Ճամբայ իջիր, *թաքսի* մը կ'եցուր, երկու ոսկի սակարկէ եւ եկուր զիս կանչէ, միասին կ'երթանք»:

Սարկաւազը աւելի քան մէկ ժամ կը փորձէ երկու ոսկիով Պէյրութէն Անթիլիաս գացող *թաքսի* մը գտնել եւ ի վերջոյ երեք ոսկիով համաձայնելէ ետք արաբ վարորդի մը հետ՝ առաջնորդ սրբազանը ինքնաշարժ կ'առաջնորդէ: Խորէն սրբազան նստելէ ետք կը կատակէ սարկաւազին հետ. «Մէկ ոսկիի տարբերութիւնը դուն պիտի տաս»:

Երբ մայրավանքին կը մօտենան, սրբազանը հինգ ոսկի կու տայ վարորդին եւ կ'ըսէ. «Խալլի» (Մնացածը քեզի): Սարկաւազը կը յիշէ իր երկու ոսկիի քրտնաթոր սակարկութիւնները *թաքսիի* վարորդներուն հետ եւ սրտնեղած կը յարէ. «Սրբազա՛ն հայր, զիս ահագի՛ն յոգնեցուցիք եւ հիմա երկու ոսկի *պախշի շ* (նուէր, վարձատրութիւն) կու տաք կոր»: Խորէն սրբազան կը ժպտի եւ կը պատասխանէ. «Դեռ *չօճուիս* (երեխայ) ես, կը սորվիս: Ֆրանսերէն կ'ըսեն՝ «Նոպլէզ օպլիժ» (Ազնութիւնը իր պարտաւորութիւնները ունի): Հիմա աս մարդը ամեն տեղ պիտի պատմէ, որ հայոց առաջնորդը երեք ոսկի *թաքսիին* վճարեց եւ երկու ոսկի ալ *պախշի շ* տուաւ: Ամեն մարդ *պախշի շին* մասին պիտի խօսի: Ասի չի՛ մոռցուիր...»:

(16)

Խորեն Ա. կաթողիկոս սրամիտ եւ առատաձեռն էր:

1981-ին նոր արեղայ ձեռնադրուած եմ եւ օժակիցիս հետ Անթիլիասի Մայր տաճարին մէջ սուրբ պսակի մը օրհնութիւնը կատարելէ ետք դուրս կ'ելլենք ու մեր սենեակները պիտի երթանք, երբ Խորեն կաթողիկոս վեհարանի պատշգամը կը ճեմէր եւ նշան կ'ընէ, որ իր մօտ բարձրանանք:

Վեհարանի իր գրասենեակին մէջ մեզ կ'ընդունի եւ կը յանդիմանէ՝ ըսելով. «Կ'իմանամ, որ ժողովուրդին մէջ *սիկարէթ* կը ծխէք: Հո՛ւ սպասեցէք. հիմա կու գամ»: Մենք կասկարմիր եղած, պատիժի վրայ բռնուած աշակերտներու պէս կը կայնինք:

Վեհափառ հայրապետ իր ննջարանը կ'անցնի: Քիչ ետք երկու մեծ տուփ (իւրաքանչիւրին մէջ քսանական հատ) Rothmans *սիկարէթ* կը բերէ, մեզի կու տայ եւ խորենեան ժպիտով կը յարէ. «Ո՛վ գիտէ ի՞նչ աժաննոց *սիկարէթ* կը ծխէք կոր. է՛հ առած ամսականնիդ ի՞նչ է որ ի՞նչ ծխէք. մենք ալ ձեզի պէս էինք. *սիկարէթ* ըսածդ ա՛ւ է, Rothmans-ը: Ի՞նչ քարի պէս կեցեր էք: Մէկական հատ վառեցէ՛ք. հոտը կարօտցեր եմ»: Կաթողիկոսական հրահանգ էր. կը վառենք...: Մենք ալ ձեզ կարօտցած ենք, սիրելի՛ վեհափառ հայրապետ...: Ինք տարիներէ ի վեր չէր ծխեր արդէն, բայց երբեմն-երբեմն շրթունքին կը կպցնէր՝ հին օրերու կարօտով:

(17)

Դպրեվանքի ընծայարանի տարիներուս մեր Ընդհանուր եկեղեցիի պատմութեան դասախօսն էր Արտաւազդ արք. Թրթռեանը: Դասանիւթն էր Խաչակրութիւնները:

Սրբազան հայրը կը հրաւիրէ տիրացու մը դասը պատմելու, որ կը սկսի լակոնական ոճով պատմել՝ անշուշտ թուականներն ալ դասագիրքէն կարդալով. «Առաջին խաչակրութիւնը տեղի կ'ունենայ 1096–1099-ին. խաչակիրներ չեն յաջողիր գրաւել Երուսաղէմը: Երկրորդ խաչակրութիւնը տեղի կ'ունենայ 1147–1149-ին. խաչակիրներ չեն յաջողիր գրաւել Երուսաղէմը: Երրորդ խաչակրութիւնը տեղի կ'ունենայ 1189–1192-ին. խաչակիրներ չեն յաջողիր գրաւել Երուսաղէմը: Չորրորդ խաչակրութիւնը տեղի կ'ունենայ 1202–1204-ին. խաչակիրներ չեն յաջողիր գրաւել Երուսաղէմը»:

Միւս սարկաւագներս կը նայէինք հանդարտաբարոյ եւ համբերատար սրբազան հօր, որ աթոռին վրայ զսպանակի պէս կը շարժէր եւ ճակնդեղի նման կը կարմրէր, սակայն ձայն չէր հաներ: Մինչ այդ տիրացուն տիրականօրէն կը շարունակէ իր խաչակրական արշաւը. «Հինգերորդ խաչակրութիւնը տեղի կ'ունենայ 1217–1221-ին. խաչակիրներ չեն յաջողիր գրաւել Երուսաղէմը: Վեցերորդ խաչակրութիւնը տեղի կ'ունենայ 1228–1229-ին. խաչակիրներ չեն յաջողիր գրաւել Երուսաղէմը: Եօթներորդ խաչակրութիւնը տեղի կ'ունենայ 1248–1254-ին. խաչակիրներ չեն յաջողիր գրաւել Երուսաղէմը: Ութերորդ խաչակրութիւնը տեղի կ'ունենայ 1270-ին. խաչակիրներ վերջապէս կը յաջողին գրաւել Երուսաղէմը»: Եւ Արտաւագ սրբազան կը պոռթկայ. «Սմբուկ կը գրաւեն», ու դասարանէն դուրս կ'արշաւէ...:

(18)

Դպրեվանքի աւարտական տարիներուս, Գարեգին Բ. աթոռակից կաթողիկոս մեզի Հովուական աստուածաբանութիւն եւ Հայ եկեղեցիի պատմութիւն կը դասաւանդէր:

Անգամ մը մեր դասընկերներէն մին դասը պատրաստելուն մէջ կը թերանայ: Վեհափառ հայրապետը կը հարցնէ, թէ ինչո՞ւ դասը չէր պատրաստած, եւ ան միամտաբար կը պատասխանէ. «Ժամանակ չունեցայ»: Գարեգին կաթողիկոս պոռթկուն բարկութեամբ եւ բարձր ձայնով ժամանակը տնտեսելու մասին աւելի քան երեսուն վայրկեան վերլուծական մը կու տայ ու կ'եզրակացնէ. «Ես եթէ որպէս կաթողիկոս ձեզի դաս տալու ժամանակ կը գտնեմ, ի՞նչ ըսել է դաս սորվելու ժամանակ չունեցայ», եւ դասարանին դուռը խորտակող ուժգնութեամբ գոցելով դուրս կ'ելլէ...:

(19)

Դպրեվանքի տեսչական կազմին մաս կազմած օրերուս սովորութիւն ունէինք շաբաթ զուգադիպող սուրբերու անունները կրող դպրեվանեցիները կամ տունը նոյն անունով եղբայր ունեցողները (օրինակ՝ Յակոբ) նախաճաշէն յետոյ տուն դրկելու, որպէսզի իրենց հարազատներուն հետ

նշէին այդ անուանակոչութիւնը եւ կիրակի առաւօտ Անթիլիաս սուրբ պատարագին գային եւ դպրեվանեցիներուս վերամիանային:

Ս. Յակոբի տօնին «Յակոբ» անունը ունեցող աշակերտները շաբաթ օրուան նախաճաշէն յետոյ տուն պիտի երթային, երբ Հրակ անունով տղայ մը, որ նաեւ գիտէինք, թէ եղբայր ալ չունէր, նախաճաշի ընթացքին ձեռքը կը բարձրացնէ եւ խօսքը տեսուչ սրբազանին ուղղելով կը խնդրէ. «Սրբազան հայր, իմ քոյրիկիս անունը Յակոբ է. ես ալ կրնամ տուն երթալ»:

Բոլորս կը խնդանք: Տաթեւ արք. Սարգիսեան կը գնահատէ Հրակին սրամտութիւնը եւ բացառութիւն ընելով՝ կ'արտօնէ, որ ան ալ տուն երթայ Ս. Յակոբի տօնին առիթով...:

(20)

Դպրեվանքի մէջ բոլոր սաներն ալ զանազան պաշտօններ կ'ունենան: Եսայի անունով դպրեվանեցիի մը պաշտօնն է դասի դադարներուն ուսուցչական կազմին սուրճը ուսուցչարան բերել:

Օր մըն ալ Եսայի սուրճը կը բերէ, ուսուցիչներուն կը հրամցնէ եւ փոխանակ անմիջապէս ուսուցչարանէն դուրս ելլելու, կը յամենայ՝ մոխրամանները մաքրելով, գիրքերն ու տետրակները գրադարանին մէջ շարելով եւ այլ ոչ-կենսական աշխատանքներով: Մինչ այդ մենք կը սկսինք մեր սուրճը խմել: Օծակիցս, որ ֆրանսերէն կը դասաւանդէր եւ դպրեվանեցիներէն շատ չէր սիրուած, կը դառնայ եւ հեղինակաւոր շեշտով կ'ըսէ. «Եսայի՛, չարաճիճի՛ Եսայի, գիտեմ որ շաբարի տեղ դիտմամբ աղ դրած ես սուրճիս մէջ, սակայն որպէսզի քեզի դա՛ս ըլլայ՝ ես այս աղո՛վ սուրճը պիտի խմեմ»: Եսայի իր ուզածը առած ըլլալով՝ շուտով դուրս կ'ելլէ ուսուցչարանէն: Հայր սուրբը ցմրուր կը խմէ իր սուրճը: Մինչեւ հիմա չեմ հասկցած, թէ այսպիսով ի՞նչ դաս տուաւ Եսայիին...:

(21)

Ներսէս արք. Բախտիկեանին հետ Հայաշէնի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցիին մէջ սուրբ պսակի մը օրհնութիւնը կը կատարենք:

Սրբազան հայրը յաճախ յիշեցուցած էր, որ ինք չէր փափաքեր խառն ամուսնություններու խորհրդակատարութեան նախագահել: Կը պարզուի, որ հարսը արաբ է: Ներսէս սրբազան խրատականը խօսած ատեն կ'անդրադառնայ այս իրողութեան, եւ աւելի կը բորբոքի՝ որովհետեւ նաեւ հարսին ու հարսնքոյրին հագուստ-կապուստը առաջին պահէն իսկ եկեղեցիի մթնոլորտին յարմար չէր տեսած եւ այս մասին քիթին տակէն անհասկնալի նկատողութիւններ ըրած էր: Այս բոլորին վրայ բարդուած էին նաեւ լուսանկարիչին աւելորդ շարժումները: Սրբազան հօր համբերութեան բաժակը կը յորդի, երբ հարսը քիչ մը կ'ուշանայ խրատականի հարցումին փութով «Այո՛» պատասխանելու եւ փեսային ու խաչեղբայրին յիշեցումէն ետք՝ արաբերէն շեշտով կէսբերան «Այո՛» մը կ'ըսէ: Ներսէս սրբազան օրհնեալ բերանը կը բանայ եւ հայապահպանումի լուացողական մը կը սկսի ու պատշաճ հագուստ-կապուստով եկեղեցի մտնելու հրամայականով կ'եզրափակէ:

Խորհրդակատարութիւնը աւարտելէն ետք, երբ թաղական խորհուրդի գրասենեակը կ'երթանք, սրբազան հայրը խաղաղած էր եւ մինչեւ իսկ որոշ գուարթախոհութիւն մը զգեցած, երբ թաղական մը կ'ըսէ իրեն. «Սրբազա՛ն հայր, ձեր խօսած հայերէնէն հարսը բան մը չհասկցաւ»: Ներսէս սրբազան կը պատասխանէ. «Ճի՛շդ ես: Հե՛տս եկուր: Չկարծէ, թէ իր գեղեցկութիւնը գովեցի»: Թաղականը կ'առնէ եւ եկեղեցի կը մտնէ՝ այս անգամ իր ըսելիքները ուղղակի հարսին փոխանցելու համար, թաղականին թարգմանական օժանդակութեամբ...:

(22)

Ներսէս արք. Բախտիկեան ծանր հիւանդութիւն մը կ'անցընէ եւ քանի մը օր հիւանդանոց մնալէ ետք՝ Անթիլիասի մայրավանք կը վերադառնայ: Նկատի ունենալով, որ յատուկ հոգածութեան կարիք ունի, Գարեգին կաթողիկոս կը յայտնէ, թէ բուժքոյր մը պիտի բերուի, որպէսզի քսանչորս ժամ քովը մնայ: Սրբազան հայրը կը մերժէ: Այդ պարագային, վեհափառ հայրապետը միաբան մը կը նշանակէ եւ սրբազան հօր կ'ըսէ. «Հայր սուրբին սենեակէն ձեր սենեակին պատուհանը կ'երեւի. երբ դուք ձեր անկողինին քովի լոյսը վառեք՝ կը նշանակէ, թէ հայր սուրբին պէտք ունիք եւ ան վազելով ձեր քովը կը հասնի»: «Շատ լաւ, շնորհակալութիւն,

վեհափա՛ռ», կը պատասխանէ Ներսէս սրբազան: Գարեգին կաթողիկոս եւ իրեն ընկերացող հայր սուրբը կը մեկնին:

Ներսէս սրբազանին սենեակը եպիսկոպոսարանն է, իսկ հայր սուրբին սենեակը՝ վարդապետարանը: Երկուքին մէջտեղ ընդարձակ բակը կայ:

Հայր սուրբը մինչեւ կէս գիշեր իր պատուհանէն սրբազան հօր պատուհանը կը դիտէ եւ կ'ուրախանայ, որ անոր լոյսը բնաւ չի՛ վառիր. ուրեմն, սրբազան հայրը հանգիստ կը քնանայ: Երբ հայր սուրբը կէս քուն-կէս արթուն կը պայքարի քունին դէմ՝ յանկարծ կը տեսնէ, թէ սրբազան հօր լոյսը կը վառի: Ան մէկ շունչով եպիսկոպոսարան կը վազէ եւ Ներսէս սրբազանին սենեակը կը մտնէ՝ շնչասպառ եւ իրար անցած. «Հրամմեցէ՛ք սրբազան հայր. ինչպէ՞ս կրնամ օգտակար ըլլալ, ի՞նչ կրնամ ընել, ի՞նչ ունիք», գոչելով: Ներսէս սրբազան պաղ-պաղ կը պատասխանէ. «Բան մը չունիմ, հայրենակի՛ց. լաւ եմ: Պարզապէս փորձ մը ըրի: Ըսի՝ նայիմ պիտի գա՞ս: Ապրի՛ս, վստահելի ես եղեր: Կրնաս հիմա երթալ ...»:

(23)

Ս. Էջմիածինի Վազգէն Ա. ամենայն հայոց կաթողիկոսը կը վախճանի (1994) եւ նոր կաթողիկոսի նախընտրական խմորումները կը սկսին: Մեծի տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. կաթողիկոսի Ս. Էջմիածին փոխադրուելու հաւանականութիւնը օրէ օր աւելի կ'աճի:

Այդ օրերուն Անթիլիասի մէջ վանական անմեղ ժամանցի խաղ մը կը սկսի Ղեւոնդ արք. Զեպէեանին շուրջ, որ նշանաւոր էր իր միամտութեամբ: Խումբ մը միաբաններ կ'որոշեն սրբազան հայրը համոզել, թէ Ամենայն հայոց կաթողիկոսութեան յարմարագոյն թեկնածուն ինքն է՝ նկատի ունենալով իր տարիքը, փորձառութիւնը, բազում անգամ Հայաստան երթալը, երանաշնորհ Վազգէն վեհափառ հայրապետին հիւր ըլլալը, երկու հայրապետական Սուրբ աթոռներու մերձեցումի բաղձալի երազի իրականացումը եւ այլ դրական քայլեր: Ղեւոնդ սրբազան կամաց-կամաց կը համոզուի, թէ եթէ Գարեգին Բ. կաթողիկոս շանս ունի ամենայն հայոց կաթողիկոս ըլլալու, ինք առաւել՝ եւս այդ շանսը ունի՝ տղոց թուած առաւելութիւններուն լոյսին տակ, երբ մանաւանդ Ս. Էջմիածինէն պատուիրակներ (անշուշտ Անթիլիասի միաբաններէ նշանակուած «տե-

ղական պատուիրակներ» բոլորն ալ) եւս կը սկսին իրեն այցելել եւ նոյն յանկերգը կրկնել. առաւել, (դարձեալ սարքովի...) լիբանանեան հեռատեսիլի լուրերէն արաբերէնով (լեզու, որ Ղեւոնդ սրբազան չէր հասկնար եւ իրեն կը թարգմանուէր թէ...) յատուկ յայտագիր կը տրուէր, ուր կը խօսուէր, թէ Ս. Էջմիածինի կաթողիկոսական թափուր Սուրբ աթոռի յարմարագոյն թեկնածուն Ղեւոնդ արք. Չեպէյեանն էր, եւ եթէ այս ընտրութիւնը կայանար՝ մեծ պատիւ մը պիտի ըլլար Լիբանանի համար. Լիբանանի պետութիւնը արդէն իսկ կը շնորհաւորէր Ղեւոնդ սրբազանը այս ընտրութեան առիթով: Իսկ Ղեւոնդ սրբազան յարմար կը նկատէր մի քանի օր յետոյ նախագահական պալատ այցելել եւ իր շնորհակալութիւնը յայտնել Լիբանանի վսեմաշուք նախագահին...:

Օր մըն ալ երեք միաբան Ղեւոնդ սրբազանին սենեակը կու գան եւ խորհրդապահաբար կը յայտնեն. «Սրբազան՝ հայր, ամեն բան լաւ ընթացքի մէջ է: Բայց գիտէք, 1956–1958-ի օրերուն Բարեգործական, Ռամկավար եւ Հնչակեան ճակատին հետ դուք բարեկամական յարաբերութիւններ չունէիք: Պէտք է անոնց սիրտն ալ շահինք: Անոնցմէ մարդիկ ալ քուէ պիտի տան կաթողիկոսական ընտրութեան ատեն: Այս հինգշաբթի, ժամը 1-ին, ասոնցմէ չորս հոգի պիտի գան եւ ձեզ ճաշի պիտի հրաւիրեն. ոչ մի՛ ըսէք. գացէ՛ք անոնց հետ: Դուք դիւանագետ էք. գիտէ՛ք ինչ պիտի խօսիք»: Ղեւոնդ սրբազան «Եղաւ, ճանրմ»-ով համամտութիւնը կը յայտնէ եւ կը ճամբէ իր բանագնացները:

Միւս ճակատի դրածոյ չորս հիւրընկալ երկու *շիւքս* ինքնաշարժով կու գան եւ Ղեւոնդ սրբազանը Պէյրութի ծովեզերեայ ձուկի ճաշարաններէն մին կը տանին եւ ապա մայրավանք կը բերեն ու կը մեկնին: Միաբաններ անհամբեր կը խմբուին սրբազան հօր շուրջ եւ կը հարցնեն. «Ի՞նչ եղաւ, սրբազան՝ հայր»: «Ամեն բան շա՛տ լաւ անցաւ», կը պատմէ սրբազանը, «շա՛տ քաղաքավար մարդիկ էին: Ո՛չ իրենք նիւթը բացին, ո՛չ ես նիւթը բացի: Կերանք, խմեցինք, եկանք»: Ասկէ լաւ դիւանագիտութի՞ւն: Մարդը ամենայն հայոց կաթողիկոսութիւնը *հախ* ըրած, եկած է: Արդիւնքն ալ յետոյ յայտնի եղաւ արդէն...:

(24)

10 մարտ 2003-ին, պետական երեսփոխան եւ համբաւաւոր բժիշկ Անդրանիկ Մանուկեան՝ 93 տարեկանին իր մահկանացուն կնքած էր: Յաջորդ օր առաւօտեան, նախաճաշի ընթացքին, մայրավանքի սեղանատունը, հայերէն օրաթերթերը աչքէ կ'անցընէմ: Ղեւոնդ սրբազան կը հարցնէ. «Ի՞նչ նորութիւն կայ թերթերուն մէջ»: «Տոքթոր Անդրանիկ Մանուկեանը մեռեր է, սրբազան հայր», կը պատասխանէմ: «Վա յ, մե՞ դք եղեր է. լաւ բարեկամնիս էր *տոքթորը*», կ'ըսէ ան, եւ կ'աւելցնէ դասական հարցումը. «Քանի՞ տարեկան էր»: «93», կը պատասխանէմ: «Է՛հ, շատ ալ մեղք չէ եղեր...», կը փիլիսոփայէ:

(25)

Արամ Ա. կաթողիկոս տասնօրեայ ճամբորդութենէն Անթիլիաս կը վերադառնայ եւ հարց կու տայ վեհաբանի սպասաւորին. «Յարո՛ւթ, բացակայութեանս միջոցին բան մը եկա՞ւ»: Ան կը պատասխանէ. «Այո, վեհափա՛ռ տէր. Հալէպէն երկու տուփ *փախլաւա* եկաւ, սառնարանը դրի»: «Յարո՛ւթ», կ'ըսէ վեհափառ հայրապետը, «քեզի քանի անգամ ըսած եմ, որ եթէ *փախլաւա*, *շոքոլա* կամ ուրիշ անուշեղէն գայ միաբանական սեղանատուն դրկէ. հոս ուտող չկայ: Բե՛ր նայինք *փախլաւաները*»:

Յարութ կը բերէ նուէրի գոյնզգոյն թուղթերու մէջ փաթթուած *փախլաւաները*, եւ Արամ կաթողիկոս կը բանայ զանոնք: Ի՛նչ տեսնէ... պաղ-պաղ հայերէն գիրքեր կ'ելլեն տուփերուն մէջէն: Յարութն ալ կը զարմանայ: Վեհափառը կը սկսի խնդալ: «Յարո՛ւթ», կը բացագանչէ ան, «աս ի՞նչ տեսակ *փախլաւա* է»: Յարութ անայլայլ կը պատասխանէ. «Ես ի՞նչ գիտնամ. Հալէպէն գիրք կու գա՛յ մը. իմ գիտցածս, Հալէպէն *փախլաւա* կու գայ...»:

Նոյնիսկ պատերազմի ամենէն դժնդակ օրերուն Հալէպի մէջ գիրք լոյս տեսաւ եւ աշխարհի ամեն կողմ ցրուեցաւ...:

(26)

2004-ի ապրիլն է:

Կիպրոսէն Անթիլիաս կը ժամանեն Կարպիս եւ Անահիտ Էսքիճեաններ՝ մահամերձ Ձարեհ արք. Ազնաւորեանին տեսութեան: Հազիւ մայրավանք մտած, անոնք բակի նստարանին վրայ կը տեսնեն Տիրայր եպս. Փանոսեանը, որ *թաքսի* կը սպասէ Պիքֆայայի վանքը բարձրանալու համար: Մի քանի քաղաքավարական նախադասութիւններ կը փոխանակեն եւ սրբազան հօր *թաքսին* կը հասնի:

Քիչ ետք, Էսքիճեաններուն լուր կը տրուի, թէ Արամ Ա. կաթողիկոս զիրենք անմիջապէս պիտի ընդունի Պիքֆայայի վեհարանը: Անոնք ալ փութով *թաքսի* մը կ'առնեն եւ Պիքֆայա կը հասնին: Եւ ի՞նչ տեսնեն...: Տիրայր սրբազանը առօք-փառօք ծառին տակը բազմած է: Կը մօտենան եւ զարմացած՝ «Աստուած օգնական, դուք հիմա վարը չէի՞ք», կը հարցնեն: «Այո՛», կը պատասխանէ սրբազան հայրը, եւ կ'աւելցնէ. «Երկու հատ Տիրայր սրբազան կայ. անիկա միւսն է. վարը մնաց»:

Պիքֆայայի սենեակին բանալին մոռցած ըլլալով, քիչ ետք Տիրայր սրբազան դարձեալ *թաքսի* կ'առնէ, Անթիլիաս կ'իջնէ, բանալին կ'առնէ, բակի նոյն նստարանին վրայ կը նստի եւ *թաքսի* կը սպասէ՝ որպէսզի նորէն Պիքֆայա բարձրանայ: Մինչ այդ Էսքիճեաններ վեհափառ հայրապետին հետ իրենց տեսակցութիւնը կ'աւարտեն եւ Ձարեհ սրբազանին քով կը վերադառնան: Դարձեալ՝ հազիւ Անթիլիաս մտած, բակի նոյն նստարանին վրայ Տիրայր սրբազանը կը տեսնեն: Այս անգամ այլեւս իրենց աչքերուն չեն հաւատար: Կամաց-կամաց կը մօտենան եւ Կարպիսը կը պոռայ. «Պապա՛մ, սրբազա՛ն հայր, չի՞ կրնար ըլլալ»: Տիրայր սրբազանը կը սկսի քահ-քահ խնդալով ըսել. «Ինչո՞ւ պիտի չըլլայ եղեր: Ըսի չէ՞. երկու հատ Տիրայր սրբազան կայ. մէկը վերը, մէկը վարը. ասի ալ վարի Տիրայր սրբազանն է. հիմա հաւատացի՞ք...»:

(27)

Ձմեռ է: Տեղատարափ անձրեւ կու գայ: Վեհարանն ենք եւ միաբանական թափօրով վեհափառ հայրապետը կիրակնօրեայ սուրբ պատարագին պիտի տանինք: Արտակ արք. Մանուկեան երկինք կը նայի եւ կ'ըսէ.

«Երկինքը էսօր խլինքոտ է».: Գերզգայուն Սահակ արք. Այվազեան կը հակադարձէ. «Ա՛ն քեզի բանաստեղծ...»:

Սուրբ պատարագէն ետք, դարձեալ թափօրով վեհարան կը վերադառնանք եւ Սահակ սրբազան իր երաժիշտի գնահատականը կու տայ. «Այսօրուան պատարագի երգեցողութիւնը քառաձայն չէր, բազմաձայն էր...»:

Յաջորդ օր մայրավանքէն դուրս պիտի ելլեմ, Արտակ սրբազան ինքնաշարժս կը կանգնցնէ. «Ո՞ր ես գնում»: «Բժիշկի մօտ», կը պատասխանեմ: «Ես էլ գամ» կըսէ եւ կը նստի: Կարմրած եւ ուռած ձեռքերն ու ոտքերը ցոյց կու տայ եւ կըսէ. «Մի հատ ինձ էլ թող քննի քո *տոքթորը*»:

Բժիշկին կը ծանօթացնեմ սրբազան հայրը, եւ *տոքթորը* «Ի՞նչ ունիք սրբազան» կը հարցնէ: «Ի՞նչ չունիք պիտի պիտի հարցնէք» կըսէ, կը խնդայ եւ կը սկսի թուել իր բազմազան հիւանդութիւնները: Բժիշկը *մաշալլա* մը կը նետէ եւ քահ-քահով կը քննէ սրբազանը: «Ե՛րբ Թեհրան պիտի վերադառնաք» կը հարցնէ *տոքթորը*: «Երկու օրէն» կը պատասխանէ Արտակ սրբազան: «Սրբազա՛ն հայր, երկու օրուան մէջ հոս բան մը չենք կրնար ընել. նախ արիւնի քննութիւն պէտք ունիք, յետոյ՝ ուրիշ քննութիւններ ալ: Երբ Թեհրան հասնիք ձեր բժիշկը ձեզ անմիջապէս հիւանդանոց թող մտցնէ եւ բոլոր քննութիւնները ըրէք: Մինչ այդ գոնէ հաց մի՛ ուտէք: Անցած ըլլայ»: Բժիշկին շնորհակալութիւն կը յայտնենք եւ դուրս կ'ելլենք:

Հազիւ ճամբայ ելած ենք մայրավանք վերադառնալու համար, երբ Արտակ սրբազան կըսէ. «Մի տեղից *մենեիշ* առ ալ ուտենք»: «Սրբազա՛ն, ի՞նչ ըսաւ *տոքթորը*», կըսեմ: «Տոքթորը հաց մի՛ ուտեր ըսաւ, *մենեիշ* մի՛ ուտեր չըսաւ»: Անշուշտ չեմ առներ. սրբազանն ալ ձայն չի՛ հաներ, եւ մայրավանք կը հասնինք:

Արտակ սրբազանին բախտէն յաջորդ առտու նախաճաշը *մենեիշ* է: Ան մէկ հատ կ'ուտէ եւ կ'ուզէ երկրորդ մըն ալ ուտել, Արտաւազդ սրբազանը արգելք կըլլայ: «Մեղք ես, օրհնա՛ծ, վիճակդ նայէ», ըսելով:

Երեկոյեան մայրավանքի դարպասին մօտն ենք եւ *քէխկէ* ծախողը կու գայ, Արտակ սրբազան *քէխկէ* մը կ'առնէ, *զէյթէր* ալ դնել կու տայ եւ կը սկսի համով-համով ուտել (Զմոռնաք՝ «Տոքթորը հաց մի՛ ուտեր ըսաւ, *քէխկէ* մի՛ ուտեր չըսաւ...»): *Քէխկէ* ծախողը դրամը կը սպասէ. Արտակ սրբազան կը դառնայ եւ Գեղամ սրբազանին կըսէ. «Ի՞նչ ես ինձ նայում,

Լիբանանի առաջնորդը դու ես, փողը դու պիտի տաս, ինձ ասացին դու ես հիւրասիրում...»:

(28)

Ամառ է եւ բարեկամի մը գիւղի տունը հրաւիրուած ենք: Մեզ կը զգուշացնեն, թէ ջուրի տագնապ ունին: Է՛հ, Լիբանան է: Ամեն բանի տագնապի վարժուած ենք. ջուրի տագնապ, ելեքտրականութեան տագնապ, գործի տագնապ եւ այլն:

Կորիւն արք. Պապեանն ալ մեզի հետ է եւ իր զուարթախօսութեամբ սեղանին զարդն է: Սրբազան հօր պատմութիւնները բազմաբոյր ծաղկաստանի մը նման Նոր Սիսէն կը սկսին, կ'անցնին ճեմարան, դպրեվանք, Օքսֆորտ, Նոր Զուղա եւ աշխարհի այլ վայրեր՝ ուր սրբազանը գտնուած է եւ կեանքի փորձառութիւններ ապրած:

Օրուան գլխաւոր նիւթը ամուսնութիւնն ու ընտանիք կազմելն է: Կորիւն սրբազան զանազան զոյգերու մասին զուարճալի դրուագներ կը պատմէ ու կը պատմէ եւ վերջապէս բոլորիս ծանօթ անձի մը մասին կ'եզրակացնէ. «Գիտէ՞ք, մեր ընկերը շատ լաւ մարդ էր. միայն մէկ *բրոպլէմ* ունէր. նա կարող էր ամուսնանալ, բայց չէր կարող կին պահել...»:

Յայտնեմ, որ սրբազան հայրը իր պատմութիւններուն կծիկը սկսած էր քակել ընթրիքի սեղանին վրայ եւ կ'աւարտէ իր ձեռքերը լուալու պահուն, որ աւելի քան քսան վայրկեան կը տեւէ եւ մեր ձեռքերը լուալու ջուր չի՛ ձգեր....:

(29)

2001-ին, Քրիստոնէութեան Հայաստանի մէջ պետական կրօնք հռչակումի 1700-ամեակին առթիւ յանձնախումբեր կազմելու ժողովներ կը գումարենք Անթիլիասի մէջ, որուն հրաւիրուած է նաեւ Վարդան արք. Տէմիրճեան:

«Հիմա մեր գրասենեակի քարտուղարուին ձեր անուն-մականուններուն քով ձեր բջիջային հեռախօսի թիւերը պիտի արձանագրէ, որպէսզի մեր յանձնախումբերու անդամ-անդամուհիներուն ամբողջական

ցուցակը ունենանք եւ երբ կարիքը զգացուի՝ կարենանք իրարու հետ կապ հաստատել», կը յայտարարեմ՝ որպէս գրասենեակի վարիչ-քարտուղարը:

Քարտուղարուհին կը սկսի իւրաքանչիւրին անուն-մականունը կարդալ եւ բջիջային հեռախօսի թիւը գրել: Երբ կարգը Վարդան սրբազանին կու գայ, ան կը նշէ «03-410001», կաթողիկոսարանի 04-410001 պարզ թիւը՝ անգոյ «03»-ով փոխարինելով, որովհետեւ բջիջային հեռախօս չունէր եւ չէր ուզեր այդ մէկը բացայայտել...:

(30)

Արամ Ա. կաթողիկոս մայրավանքին մէջ կը հիւրընկալէ Ժընեւէն ժամանած Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի եռանդամ պատւիրակուծին մը, ընդհանուր քարտուղար դոկտոր Սէմ Գոպիայի գլխաւորութեամբ:

Կիրակի կէսօրին զիրենք լիբանանեան ճաշարան մը կը հրաւիրեմ եւ կը բացատրեմ, թէ *սալատներով* ու *մեզէներով* պիտի սկսինք, խորոված պիտի առնենք եւ պտուղներով ու անուշեղէններով եւ անխուսափելի արաբական,–ոչ-թրքական–, սուրճով աւարտենք մեր «համեստ» ճաշը, որ կրնայ գոնէ երկու ժամ տեւել: Առաւել, պարտք կը զգամ բացատրել, թէ *մեզէներուն* մէջ հում մսեղէններ ալ կան. օրինակ՝ *չի քէօֆթէ*, որ իրենց *սթէյք թարթարին* մօտ է: «Կ'ուտենք», կ'ըսեն: Հում *ճիկերն* ալ կը յաջողիմ ծախել: Թէեւ քիչ մը վերապահութեամբ, սակայն «կը փորձենք», կ'ըսեն: Կարգը կու գայ ոչխարի հաւկիթին...: «Այդ մէկը գալ անգամուան թող մնայ», կը պատասխանեն: Կարծեմ յանցանքը իմս էր, որովհետեւ կը մոռնամ նշելու, թէ այս մէկը եփուած է, եւ ես ալ կը զրկուիմ գայն համտեսելու եզակի առիթէն...:

(31)

Ամառ է:

Տաճատ արք. Ուրֆալեան Պիքֆայայի վանքի ամառանոցէն Ս. Նշանի առաջնորդարան պիտի երթայ: Շարժավարը ինչ-ինչ պատճառներով նեղուած է առաջնորդ սրբազանէն եւ որոշած ինքնաշարժին դուռը

չբանալ՝ առ ի յարգանս: Սրբազան հայրը ինք կը բանայ ետեւի դուռը եւ հազիւ պիտի նստի՝ Խորէն Ա. կաթողիկոսի գաւազանակիրը կը մօտենայ եւ կը հաղորդէ, թէ վեհափառ հայրապետը կ'ուզէ զինք տեսնել: Տաճատ սրբազան ինքնաշարժին դուռը կը փակէ եւ վեհափառին քով կ'երթայ: Շարժավարը դուռին փակումին ձայնը լսելով կը խորհի, թէ սրբազան հայրը նստեցաւ՝ ուղղակի Ս. Նշան կը քշէ: Առաջնորդարան հասնելէն ետք կը սպասէ, որ սրբազան հայրը ինքնաշարժին դուռը բանայ եւ վար իջնէ: Ձայն չկայ: Քիչ մըն ալ կը սպասէ: Ետեւ կը դառնայ եւ մէկը չի՝ տեսներ: Կը սարսափի: Ո՞ւր է սրբազանը. ե՞րբ իջաւ, ո՞ւր գնաց, ո՞ւր կորսուեցաւ: Առաջնորդարան կը վազէ: Հոս կը հարցնէ, հոն կը հարցնէ: Ո՛չ ոք տեսած է սրբազան հայրը: Ամեն մարդ իրեն կը հարցնէ սրբազան հօր մասին: Ի վերջոյ ի՛նք պետք է բերած ըլլար առաջնորդ սրբազանը: Ա՛ն քեզի առեղծուած:

Մինչ այդ Տաճատ սրբազան Պիքֆայայէն առաջնորդարանի դիւանապետին կը հեռաձայնէ եւ հարց կու տայ, թէ ո՞ւր է շարժավարը, ո՞ւր է ինքնաշարժը: Վերջապէս առեղծուածը կը լուծուի: Շարժավարը անմիջապէս ետ Պիքֆայա կ'ուղարկուի եւ առաջնորդ սրբազանը, թէեւ ուշացումով, սակայն առօր-փառօր առաջնորդարան կը ժամանէ, եւ, անշուշտ, շարժավարին առաջնորդէն նեղուած ըլլալը սուղի կը նստի իր վրան...:

(32)

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանի եւ Քանատայի թեմի առաջնորդ Գարեգին արք. Սարգիսեան այնքան կը գովէ իր ծննդավայր Քէսապը, որ միամիտ ամերիկածին հայեր իրենց հսկայ երկիրին չափ մեծ տեղ մը կը պատկերացնեն զայն եւ օր մըն ալ հարց կու տան, թէ քանի՞ օդանաւակայան կայ Քէսապի մէջ: Սրբազան հայրը դիւանագիտական պատասխան մը կու տայ այս հարցումին եւ կ'աւելցնէ, թէ մինչեւ հիմա մոռցած է ըսելու, թէ Քէսապը նաեւ երկու օդանաւային ընկերութիւններ ունի. մին՝ միջազգային թռիչքներու համար, որ «Քէսապ Էրլայնզ» կը կոչուի եւ միւսը՝ տեղական թռիչքներու համար, որ «Քէսապ Էրուէյզ» կը կոչուի...:

(33)

Յունաստանի թեմի առաջնորդ Սահակ արք. Այվազեան Խորեն Ա. կաթողիկոսի Ամերիկայի Միացեալ Նահանգներ շնորհած հովուապետական այցելութեան շքախումբին մաս կազմած օրերուն, Նիւ Ճըրզիի մէջ ամերիկահայոյ մը ինքնաշարժը վարած ատեն արկած մը կ'ունենայ: Իրեն եւ ինքնաշարժին տիրոջ, որ սրբազան հօր քովը նստած էր, բան չի՝ պատահիր, սակայն ինքնաշարժը գրեթէ անգործածելի կը դառնայ: Սահակ սրբազան սարսափած կը պատուիրէ, որ վեհափառ հայրապետին բան չըսեն: Մինչ այդ ոստիկաններ կու գան եւ ստուգում կը կատարեն, եւ սրբազան հայրն ու իրեն ընկերացողները կ'ուշանան ազգայինի մը տունը հասնելէ, ուր Խորեն կաթողիկոս ճաշի հրաւիրուած էր: Երբ կը հասնին, վեհափառը հարց կու տայ. «Մարդ Աստուծոյ, ո՞ր մնացիք. ժամ մըն է ձեզ կը սպասենք»: Մեր միամիտ ամերիկահայերէն մէկն ալ անմիջապէս կը բացայայտէ եղելութիւնը: Պատրաստաբան վեհափառը կը դառնայ եւ ինքնաշարժի տիրոջ կ'ըսէ. «Հայ եկեղեցին դարաւոր օրէնք մը ունի: Եթէ սրբազան մը *գար* (ինքնաշարժ) մը *էգսիտընթ* ընէ (արկածի ենթարկէ), *գարին* տէրը սրբազանին *գար* մը նուէր կ'ընէ»: Արկածեալ ինքնաշարժին տէրը, ուրիշ միամիտ մը, Յունաստանի առաջնորդարանին *մէրսէտէս* մը կը նուիրէ: Երբ Սահակ սրբազան այս դէպքը յիշէր, կը խնդար եւ կ'ըսէր. «Մենք ալ Խորեն վեհափառին շնորհիւ ամերիկահայերէն այս *գարը գար* (շահ) ըրինք...»:

(34)

Նիւ Ճըրզիի հոգեւոր հովիւ եղած տարիներուս մեզի հայրենակից չորք մարգպանցի թրքախօս հայրիկ մը ունէինք, որ իր կեանքի մայրամուտին բաւական առողջապահական բարդութիւններ դիմագրաւեց, սակայն բնաւ իր գուարթախօսութիւնը չկորսնցուց:

Զինք քիչ մը տունէն հանելու համար բժիշկ ընկերոջ մը հետ կը խօսիմ եւ անոր մօտ կը տանիմ: Նոր սովորութիւն մը կայ նահանգին մէջ՝ դասական ճերմակ տարազը չհագնելու ուրբաթ օրերը եւ աւելի տնական հագուստ-կապուստով ընդունելու հիւանդները: Այնթապցի բժիշկն ալ իր հերթին ուրախ-գուարթ թրքերէն խօսակցութեամբ կը քննէ հայրիկը եւ

տուն կը վերադառնանք: Տնեցիները կը հարցնեն. «Հայրի՛կ, ինչպե՞ս գտար *տոքթորը*, հաւնեցա՞ր մը»: «Հայր սուրբերնիս ալ *սաղ* մնայ, *տոքթորն* ալ», կը պատասխանէ հայրիկը, «բայց այդ երիտասարդին *տոքթոր* ըլլալը շատ ալ խելքիս չի՛ պառկեցաւ. իմ գիտցածովս *տոքթոր* ըսածդ ճերմակ պէտք է հագնի...»:

(35)

Նիւ Ճըրզիի հովուատունին դիմաց հայ ընտանիք մը կ'ապրի, որ ազգականութիւն ունի Արսէն արք. Պերպերեանին հետ:

Սրբազան հայրը այցելութեան եկած է իր հարազատներուն քով եւ յաճախ կ'այցելեմ իրեն: Երեկոյ մը դարձեալ միասին ենք եւ կ'ըսեմ, թէ հայ դերձակի մը քով պիտի երթամ՝ եթէ կը փափաքի ինծի ընկերանալ: Կուգայ: Հազիւ ինքնաշարժէն դերձակին խանութը կը մտնենք՝ կ'անդրադառնամ, որ սրբազանին երեսին գոյնը ճեփ-ճերմակ է եւ ֆիզիքապէս շատ տկար կը զգայ: Ան ուղղակի կը փլի աթոռին վրայ: Անմիջապէս կը հեռախօսեմ իր հարազատներուն եւ կը բացատրեմ, թէ լուրջ կացութեան մէջ կը գտնուինք: Ապա, շտապ օգնութեան ինքնաշարժին կը հեռախօսեմ եւ սրբազանը հիւանդանոց կը հասցնենք: Կը պարզուի, որ ան սիրտի կաթւած անցուցած է եւ շուտով գործողութեան կը տանին: Երեք օր ետք, երբ Արսէն սրբազանին այցելութեան կ'երթամ, թէւ բժիշկները արտօնած են միայն մի քանի բառ արտասանել, ան իրեն յատուկ զուարթախօսութեամբ կը թոթովէ. «Ի՞նչ է, դատարկ ձեռքով եկեր ես: Չե՞ս ամաչում: Ո՞ր է խորովածը...»:

(36)

Կիրակի օր Տիրայր Ծ. վրդ. Փանոսեան պատարագիչ է Անթիլիասի Մայր տաճարին մէջ: Գարեգին Բ. կաթողիկոս վեհարանի պատշգամբ ճեմած պահուն կը տեսնէ, որ Մայր տաճարին մայր դուռին երկու մուտքերն ալ փակ են: Չի՛ կրնար ըլլալ. հաւատացեալները ինչպե՞ս ներս պիտի մտնեն: Գաւազանակիր հայր սուրբը տաճար կը դրկէ եւ դուռը բանալ կու տայ: Հայր սուրբը վեհափառ հայրապետը տեղեակ կը պահէ, թէ

հայր Տիրայր փակել տուած է դուռը: Քիչ ետք, Գարեգին կաթողիկոսին լուր կը բերեն, թէ հայր Տիրայր դարձեալ փակել տուած է դուռը: Գարեգին վեհափառ դարձեալ դուռը բանալ կը հրահանգէ:

Վեհափառ հայրապետը միաբանական թափօրով տաճար կ'իջնէ սուրբ պատարագին հանդիսապետելու համար: Դուռը փակ է. անմիջապէս կը բանան: Երբ Հայր Տիրայր «Խաղաղութիւն ամենեցուն»-ին ժողովուրդին կը դառնայ՝ կը տեսնէ, որ դուռը կոնակին վրայ բաց է. սարկաւազը կը դրկէ եւ դուռը փակել կու տայ: Գարեգին կաթողիկոս «Ողջոյն»-ին ժողովուրդին կը դառնայ եւ կը տեսնէ, որ դուռը լրիւ փակ է: Ան ճարահատ խորան կ'ելլէ եւ հայր Տիրայրէն կ'իմանայ, որ եթէ դուռը բաց պիտի մնայ հայր սուրբը պիտի չկարենայ սուրբ պատարագը շարունակել, որովհետեւ դուռէն հով կու գայ մինչեւ խորան եւ իր կոնակը սոսկալիօրէն կը ցաւցնէ: Վեհափառ հայրապետը կը նախընտրէ փոխզիջիլ հայր Տիրայրի տարօրինակ առաջարկին՝ դուռին մէկ աչքը բաց, միւս աչքը գոց պահել: Այսպէս սուրբ պատարագը իր լրումին կը հասնի....:

(37)

Արամ Ա. կաթողիկոս պաշտօնական այցելութեամբ Վատիկան կը գտնուի: Վերջին իրիկունն է եւ կաթողիկոսութեան կողմէ պաշտօնական ճաշկերոյթ կու տանք մեր հիւրընկալներուն եւ վեհափառ հայրապետի շքախումբի անդամներուն: Ճաշկերոյթի աւարտին Արամ կաթողիկոս իր հայրապետական պատգամը կ'ուղղէ անգլերէն լեզուով, որովհետեւ կաթողիկէ կարտինալներ եւ եպիսկոպոսներ, օտար դեսպաններ ու աշխարհի զանազան երկիրներէն ժամանած հայորդիներ իրեն սեղանակից են: Իմ սեղանիս վրայ գտնուող Միջին Արեւելքէն հայ ամուլ մը այնքա՛ն կը տպաւորուի վեհափառ հայրապետի խօսքերէն, որ իրար գերազանցող արտայայտութիւններ կ'ունենայ: Ես ալ, իմ հերթիս, այս տէր եւ տիկնոջ խանդավառութենէն քաջալերուած, պահը յարմար կը նկատեմ կաթողիկոսութեան ծրագիրներուն համար նուիրատւութիւն մը ակնկալելու եւ կ'ըսեմ, թէ երբ վեհափառը Անթիլիասի առաքելութեան մասին կը խօսի, ա՛յս բոլորը մարդով եւ դրամով կ'իրագործուին, եւ կ'աւելցնեմ. «Ի՛նչ լաւ կ'ըլլայ, որ հիմա, ճաշկերոյթէն յետոյ միասին վեհափառ հօր մօտ երթանք եւ ձեր սիրտին խօսող ծրագիրի մը համար բարերարութիւն ընէք. աղուոր

անակնկալ մը կ'ըլլայ»: Մարդը սառնօրէն կը պատասխանէ, մինչ կինն ալ գլուխը շարժելով հաւանութեան նշան կու տայ. «Շա՛տ լաւ գաղափար է, բայց վեհափառը մեզի չըսեր կոր. Ամերիկայէն եկողներուն կ'ըսէ կոր. եթէ մեզի ըսելու ըլլար, հայերէն կը խօսէր»: Ի՛նչ միամիտ եմ եղեր....:

(38)

Ս. գատիկին Տիրայր եպս. Փանոսեան կը պատարագէ Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցին եւ երեք քարոզ կու տայ: Ան առաջին քարոզը կու տայ «Հայր մեր»-էն առաջ, քարոզի սովորական տեղը: Երկրորդը՝ սուրբ հաղորդութիւնը բաշխելէն յետոյ: Երրորդը՝ վերջին անտարանը կարդալէն առաջ:

Ինչո՞ւ:

Ինքն է պատմողը եւ լուսաբանողը. «Գիտես. Հալէպի ժողովուրդին հաւատքը նկարագրելու պէտք չունիմ: Եկեղեցին բերնէ-բերան լեցուն է՝ կանուխ ժամերէն: Աղուոր քարոզ մը խօսեցայ: Մինչ այդ ուշադրութիւն ըրի, որ դասին մէջ տէր եւ տիկին այսինչ-այսինչեաններուն համար դրուած պաշտօնական աթոռներուն վրայ մէկը չէ նստած դեռ: Միտքէս ըսի՝ “Ես ձեր դասը կու տամ”: Սուրբ հաղորդութիւնը բաշխեցինք վերջացաւ: Սարկաւագին հետ դպրապետին լուր դրկեցի, որ դպրաց դասը “Լցաք”-ը չերգէ եւ երկրորդ քարոզ մը խօսեցայ: Վերջին անտարանը կարդալէս առաջ ալ երրորդ քարոզս խօսեցայ: Է՛հ, որպէսզի ժողովուրդը չկարծէ, որ խելքս կորսնցուցեր եմ, երրորդ քարոզէս առաջ ըսի. “Միրելի՛ հաւատացեալներ, հիմա պիտի հարցնեք, որ սրբազանը ինչո՞ւ երեք անգամ քարոզ կը խօսի կոր. արդեօք մոռցաւ, որ երկու անգամ արդէն քարոզ խօսած էր: Ո՛չ. չեմ մոռցած: Ըսեմ: Առաջին քարոզը խօսեցայ մեր հաւատացեալ ժողովուրդին համար: *Ղուրպա՛ն* ըլլամ ձեր լոյս հաւատքին: Ձեզի, որ շատ կանուխ ժամերէն եկաք եւ այս եկեղեցիին ներսն ու դուրսը լեցուցիք եւ ժամերով աղօթեցիք: Աստուած ընդունեց ձեր աղօթքը: Երկրորդ քարոզը խօսեցայ մեր այն աղաներուն ու խանրմաներուն համար, որոնք սանկ վերջին քսան վայրկեանէն կէս ժամը եկեղեցի մտան եւ այս առջելի աթոռներուն վրայ նստան: Իսկ հիմա ալ երրորդ քարոզը պիտի խօսիմ այս առջելի աթոռներէն երկուքին վրայ վերջապէս նստած այն զոյգին համար, որ հիմա եկեղեցի հասաւ”, եւ երրորդ քարոզը տուի...»:

(39)

Դպրեվանքի ընծայարանի աւարտական տարիս Արամ արք. Քէշիշեան մեզի Էքիւմենիզմ (Միջեկեղեցական յարաբերութիւններ) կը դասաւանդէր: Դասանիւթը Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կազմութիւնն ու հոլովոյթն է եւ սրբազան հայրը անգլերէն յօդուած մը տուած է, որ պէտք է կարդանք, ամփոփենք եւ յաջորդ դասին պատմենք:

Իմ կարգս է եւ նիւթը կը ներկայացնեմ: Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի վարչական կառոյցին ակնարկելով կը թուեմ անդամակցութիւնը, համաժողովը, կեդրոնական կոմիտէն, եւ պիտի շարունակեմ, սրբազան հայրը կ'ընդմիջէ. «Տիրացո՛ւ, կեդրոնական կոմիտէն ուրիշ տեղ է. Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը կեդրոնական կոմիտէ (Central Committee) չունի, կեդրոնական վարչութիւն ունի...»:

(40)

31 դեկտեմբերի գիշերը, նոր տարուան գեղարուեստական յայտագիրի ընթացքին, դպրեվանքի մէջ նաեւ պիտի ներկայացնենք Յակոբ Պարոնեանի «Շողոքորթը» թատերախաղը, եւ *Ֆէսի* մը պէտք ունինք: Դպրեվանքի մը կը յուշէ, թէ Պուրճ Համուտի իրենց տունին քովի կօշիկ ծախող խանութը հայ հայրիկ մը կայ, որ *Ֆէս* կը գործածէ եւ թերեւս կարելի է մէկ գիշերուան համար փոխ առնել:

Դպրեվանքի հսկիչ հայր սուրբին հրամանով երկու ընկեր այս խանութը կ'երթանք եւ կը ստուգենք, թէ հայրիկը հոն է եւ *Ֆէսն* ալ հայրիկին գլխուն վրան է: Ներս կը մտնենք ու կը մօտենանք միջին տարիքի մարդու մը եւ կ'իմանանք, որ հայրիկին տղան է: Անոր կը ներկայացնենք մեր խնդրանքը. ան բարեացակամօրէն կ'ըսէ մեզի. «Շա՛ տ սիրով: Լաւ որ հայրիկս բանէ մը լուր չունի: Երբ հարցը իր *Ֆէսին* վերաբերի՝ շատ զգայուն կը դառնայ: Այսպէս կրնանք ընել: Հայրիկիս համար նոր տարի-հին տարի տարբերութիւն չ'ըներ. ամեն իրիկուն ժամը 10-ին ժամացոյցի պէս ան անկողին կը մտնէ եւ առտուն ժամը 5-ին անկողինէն կ'ելլէ: Իրիկունը 10-ը 10-ը անց մեր տունը կու գաք եւ *Ֆէսը* կ'առնէք, առտուն ալ 5-ին 10-ը մնացած *Ֆէսը* կը բերէք», եւ մեզի իրենց տունին տեղը կը բացատրէ:

Այդպէս ալ ըրինք: Հայրիկը լուր ալ չունեցաւ, որ իր *Ֆէսը* Պուրճ Համուտէն Անթիլիաս ճամբորդեց եւ պարոն Շողոքորթին գլուխը զարդարեց...:

(41)

Մուշեղ աւ. քին. Տէր Գալուստեան շաբաթ գիշեր ուշ ժամուն ծխականի մը տունէն իր տունը պէտք է հասնի եւ քիչ մը արագ կը վարէ ինքնաշարժը: Ոստիկանը կը կեցնէ զինք: Տէր հայրը անմիջապէս կը պատճառաբանէ. «Իրաւունք ունիք, պարոն ոստիկան. գիտեմ, թէ արագ կը քշէի, սակայն հիւանդանոց պէտք է հասնիմ, որովհետեւ ծանր վիճակի մէջ զիս սպասող հիւանդ ունիմ»: Ոստիկանը կը ստուգէ, թէ խօսակիցը քահանայ է եւ իսկապէս ալ ուշ ժամուն քահանայ մը միայն կրնայ շտապ օգնութեան մը համար կանչուած ըլլալ: «Շատ լաւ», կը պատասխանէ, «իմ ետեւէս եկէք, որպէսզի աւելի չուշանաք»:

Տէր հայրն է պատմողը. «Քանի մը թաղ անդին գտնուող հիւանդանոցին անունը տուի: *Ալլա ՚ս*, մարդը *օթոն* կոխեց, ես ալ ետեւէն: Տուր որ կու տաս: Հասանք: Մարդը ձեռքով նշան ըրաւ, յաջողութիւն մաղթեց: Ես ալ ձեռքով *թէնք եռու* ըրի: Գնաց: Շարեցի: Վեր ելայ: Առաջին յարկը *սիկարէթ* ծխելու սրահ կար: Այդ օրերուն արտօնուած էր դեռ ներսը ծխելը: *Սիկարէթ* մը վառեցի, քառորդ ժամ մը մնացի եւ յետոյ տուն քշեցի: Ա՛ն քեզի ծանր հիւանդի այցելութիւն. չէ թէ *թիքէթը* կերած էինք...»:

(42)

Մուշեղ աւ. քին. Տէր Գալուստեանն է պատմողը. «1975-ին, Գաբեգին արք. Սարգիսեանի առաջնորդութեան օրերուն, հոգեւորականներու համագումար ունինք Ֆիլատելֆիա: Ըստ ժամանակացոյցին, կէսօրուան ժամը 12.30-ին պէտք է ճաշէինք, բայց ժամը 12.45 է եւ առաջնորդ սրբազանը դեռ կը խօսի կոր: Տիկնանց միութիւնը եկեղեցիի սրահին մէջ զանազան ճաշեր պատրաստած է մեզի համար եւ մտահոգ է, թէ երբ սրահ պիտի մտնենք: Ծուխի հոգեւոր հովիւին երեցկիւնը ժողովասրահ կու գայ եւ քահանայ հօր ականջին բաներ մը կը փսփսայ: Տէր հայրը «Լաւ, լաւ. դուն գնա՛. հիմա կու գանք», ըսելով կը ճամբէ զինք: Սրբազան հայրը դեռ կը

շարունակէ խօսիլ: Քառորդ ժամ յետոյ, երեցկինը՝ եօթը-ութը կիներու բանակով ժողովասրահ կը մտնէ եւ յանկարծ բարձրաձայն խօսքը սրբազանին ուղղելով կ'ըսէ. «Սրբագա՛ն հայր, կը ներէք *ամմա*, երկար ըրիք: Տաք ճաշերը սառեցան: *Չի քէօֆթէն* ալ ջուրը քաշեց: Յետոյ ալ պիտի ըսէք, որ ճաշերը համով չէին...»:

(43)

Մուշեղ աւ. քին. Տէր Գալուստեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու շրջանին մէջ կէսօրուան մօտ առաջին անգամ ըլլալով տուն մը կ'այցելէ: Տնեցիները ճաշի կը պահեն զինք եւ տանտիկինը խոհանոց կ'երթայ պատրաստութիւններ տեսնելու համար: Տէր հայրը յանկարծ կը լսէ, թէ խոհանոցէն «Մուշե՛ղ, Մուշե՛ղ» ըսելով մէկը կը կանչեն: Սկիզբը կարեւորութիւն չի՛ տար: Յետոյ կ'անդրադառնայ, որ տունին մէջ իրմէ գատ Մուշեղ անունով մէկը չկայ եւ խոհանոց կը մտնէ՝ միաժամանակ մտածելով, թէ այս ի՛նչ մտերմութիւն նոյնիսկ «Տէր Մուշեղ» չեն ըսեր: «Հրամմեցէ՛ք, զի՞ս կը կանչէիք», կը հարցնէ տանտիկինին: «Ո՛չ, տէր հայր, մեր կատուին անունը Մուշեղ է...», կը պատասխանէ ան:

(44)

Հայրս տարիներէ ի վեր ստամոքսի ահաւոր ցաւերէ կը տառապի: Այլեւս դեղերը եւ բնական դարմանները օգուտ չեն ըներ: Առաւել՝ կը մերժէ *սիկարէթ* եւ *ներկիլէ* ծխելը դադրեցնել: Բժիշկը գործողութիւն կը յանձնարարէ: Ճար չունի. դանակը ոսկորին հասած է: Գործողութիւնը յաջող կ'անցնի, սակայն բժիշկը յանձնարարութիւններ ունի հօրս: Հիւանդանոցէն տուն կ'երթանք եւ շաբաթ մը ապաքինելէն ետք բժիշկին քովն ենք: Բժիշկը եւ ես *սիկարէթը* մեր շրթներուն, բժիշկը բռնատերի հեղինակութեամբ կը հրահանգէ հօրս. «Պարո՛ն Յակոբ, ասկէ յետոյ ո՛չ թէ *սիկարէթ* ծխել չի՛ կայ, այլ *սիկարէթ* բառը անգամ բերանդ առնել չի՛ կայ»:

Հայրս հնազանդեցաւ բժիշկին խրատին եւ 91 տարեկանին մահացաւ...:

(45)

Խորեն Ա. կաթողիկոս պարտականություն կու տայ Շահէ աւ. քին. Ալեէմէգեանին լիբանանահայ բարերարի մը դիմելու եւ ազգօգուտ ծրագիրի մը համար կարելոր գումար մը ապահովելու: Տէր հայրը քաջ գիտէ, որ յիշեալ ազգայինը պիտի չմերժէ վեհափառ հայրապետը, սակայն ժամանակ չ'ունենար անմիջապէս անոր մօտ երթալու:

Պաշտօնական ձեռնարկի մը կարճ դադարին, Խորեն կաթողիկոս տէր Շահէին կը հարցնէ. «Տէր հա՛յր, մեր խնդիրը ի՞նչ եղաւ»: Տէր հայրը կը նայի, որ վեհափառը խումբ մը միաբան հայրերով ու ազգայիններով շրջապատուած է, անյարմար կը զգայ երկար-բարակ լուսաբանութիւն տալու ու ինքզինք արդարացնելու եւ կը պատասխանէ. «Եղա՛ւ վերջացաւ, վեհափա՛ռ տէր, նորին նայեցէք»: Վեհափառը գոհունակ կը ժպտի:

Տէր Շահէ յաջորդ օր բարերարին գրասենեակը կ'երթայ եւ կացութիւնը կը պարզէ: Բարերարը, որ միշտ սիրով ընդառաջած էր քահանային, «Կը ներես, ա՛յս անգամ պիտի չըլլայ, տէ՛ր հայր», կը պատասխանէ. տէր հայրն ալ Խորեն կաթողիկոսին հետ իր ունեցած կարճ երկխօսութիւնը կը պատմէ եւ կ'աւելցնէ. «Ճիշդ ա՛յս անգամ պիտի ըլլայ, որովհետեւ դուք եւ ես վեհափառ հայրապետին քով ամօթով պիտի մնանք»: «Է՛հ, եթէ անանկ է, ուրեմն այս անգամ ալ եղած թող ըլլայ, տէ՛ր հայր», կ'ըսէ մարդը, եւ չէքը կը գրէ:

Ո՞ր մնացին այս տիպի մեր բարերարները...:

(46)

Մեր երիտասարդ միաբաններէն մին իր աբեղայական ձեռնադրութեան կնքահայրին տունը հրաւիրուած է կիրակի օր, կէսօրուան ճաշի: Անշուշտ ան ինքնաշարժ չունի եւ հանրակառքով մինչեւ կնքահայրին *վիլլային* ամենէն մօտիկ կանգառը կը հասնի եւ մնացած ճամբան, շուրջ քառորդ ժամ, քալելով կ'երթայ:

Բարի գալուստի ջերմ ընդունելութեան կը յաջորդէ պատշաճ ճաշկերոյթ եւ մտերմիկ զրոյց: Կնքահայրը նաեւ հարց կու տայ, թէ որքա՞ն տեւեց Անթիլիասէն մինչեւ իրենց տունը հասնիլը եւ հայր սուրբը ինչպէ՞ս եկաւ: Հայր սուրբն ալ միամտաբար կը խորհի, թէ կնքահայրը կրնայ իրեն

ինքնաշարժ մը նուիրել երբ իմանայ իր կրած յոգնութիւնը՝ մանրամասնօրէն կը նկարագրէ, թէ ինչպէս ամառուան տաքին մայրավանքին առջեւ շուրջ կէս ժամ հանրակառքի սպասած էր, յետոյ կէս ժամ քանիցս կենալներով տունին ամենամօտիկ կանգառը հասած էր, հոնկէ ալ քառորդ ժամէն քսան վայրկեան քալած եւ վերջապէս շնչասպառ ու քրտնած իրենց տունը հասած էր: «Վնաս չունի, հա յր սուրբ», կը մխիթարէ անտարբեր կնքահայրը, «երիտասարդ ես. աղուոր մարզանք եղաւ քեզի...»: Ա՛ն քեզի ինքնաշարժ: Բարի՛ վայելում...:

(47)

Մոնթրէալէն ընկերոջս կը հեռախօսեմ եւ Լիբանանի ընկերա-քաղաքական անտանէլի կացութիւնը կը վերլուծենք: Պետական անպատասխանատու մարդոց ակնարկելով ես կ'ըսեմ. «Ասոնք մարդ չեն. մարդակերպ են»: Իսկ ինք աւելի դիպուկ բնորոշում մը կու տայ. «Ո՛չ, մարդակերպ չեն, մարդակեր են...»:

(48)

1996-ին չորս ընկերով կ'որոշենք Երեւանէն մինչեւ Մեղրի երթալ: Մեր բոլոր անցած քաղաքներուն եւ գիւղերուն մէջ կ'արժանանանք հայկական ջերմ ասպնջականութեան: Ղափանէն առաջ, գիւղի մը մէջ վերջապէս կը յաջողինք կաթի սեր ճարել: Գիւղացին այնքա՛ն խեղճ ու կրակ պայմաններու մէջ կը գտնուի, որ միայն առանց կափարիչի մէկ պահածոյի ապակեայ շիշ ունի եւ կը բարեհաճի մեզի տրամադրել՝ միայն այն պայմանով, որ մեր վերադարձի ճամբուն վրայ զայն իրեն վերադարձնենք: Կը համաձայնինք: Ինքնաշարժին մէջ սերի շիշը փոխն ի փոխ մեծ զգուշութեամբ կը պահենք, եւ երբ երկու ժամէն Ղափան կը հասնինք՝ հրապարակը կանգ կ'առնենք նախաճաշելու համար:

Մինչեւ որ ընկերներս նախաճաշի կարգադրութիւնները ընեն, ես զարթնող քաղաքի հրապարակին աչք մը կը նետեմ եւ հանրակառքին սպասող մայրիկ մը կը տեսնեմ, որ թափանցիկ պայուսակին մէջ չորս-հինգ պարապ պահածոյի ապակեայ շիշեր ունի: Կը մօտենամ եւ կը

հարցնեմ, թե ուրկե՞զ գնած է զանոնք: Կը պատասխանէ, թե տունը շատ ունէր եւ պարզապէս հետը առած է, որպէսզի եթէ ընկերուհիները պէտք ունենան, անոնց տայ: «Ե՛ս պէտք ունեմ. կարո՞ղ էք ինձ տալ», կը համարձակիմ հարցնել՝ յիշելով մեր գիւղացի բարեկամը: «Աչքիս վրայ», կը պատասխանէ մայրիկը եւ պայուսակը ուրախութեամբ ինծի կ'երկարէ: Դրամ կ'առաջարկեմ, կտրականօրէն կը մերժէ: Շնորհակալութիւն կը յայտնեմ, մի քանի հատ խաչիկ կու տամ եւ բարի օր մաղթելով կը մեկնիմ:

Երեւան վերադարձի ճամբուն վրայ մեր բարեկամին կու տամ դափանցի մայրիկին նուիրած պահածոյի ապակեայ շիշերը եւ կը պատմեմ, թե ինչպէս գտայ զանոնք: «Սրանք Աստուծոյ նուէրներն են», կը պատասխանէ ան երախտագէտ սիրտով...:

(49)

Դամասկոսի մէջ Արեւելեան ուղղափառ եկեղեցիներու ընտանիքի եւ Աւետարանական եկեղեցիներու ընտանիքի աստուածաբանական երկխօսութեան յանձնաժողովի հանդիպումն է: Երկու օրէ ի վեր կը հանդիպինք: Գիշերը Ասորի ուղղափառ եկեղեցիի պատրիարքը ճաշարանի մը մէջ շքեղ ընթրիքով պատուած էր յանձնաժողովի անդամ-անդամուհիները:

Առաւօտեան աղօթքէն ետք, բացումի նիստէն առաջ, գերման երիտասարդ աստուածաբանուհի մը ատենապետէն խօսելու արտօնութիւն կը խնդրէ եւ մօտաւորապէս հետեւեալ խորհրդածութիւնը կը կատարէ. «Առաջին անգամը չէ, որ Միջին Արեւելքի եկեղեցիներուն հետ կ'ըլլամ: Քաջ գիտեմ, թե շատ դժուարին պայմաններու մէջ մեր քրիստոնեայ եղբայրներն ու քոյրերը նոյնինքն քրիստոնէութեան բնօրրանին մէջ Քրիստոսը կ'ապրին եւ կեանքի վկայութեամբ ամբողջ աշխարհին օրինակ կը դառնան: Սակայն միաժամանակ կը զարմանամ այն մսխումին համար, որուն ականատես կը դառնամ: Յուսամ երէկ գիշերուան մեր սեղաններուն վրայ աւելցած ճաշերը աղբաման չթափուեցան: Նայեցէք այստեղ՝ մեր սեղաններուն վրայ գտնուող թուղթէ թաշկինակներու տուփերուն. իւրաքանչիւրիս մէջտեղը տուփ մը կայ եւ ականայ կը տարուինք յաճախ թաշկինակ գործածելու», ապա գրպանէն լաթէ մոխրագոյն ճմոթկուած թաշկինակ մը կը հանէ, մեզի ցոյց կու տայ եւ կը շարունակէ. «Ես այս թաշկինակը ամբողջ օրը կը գործածեմ, իրիկունը կը լուամ, մինչեւ առտու

կը չորնայ եւ յաջորդ օրը դարձեալ կը գործածեմ: Բնապահպանութիւնը փոքր քայլերով կրնանք իրագործել: Վերջապէս՝ նաեւ շատ զարմացայ, երբ երէկ գիշեր մեր եկեղեցական պաշտօնական հիւրերը եւ մենք *մերսետեներով* ճաշարան գացինք: Գերմանիայի մէջ ո՛չ թէ մենք, այլ նոյնիսկ մեր եկեղեցիի հոգեւոր պետերը *վոլքսվակըն* կը վարենք: Մենք, հոգեւորականներս, մեր Տիրոջ՝ Յիսուսի նման կեանքով օրինակ պետք է ըլլանք մեր ժողովուրդին...»:

(50)

Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն Քանատայէն ընկեր մը Լիբանան կու գայ եւ կ'իմանայ, թէ Անթիլիասի հրապարակը չինական ճաշարան մը բացուած է: Անշուշտ այդ օրերուն նորութիւն էր այս մէկը: Առաւել՝ որպէսզի աւելի գրաւիչ դառնայ նորութիւնը, յայտարարութիւն մըն ալ հրապարակուած էր, թէ ճաշերը պատրաստողն ալ չինացի խոհարար է: Երբ քովս՝ մայրավանք կու գայ, անպայման կը պնդէ, որ այս չինական ճաշարանը երթանք: Ուրեմն, միասին կ'երթանք: Ընկերս կ'ապսպրէ ճաշերը, կ'ուտենք եւ մանաւանդ ինք կը հաւնի ու կ'ուզէ յատուկ գնահատանք յայտնել չինացի խոհարարին: Սպասեակը կը պատասխանէ ընկերոջս. «Կը ներէք, պարո՛ն. խոհարարը այսօր հիւանդ է...»:

Յամառ ընկերս, որ երկու շաբաթ պիտի մնար Լիբանան, մի քանի անգամ եւս կ'երթայ նոյն ճաշարանը եւ միշտ ալ նոյն պատասխանը կը ստանայ: Ի վերջոյ կը համոզուի, որ չինացի խոհարարը տեսնելու համար Չինաստան պետք է երթայ...:

(51)

Արամ Ա. կաթողիկոս Ամերիկայի Միացեալ Նահանգներ հովուապետական այցելութիւն շնորհած ընթացքին, նաեւ տեղական հոգեւոր պետի մը կ'այցելէ եւ ոսկեզօծ հայկական լանջախաչ մը կ'անցընէ անոր վիզին: Ըստ երեւոյթին, բարձրաստիճան հոգեւորականը խաչին թէ՛ արուեստէն եւ թէ՛ նիւթական արժէքէն կը հմայուի, որովհետեւ զրոյցի ընթացքին անդադար խաչը կը շօշափէ, խաչին կը նայի եւ ուշադրութիւնը առաւել-

լաբար խաչին վրայ կը պահէ: Երբ հոգեւորականը կարճ պահ մը ներողամտութիւնը կը խնդրէ վեհափառ հայրապետին եւ կը հեռանայ դահլիճէն, վեհափառը իր շքախումբի անդամներուն կ'ըսէ. «Մեր մարդը խաչը ոսկի կը կարծէ կոր. գոյնը չնետած՝ քալեցէ՛ք երթանք այստեղէն...»:

(52)

Արամ Ա. կաթողիկոս սկանտինաւեան երկիրի մը հոգեւոր պետը Լիբանանի հանրապետութեան նախագահին մօտ կը տանի:

Պաշտօնական խօսքերու փոխանակութեան ընթացքին մեր հիւրը շա՛տ կը գովաբանէ իր հայրենիքը. մանաւանդ կ'ընդգծէ իր հայրենիքին անսպառ հարստութիւնը, իր խօսքի աւարտին կը հրաւիրէ վսեմաշուք նախագահը այցելելու իր հայրենիքը եւ պահարան մը կը յանձնէ պարոն նախագահին: Պարոն նախագահը կը բանայ պահարանը եւ երբ կը տեսնէ, թէ հիւրին հայրենիքը ծանօթացնող զբօսաշրջիկային գրքոյկ մըն է, արաբերէնով կը բացագանչէ. «Սա մարդը դրամի մասին այնքա՛ն խօսեցաւ, որ ես ալ կարծեցի, որ գոնէ մէկ միլիոն եւրոյի չէք մը պիտի տայ...»:

(53)

Խումբ մը առաջնորդ սրբազան հայրեր եւ ազգայիններ Արամ Ա. վեհափառ հայրապետի շքախումբին մաս կը կազմեն Հռոմի սրբազան քահանայապետին այցելութեան ընթացքին: Ոմանք պաշտօնական այցելութենէն ետք մի քանի օր կը մնան եւ Հռոմի տեսարժան վայրերը կ'այցելեն: Այս խումբին մէջ է նաեւ Թեհրանի առաջնորդ Արտակ արք. Մանուկեան:

Խումբը կէս օր կը յատկացնէ Վատիկանին: Կ'այցելէ Ս. Պետրոս մայր տաճարը եւ թանգարանը. կարգը կու գայ գետնադամբաններուն: Ինչ որ կ'ընէ, սրբազան հայրը չի՛ կրնար գետնադամբաններուն նեղ մուտքէն անցնիլ: Խումբի անդամներէն մին դիպուկ նկատողութիւն մը կ'ընէ Արտակ սրբազանին. «Սրբազա՛ն հայր, պարապի մի՛ փորձէք, պիտի չըլլայ. դուք որ կողմն ալ դառնաք նոյնն է, պիտի չկրնաք մտնել, որովհետեւ ամեն կողմէն նոյն կլորութիւնը ունիք...»:

(54)

Նիւ Ճըրզի հոգեւոր հովիւ եմ: Ձմեռ է եւ առատ անձրեւ կը տեղայ: Հիւանդանոցի հովիւը կը հեռախօսէ ու կը տեղեկացնէ, որ մեր հաւատացեալներէն մին ծանր հիւանդ է եւ պէտք է հասնիմ ու հաղորդեմ: Անմիջապէս եկեղեցիի գրասենեակէն ճամբայ կ'ելլեմ:

Ահաւոր խճողում կայ: Երեկոյեան ժամը հինգն է եւ ամեն մարդ գործէն տուն կը վերադառնայ: Վերջապէս մայրուղիէն հիւանդանոցի երթալիք գիծը կը մտնեմ. տակաւին երեք թաղային լոյս պէտք է անցնիմ, որպէսզի հիւանդանոց հասնիմ: Վերջընթեր լոյսին անուշադիր կ'ըլլամ եւ կանաչէն նարնջագոյնի փոխուած ատեն կ'անցնիմ ճամբան: Ոստիկան մը կու գայ ետեւէս եւ զիս կը կանգնեցնէ: «Գիտէ՞ք ինչու կեցուցի ձեզ», կը հարցնէ: Չեմ պատասխաներ: «Կարմիր լոյսը անցաք», կ'ըսէ: «Ո՛չ», կը հակադարձեմ, «լոյսը կարմիր չէր. նարնջագոյն էր»: «Պարո՛ն», կ'ըսէ ձայնը բարձրացնելով, «Ամերիկայի մէջ նարնջագոյն լոյս չունինք. ունինք կանաչ, դեղին եւ կարմիր: Լաւ կ'ըլլայ, որ ձեր լոյսերը լաւ սորվիք գալ անգամ»: Եւ թէ՛ կարմիր լոյսը անցած ըլլալուս եւ թէ՛ լոյսը նարնջագոյն անուանած ըլլալուս համար կրկնակի կը տուգանէ զիս...:

(55)

Նիւ Ճըրզիի հոգեւոր հովուութեանս շրջանին մեծահասակներու անգլերէնի դասընթացք հաստատած ենք եւ հայրս ու մայրս ալ կը հետեւին ասոր: Ամիսէ մը ի վեր ուսուցչուհին Ամերիկայի ազգային տօները սորվեցուցած է իր աշակերտ-աշակերտուհիներուն, որոնց մեծամասնութիւնը պոլսահայ հայրիկ-մայրիկներ են: Ուսուցչուհին ամերիկածին հայուհի մըն է, որ թրքերէն չի՛ գիտեր. մայրս թարգմանի դեր կը կատարէ ուսուցչուհիին եւ աշակերտութեան միջեւ:

Ուսուցչուհին մայրս դասի կը հանէ այդ օր: Մայրս կը թուէ Ամերիկայի ազգային տօները, որոնց կարգին նաեւ «Գոլոմպոսի օրը», եւ թրքերէնով կը յաւելէ. «Գոլոմպոսը խերով-բարով գտած չըլլար սա Ամերիկան, մենք ալ մեր երկիրները ձգելով այս կողմերը եկած չըլլայինք»: Բոլոր դասարանը կը սկսի քահ-քահ խնդալ եւ ըսել (անշուշտ թրքերէնով). «Տիրամա՛յր, ի՛նչ աղուոր ըսիր. լեզուիդ դալար. մեր սիրտէն խօսեցար»:

Ուսուցչուհին կը զարմանայ եւ հարց կու տայ, թէ ի՞նչ պատահած էր, մայրս ի՞նչ ըսած էր: Մայրս կը լուսաբանէ: Ուսուցչուհին ալ կը միանայ գուարթ մթնոլորտին:

(56)

Հիւսիսային Ամերիկայի մէջ Հայ եկեղեցիին պատկանելիութեան մի քանի եղանակներ կան: Առաջին՝ կան անոնք, որոնք հայ եկեղեցիին մէջ մկրտուած են եւ հայ քրիստոնէայ կը նկատուին: Երկրորդ՝ կան անոնք, որոնք ամեն կիրակի եւ տօնական օրերուն կը փորձեն որոշ կանոնաւորութեամբ հայ եկեղեցի գալ եւ իրենց հաւատքը արծարծ պահել: Երրորդ՝ կան անոնք, որոնք պարբերաբար (տարին քանի մը անգամ) եւ պարագայաբար (Ս. ծնունդին, Ս. գատիկին, խորհրդակատարութեան մը, թաղումի մը, ձեռնարկի մը, երբ առաջնորդը կամ կաթողիկոսը այցելէ եւ այլն) հայ եկեղեցի կու գան: Չորրորդ՝ կան անոնք, որոնք իրենց ծուխի հայ եկեղեցիին անդամ կը դառնան,–թեմի կանոնագրութեան համաձայն,– տարեկան անդամատուրք կը վճարեն եւ համապատասխան պաշտօններու կրնան ընտրել ու ընտրուիլ: Թերեւս կան նաեւ ուրիշ եղանակներ ալ, որոնք ես մոռցայ նշելու եւ ուրիշներ կրնան յիշեցնել:

Երրորդ եղանակը գործադրող ամերիկացիին հայ ընտանիքի մը մայրիկը մահացած է: Հանգուցեալին թոռնիկը՝ Ճանը հեռախօսով հետս կապ կը պահէ եւ կը հաղորդէ, թէ կը խնդրուի որ երկու օրէն Նիւ Ճըրզիի հեռաւոր քաղաքներէն մէկուն մեռելատունին մէջ իր մեծ մօր յուղարկաւորութիւնը կատարեն:

Ճշդուած օրը երկու դպիրով կը հասնիմ մեռելատուն: Շուրջ յիսուն անձ հաւաքուած է: Ոչ ոք կը ճանչնամ: Գրասենեակ կը մտնեմ, ուր Ճանը ինքզինք կը ծանօթացնէ եւ կը յայտնէ, թէ արարողութենէն ետք ինք մեծ մայրիկին մասին դամբանական պիտի խօսի՝ ընտանիքին անունով: Անշուշտ կ'ակնկալէ, որ իրմէ առաջ ես ալ մխիթարական խօսք մը արտասանեմ: Հոգեւորականի նուագագոյն պարտքս համարելով, բնականաբար համաձայն կ'ըլլամ: Նաեւ թղթիկ մըն ալ կու տայ ինծի, որուն վրայ սովորաբար գրուած կ'ըլլան ընտանեկան պարագաներուն անունները, որոնց յաւուր պատշաճի պէտք է ցաւակցութիւն յայտնեմ եւ այլ յայտարարութիւններ կատարեմ (փոխան ծաղկեպսակի նուէրները ուր տալ,

հոգեճաշի համար ուր երթալ, ցաւակցութիւնները ուր եւ երբ պիտի ընդունուին եւ այլն): Ես ալ առանց աչք մը նետելու ձեռքի աղօթագիրքիս մէջ կը դնեմ եւ Ճանին ու դպիրներուն հետ մատուռ կ'անցնիմ արարողութիւնը սկսելու:

Աղօթքը աւարտելէն ետք, միաթարական խօսքս կ'ուղղեմ եւ Ճանին տուած թղթիկը կը բանամ եւ ցաւակցութիւններս կը յայտնեմ. կարգը կու գայ փոխան ծաղկեպսակի նուիրատութեան յայտարարութեան, որ կը կարդամ. «Մեծ մայրիկին ջերմ փափաքն է, որ փոխան ծաղկեպսակի նուիրատութիւնները կատարուին շուներու (այսինչ) հիւանդանոցին, որովհետեւ մեծ մայրիկին (այսինչ) հինգ տասը տարի առաջ կոկորդի *քանսեր* ունեցած էր եւ այս հիւանդանոցին մէջ (այսինչ) բժիշկին խնամոտ ձեռքերով բուժուած էր...»: Հազիւ մեռելատունէն դուրս ելած կը մտածեմ, թէ ի՞նչ աղուոր կ'ըլլար եթէ առողջացած շնիկը մեռելատուն բերած ըլլային եւ իմ կատարած յայտարարութենէս յետոյ առողջացած կոկորդով մէկ հաստ զրնգուն «հաու՛, հաու՛» մը ընէր...:

(57)

Նիւ Ճրրգիի եկեղեցիի գրասենեակին դուռին զանգը կը հնչէ: Քարտուղարուհին գործով դուրս ելած է: Ես կը բանամ դուռը: Երիտասարդ մըն է, որ արեւելահայերէնով կը դիմէ ու կը բացատրէ, թէ հայրը մահացած է եւ կը խնդրէ ինձմէ, որ իրեն ընկերանամ մեռելատուն երթալու թաղումին կարգադրութիւնները կատարելու համար: Կը ցաւակցիմ իրեն եւ իմ հերթիս կը խնդրեմ, որ քառորդ ժամ նստի, սպասէ մինչեւ քարտուղարուհին վերադառնայ, որպէսզի աւելի հանգիստ միտքով ընկերանամ իրեն: Կը սկսինք զրուցել եւ կ'իմանամ, որ արդէն իսկ հինգ ոչ-հայ մեռելատուն գացած էր եւ չէր կրցած իր ակնկալած գինը ապահովել. կը մնայ մեր եկեղեցիէն ոչ շատ հեռու այն մեռելատունը, որուն տէրերը իտալացի ու ամերիկահայ երկու գործընկեր են եւ կ'ուզէ, որ միասին հոն երթանք եւ ես անոնց բարեխօսեմ:

Քարտուղարուհին կը վերադառնայ, եւ հայաստանցի երիտասարդն ու ես կը լծուինք մեր առաքելութեան: Երբ մեռելատուն կը հասնինք մեզ կը դիմաւորէ ամերիկահայը եւ անգլերէնով կը ներկայացնէ իրենց զանազան ծառայութիւններուն գիները ու կը սկսի մանրամասնել (դագաղ, ծաղիկ,

ինքնաշարժ եւ այլն). առաւել՝ նկարներ ցոյց կու տայ եւ կ'առաջարկէ, որ գրասենեակին վարի յարկը իջնենք եւ ըստ մեր ճաշակին ընտրենք մեր փափաքածները: Երիտասարդը կ'առարկէ, թէ այդ բոլորին կարիքը չկայ եւ ինք միայն հետաքրքրուած է վերջնական գումարով: Մարդը վերջնական գումարը կ'ըսէ. «Տասներկու հազար տոլար. սակայն քանի որ հայ էք եւ հայ եկեղեցիի մէջ պիտի ըլլայ թաղումը, հազար տոլար պակաս կը վճարէք եւ մենք ալ մեր կողմէ հազար տոլար կը նուիրենք եկեղեցիին»: Երիտասարդը կը պատասխանէ. «Ուրեմն տասնմէկ հազար կ'ըլլայ իմ տալիքս. անշուշտ այս գումարը եթէ *չէքու* պիտի տամ. լաւ, եթէ *գէշ* (կանխիկ) տամ քանի՞ պիտի հաշուէք»: Ես գետինին տակը կը մտնեմ: Իսկ մարդը ինքն իրմէն ելած կը պատասխանէ. «Երիտասա՛րդ, զիս յիմարի տե՛ղ դրած ես: Այսքա՛ն տարի է ես այս գործին մէջն եմ, առաջին անգամն է ասանկ բան կը լսեմ: Ես մեռելի մը համար գանձած դրամս կառավարութենէն ինչպե՛ս եւ ո՞ւր պիտի պահեմ»:

Երիտասարդը ճարահատ կը համաձայնի մեռելատունին տիրոջ հետ, սակայն ընդհանուր գումարէն բաւական կը զեղչէ՝ յարմար գինով դագաղ, ծաղիկ, ինքնաշարժ եւ այլ ծառայութիւններ ապահովելով:

Շէնքէն դուրս կ'ելլենք:

Հիմա կարգը կու գայ եկեղեցիին: Գրեթէ ոչինչ կը վճարէ եկեղեցիին. առաւել՝ կը փափաքի սրահն ալ օգտագործել հոգեճաշի համար: Սիրով կ'ընդառաջեմ փափաքին. ի վերջոյ հանգուցեալ հայ հայրիկի մը յիշատակը կը յարգեմ: 4-500 անձի համար փառաւոր հոգեճաշ մը կը կազմակերպէ:

Զինք եկեղեցիին եւ կեանքիս մէջ առաջին եւ վերջին տեսնելս կ'ըլլայ...:

(58)

Նիւ Ճըրզիի գերեզմանատունին մէջ ննջեցեալ մը պիտի թաղեմ: Գերեզմանին մօտ հաւաքուած ենք արդէն եւ կը սպասենք, որ մեռելաթաղերը ինքնաշարժէն դագաղը բերեն: Ակնկալուածէն աւելի ժամանակ կ'առնէ եւ մարդիկ կը սկսին *սիկարէթ* ծխել: Ի վերջոյ դագաղը կը հասնի եւ արարողութենէն առաջ կը յայտարարեմ. «Հաճեցէք *սիկարէթները* մարել, որպէսզի աղօթքը սկսինք»: Անքաղաքավարին մէկը կը յարէ. «Դուն մեր

սիկարէթներուն հետ գործ չունիս. դուն աղօթքդ ըրէ, վերջացուր...»: Եթէ չէիք գիտեր՝ հիմա գիտցաք, որ այս տեսաք հայեր ալ կան...:

(59)

Ամերիկայի Միացեալ Նահանգներու մեր հոգեւոր հովիւներէն մին կը պատմէ. «Օր մը հիւանդանոց կ'այցելեմ մեր ծխականներէն մէկուն եւ «Բարի լոյս»-էն յետոյ կը հարցնեմ դասական «Ի՞նչ ունիս» հարցումը (անգլերէնով «What do you have?» կրնայ նշանակել «Ինչպէ՞ս ես» կամ «Ի՞նչ ունիս». այսինքն՝ տնտեսական վիճակդ ինչպէ՞ս է), որպէսզի գիտնամ, թէ մեր մարդը ինչո՞ւ հիւանդանոց մտած է: Ըստ երեւոյթին ան քնատ է կամ դեղերուն ազդեցութեան տակ կը գտնուի՝ կը սկսի թուել *պանքային* մէջ ունեցած գումարը, տունին մէջ ունեցած կանխիկ դրամը, *սթաք մարքեթին* մէջ ունեցած *շերերը*, կալուածները, պարտքերը...: Միտքէս կ'ըսեմ. «Ի՞նչ ապուր կերանք սա հարցումը հարցուցինք...»:

(60)

Քանատայի մեր հոգեւոր հովիւներէն մին է պատմողը. «Օր մը հիւանդանոցէն կը հեռաձայնեն, թէ *քումայի* մէջ հայ հիւանդ մը կայ եւ հարազատները կը փափաքին, որ հայ քահանայ մը գայ եւ աղօթէ վրան: Անմիջապէս հիւանդանոց կը վազեմ:

Կը մտնեմ հիւանդին սենեակը: Հարազատներ շրջապատած են զինք: Չեմ ճանչնար զիրենք: «Փարատեա»-ն կ'աղօթեմ: Հիւանդը կ'արթննայ, հոգեւորականի սեւ շապիկս եւ ճերմակ օձիքս կը տեսնէ եւ կը պոռայ շուրջիներուն. «Վճարեցէ՛ք տէր հայրին...»:

(61)

Վանգուվըր հոգեւոր հովիւ եմ եւ կիրակի առաւօտ անձանօթ մարդ մը եկեղեցի կու գայ՝ թելին տակ *թաւլի* դրած: Անգլերէնով կը բարեւէ, ինքզինք կը ծանօթացնէ, կ'ըսէ թէ Ֆլորիտայէն պտոյտի եկած հայ մըն է եւ

կը հարցնէ, թէ *թաւլի* խաղցող մը կը գտնուի՞ եկեղեցիին մէջ: Առտուան ժամը 10-ին ի՛նչ ախորժակ. փոխանակ ժամ-պատարագ հարցնելու, *թաւլի* խաղցող փնտռել...: Կը զարմանամ: Կը բացատրեմ, որ կէս ժամէն սուրբ պատարագը կը սկսի եւ ժամը 12-էն յետոյ կրնայ եկեղեցիի սրահին մէջ ահագի՛ն *թաւլի* խաղցողներ գտնել եւ ուզածին չափ *թաւլի* խաղալ: Մարդը շատ գոհ կը մնայ, *թաւլին* հետը եկեղեցի կը մտցնէ, *թաւլիին* վրան կը նստի, սուրբ պատարագին ներկայ կ'ըլլայ, սուրբ հաղորդութիւն կ'առնէ, յետոյ ալ սրահին մէջ իր *թաւլին* կը խաղայ...:

Ան Աստուծոյ բաժինը Աստուծոյ կու տայ, կայսրին բաժինը՝ կայսրին:

(62)

Աբեղայ եղած տարիներուս, Գաբեգին Բ. աթոռակից վեհափառը՝ ընդառաջելով Իրաքի թեմի առաջնորդի խնդրանքին, Ս. ծնունդին եւ Ս. գատիկին Անթիլիասէն միաբաններ կը դրկէր: Տարի մըն ալ Ս. գատիկին զիս կը դրկէ:

Պաղտատ կը հասնիմ եւ Աւագ եպս. Ասատուրեան քանի մը օր զիս հիւրընկալելէ ետք կը տեղեկացնէ, թէ աւագ շաբաթն ու Ս. գատիկը Պասրա պիտի անցընեն: «Հա՛յր սուրբ», կը յանձնարարէ սրբազան հայրը, «մեր ժողովուրդը շատ աւանդապահ է. կ'ուզէ որ իր տունը օրհնուի. գոնէ շաբաթ մը պիտի մնաս եւ տնօրինէք պիտի ընես. ինչ նուէր որ տան, պէտք է առնես. այլապէս շատ կը նեղուին. կը կարծեն որ քիչ է ըսելով չես առներ»: Առաջին անգամն էր, որ տնօրինէք պիտի ընէի եւ աջահամբոյր պիտի ստանայի. սակայն սրբազանին տուած բացատրութիւնը համոզիչ էր:

Պասրայի ժողովուրդը շատ կը տպաւորէ զիս իր խոր հաւատքով: Մեծով-պգտիկով ոչ միայն արարողութիւններուն կը մասնակցի, այլ նաեւ գոց կ'երգէ շարականները:

Երբ կարգը կու գայ տնօրինէքին, գլխաւոր դժուարութիւնը այն կ'ըլլայ, որ Զախոյէն Պասրա եկած ժամկոչը չի՛ կրնար հայերու տուները իսլամներու տուներէն զանազանել եւ տնօրինէքը մէկ շաբթուան տեղ երեք շաբաթ կը տեւէ, որովհետեւ այն դուռը որ կը զարնենք,– հայ կամ իսլամ,– երբ մեզ խաչով ու խունկով կը տեսնեն, ներս կը հրաւիրեն եւ իրենց տունը օրհնել կու տան...:

(63)

2000-ին Ս. Էջմիածին եմ՝ Քրիստոնեության Հայաստանի մէջ պետական կրօն հռչակումի 1700-ամեակի ժողովին մասնակցելու: Ժողովը սկսած ենք եւ յանկարծ ժողովասրահ կը մտնէ Վրաստանի թեմի առաջնորդ Գեորգ արք. Սերայտարեանը, որ յանձնախումբի անդամ չէ եւ քովս կը նստի ու կը սկսի ավստին մէջ դրուած շոքոլաներէն ետեւ-ետեւի ուտել: Մեր ատենապետ սրբազանը, յարգելով Գեորգ սրբազանին տարիքը, անհրաժեշտ չի՝ նկատեր, որ ան դուրս ելլէ: Իսկ, տասը վայրկեան ետք, Գեորգ սրբազան ինք կ'անդրադառնայ, թէ սխալ տեղ եկած է եւ «Ես ի՞նչ եմ անում էստեղ» ըսելով դուրս կ'ելլէ...:

(64)

Ուրիշ մանրապատում մըն ալ Վրաստանի թեմի առաջնորդ Գեորգ արք. Սերայտարեանէն:

Վազգէն Ա. կաթողիկոս մէկ շաբթուան համար Փարիզ կը ճամբորդէ եւ Գեորգ սրբազանն ու գաւազանակիր հայր սուրբը կ'ընկերանան վեհափառ հայրապետին: Համայնավարութեան օրերուն տեղի կ'ունենայ ճամբորդութիւնը եւ սրբազան հօր «Երկաթէ վարագոյր»-էն անդին առաջին ճամբորդութիւնն է:

Ճամբորդութենէն վերադարձին Փարիզի առաջնորդը կը կապուի Վազգէն կաթողիկոսին հետ եւ կը տեղեկացնէ, թէ Գեորգ սրբազանին պանդոկի սենեակին սառնարանի ծախսը սենեակի ծախսէն աւելի սուղ արժած է. կ'երեւի սխալ բան մը կայ: Վազգէն վեհափառ կը խոստանայ յարմար առիթով հարցնել Գեորգ սրբազանին:

Մի քանի շաբաթ ետք, երբ Գեորգ սրբազան Ս. Էջմիածին կ'այցելէ, փափկանկատ վեհափառ հայրապետը Փարիզի պանդոկի սառնարանի ծախսին նիւթը կը բանայ: Սրբազան հայրը կը պատասխանէ, թէ շատ տպաւորուած էր ճոխ հիւրանոցէն. լայն ննջարան, անկողին, լուացարան, մնայուն տաք ջուր, մաքուր ճերմակ սաւան ու անձեռոցներ, հեռատեսիլ, հեռախօս, ձայնասփիւռ, սառնարան: Եւ այս բոլորը՝ իրեն համար: Առաւել՝ կ'աւելցնէ, թէ երբ սառնարանը կը բանայ եւ կը տեսնէ զանազան խմիչքները, շոքոլաները, զովացուցիչները եւ այլն, քանի մը բան կ'ուտէ եւ

կը խմէ, մնացածն ալ ճամպրուկին մէջ կը լեցնէ: Եւ այսպէս ամեն օր: Ուրեմն վեց անգամ: «Վեհափա՛ռ տէր, ես դատարկում էի, նրանք լցնում էին. ես միամիտ մտածում էի, որ սրանք իմն են: Գիտէք ես առաջին անգամ էի արտասահման լինում: Հիմա եմ իմանում, որ ես բոլորը փող արժի: Ներող եղէք», կ'ըսէ: Վազգէն վեհափառը կուշտ ու կուռ կը խնդայ եւ հարցը կը փակէ. «Ոչի՛նչ, ոչի՛նչ, սրբազա՛ն ջան...»:

(65)

Կը պատմեն, թէ Ուաշինկթըն Տի.Սի.–ի մէջ հանդիսաւոր սուրբ պատարագի մը մատուցումին նաեւ ներկայ կը գտնուի Հայաստանի հանրապետութեան Բարձրաստիճան դէմքերէն մին: «Ողջոյն»–ի պահուն ամերիկահայ սարկաւազը կը փափաքի մասնաւոր յարգանք մը ընել մեր պետական դէմքին եւ անձամբ կը մօտենայ ու «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ. ողջոյն տուք միմեանց» կ'ըսէ: Դիմացէն պատասխանը փոխան «Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի» ըլլալու, կ'ըլլայ. «Շատ լաւ. պատարագից յետոյ կը խօսանք...»:

Կը պատմեն, թէ նման դէպք մըն ալ կը պատահի Ս. Էջմիածինի մայր տաճարին մէջ, երբ սարկաւազը լուսարարապետ Յուսիկ արք. Սանթուրեանին «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ. ողջոյն տուք միմեանց» կ'ըսէ, սրբազան հայրը կը պատասխանէ. «Տղայ ջան, ես իմանում եմ. գնա՛ միսներին ասա...»:

(66)

Նիւ Ճըրզիի մէջ Ամերիկա ծնած եւ Լիբանանէն հոն հաստատուած խումբ մը երիտասարդ-երիտասարդուհիներ միշտ միասին ընկերութիւն կ'ընեն եւ ամերիկածիները օրէ-օր կը քաջալերուին աւելի հայերէն խօսելու:

Օր մըն ալ նոյն խումբէն Լիբանանէն եկած ընտանիքի մը մեծ մայրը կը մահանայ եւ երիտասարդ-երիտասարդուհիներու խումբը ցաւակցութեան պիտի երթայ: Ամերիկածին երիտասարդներէն մին կը մտածէ, թէ

սքանչելի առիթ է իր հայերէնախօսութիւնը ցոյց տալու, երբ մանաւանդ ահագին ալ մարդ պիտի ըլլայ ննջեցեալին տունը. լիբանանահայ ընկերներէն մէկուն կը հարցնէ, թէ այսպիսի առիթով հայերէնով ի՞նչ կ'ըսեն: Ան ալ «Աչքերնիդ լոյս ըլլայ» կը պատասխանէ: Մեր ամերիկահայ բարեկամը թուղթին վրայ կը գրէ եւ մեծ ճիգով գոց կը սորվի. ապա տասը հոգինոց երիտասարդական խումբին գլուխն ալ անցնելով կը սկսի բոլորին հետ ձեռնուիլ եւ տխուր շեշտով ըսել. «Աչքերնիդ լոյս ըլլայ», «Աչքերնիդ լոյս ըլլայ»: Խնդուք մըն է ծայր կ'առնէ. մեր ամերիկահայ բարեկամը լիբանանահայ ընկերը կը փնտռէ. կ'ըսեն հայերէնէ-հայերէն բառարան բերելու գնաց...:

(67)

5–12 մարտ 1984-ին, Գարեգին Բ. կաթողիկոս պաշտօնական այցելութեամբ Դանիա կը գտնուի: Շքախումբին մաս կը կազմեմ որպէս գաւազանակիր: Կիրակի, 11 մարտին, վեհափառ հայրապետը կը քարոզէ Քոփենհակընի մայր տաճարին մէջ, ապա սրահին մէջ տեղի կունենայ պաշտօնական ճաշկերոյթ: Ճաշկերոյթի ընթացքին հաւատացեալ մը խօսք կ'առնէ եւ կը յատնէ, թէ երկար տարիներ Ճիպէյլի “Թոչնոց բոյն”-ի դանիական օժանդակ մարմինի անդամ եղած է եւ հետեւեալը կը պատմէ. «Երբ հայերու ջարդերը տեղի կունենային 1915-ին, երկու քոյրերս եւ ես շատ պզտիկ էինք. չէինք գիտեր ի՞նչ կ'ըլլար, ինչո՞ւ կ'ըլլար: Մինչեւ հիմա չեմ հասկցած, թէ աշխարհը տակաւին ինչո՞ւ լուռ է: Մայրս ու հայրս մեզ իրենց մօտ կանչեցին եւ ըսին, որ պէտք է մտածենք թէ ինչպէս կրնանք ջարդէն փրկուած մեզի պէս պզտիկներուն օգնել: Մենք՝ երեքս գացինք, մտածեցինք եւ եկանք ու ըսինք, թէ մէկ տարի մեր Կիրակնօրեայ դպրոցի ամեն կիրակիի 10-ը դրուշին 5 դրուշը հայ պզտիկներուն պիտի տանք: Մեր ծնողները “Ո՛չ, չըլլար. այդ դրամը Կիրակնօրեային կը պատկանի. գացէք ուրիշ բան մտածեցէք”, ըսին: Մենք ալ այս անգամ ետ եկանք եւ ըսինք. “Որոշեցինք մէկ տարի մեր ամեն առտուան կաթը առանց շաքարի խմել եւ շաքարին դրամը հայ պզտիկներուն տալ”: Հաստատեցին մեր որոշումը ըւ օրհնեցին մեզ: Մեր ընտանիքը սերունդէ-սերունդ մինչեւ այսօր այսպէս կ'օգնէ “Թոչնոց բոյն”-ին»:

Զոհողութեան ի՞նչ ուսանելի օրինակ...:

(68)

Տարի մը Լիբանանի Չորք-Մարգպանի (Տօրթ-Եոլ) Հայրենակցական միութիւնը կորոշէ իր տարեկան ճաշկերոյթ-պարահանդէսին իւրաքանչիւրին պնակին մէջ նարինջ մը դնել՝ որպէս խորհրդանիշ Չորք-Մարգպանի պատմական հայրենի նարնջաստանին: Գաղութներէն առաջ, ատենապետը կէս կատակ-կէս լուրջ կը յայտարարէ, թէ նարինջները գացած Տօրթ-Եոլէն բերած են: Հաւատացողներ ալ կըլլան եւ իրենց հետ տուն կը տանին Տօրթ-Եոլի նարինջներէն: Ատենապետն ալ նարինջ մը տուն կը տանի եւ մօրը կու տայ. «Այսօր Տօրթ-Եոլէն բերինք» ըսելով: Մայրիկը կ'առնէ նարինջը, կը հոտտայ եւ տղուն կը վերադարձնէ պատասխանելով. «Ասի Տօրթ-Եոլի նարինջ չէ. Տօրթ-Եոլի նարինջը ասանկ չի՝ հոտիր...»:

(69)

Ատիս Ապապա եմ միջեկեղեցական ժողովի մը: *Փասսփորս* մէկ օրինակ եւ գրութիւն մը երկու օրինակ պէտք է *Ֆոթօ-գովի* ընել տամ: Կը հեռախօսեմ պանդոկին ընդունելութիւնը. կը տեղեկացնեն, թէ անձամբ իրենց պէտք է բերեմ: Վար կ'իջնեմ եւ պաշտօնեային քանի մը անգամ կը բացատրեմ, որովհետեւ ընկերս զիս զգուշացուցած էր, թէ եթովպացիները քիչ մը ուշ կ'ըմբռնեն: Կ'ըսեմ. «Աջ ձեռք՝ *փասսփոր* մէկ օրինակ. ձախ ձեռք՝ գրութիւն երկու օրինակ. յստա՞կ է»: «Այո՛, այո՛», կը պատասխանէ: Պաշտօնեան քիչ յետոյ կը վերադառնայ եւ *Ֆոթօ-գովիները* ինծի կը յանձնէ. *փասսփոր* երկու օրինակ, գրութիւն մէկ օրինակ: Ճի՛շդ հակառակը:

Շնորհակալութիւն կը յայտնեմ, սենեակ կը բարձրանամ եւ ընկերոջս կը հեռախօսեմ: Ան կը սկսի խնդալ եւ ըսել. «Առաջին՝ երբ դուն աջ եւ ձախ ըսեր ես՝ ան արդէն իրար անցած է, որովհետեւ քու աջդ իր ձախն է եւ իր ձախը քու աջդ: Երկրորդ՝ եթովպացիին երկու բան նոյն ատեն պիտի չըսես, մէկ-մէկ. հիմա գնա, առաջ *փասսփորը* տուր եւ մէկ օրինակ ըսէ, թող ընէ, թող բերէ, յետոյ գրութիւնը տուր եւ երկու օրինակ ըսէ»: Ընկերոջս ըսածին պէս ըրի եւ ամեն բան ճիշդ եղաւ: Որքա՛ն մարդ, այնքան մշակոյթ...

Էր Ֆրանսուվ Փարիզէն Մոնթրէալ կը ճամբորդէմ: Օդանաւը երկու ժամէն աւելի է արդէն օդին մէջն է, սակայն ճաշի սպասարկութիւն չի՝ կատարուիր: Շուրջս կը նայիմ, ամեն մարդ տոպրակներ բացած է եւ բաներ մը կ'ուտէ: Քովս նստողն ալ *Մակ տանըլտի* տոպրակ մը բացած *համպըրկըր* ու *ֆրէնչ ֆրայզ* կ'ուտէ եւ *գոգա-գոլա* կը խմէ: «Օդանաւին մէջ ճաշ պիտի չտա՞ն», կը հարցնեմ դրացիիս: «Ո՛չ. օդանաւակայանը յայտարարեցին, կ'երեւի ուշադիր չեղաք. ճաշի ընկերութիւնը գործադուլ ըրած է: Միայն խմիչք պիտի տան», կը պատասխանէ եւ *Մակ տանըլտի* նոր տոպրակ մը կը հանէ եւ ինծի *համպըրկըր* ու *ֆրէնչ ֆրայզ* եւ *գոգա-գոլա* կը հրամցնէ: Իսկապէս օդանաւակայանի յայտարարութեան ուշադրութիւն չէի դարձուցած. շնորհակալութիւն կը յայտնեմ արժողակիցիս հիւրասիրութեան համար եւ իմ հերթիս, երբ ոգելից ըմպելիները կը բերեն՝ լիբանանեան պիստակեղէն կը հրամցնեմ իրեն:

Ժընեւէն Լոս Անճելըս կը ճամբորդէմ: Քովս արաբ մարդ մը նստած է: Մի քանի բառ փոխանակելէ ետք, ես ընթերցանութեան մէջ կը սուզուիմ, մարդն ալ ճաշը ուտելէն յետոյ՝ մշիկ-մշիկ կը քնանայ: Բնաւ իրար չենք խանգարեր: Գրեթէ թռիչքին աւարտն է եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներ ժամանումի ու մաքսային ստուգումներու յայտարարութիւնները կը բաժնեն ճամբորդներուս: Ես կը սկսիմ թուղթերս լեցնել: Երբ գործս կ'աւարտեմ, արաբ մարդը աղաչական ձայնով օգնութիւնս կը խնդրէ: Միքով կ'ընդառաջեմ խնդրանքին: Կը պարզուի, որ մեր բարեկամը իրաքցի է, առաջին անգամ ըլլալով օդանաւով կը ճամբորդէ եւ բառ մը անգլերէն չի՝ գիտեր, առաւել՝ չի՝ գիտեր, թէ ուր պիտի մնայ Լոս Անճելըսի մէջ (պէտք է հասցէ եւ հեռախօսի թիւ գրէ թուղթին վրայ): Կը շարունակեմ լեցնել թուղթը եւ կ'ըսեմ. «Հարցում մը կայ, թէ տասը հազար ամերիկեան տոլարէն աւելի ունի՞ս»: «Երանի աւելի ունենայի եւ յայտարարէի...», կը յարէ:

Թուղթերը ամբողջացնելէ ետք՝ կու տամ իրեն եւ միտքէս կ'ըսեմ, որ արդեօք քանի ժամ պիտի չարչարեն այս խեղճ մարդը մինչեւ ձգեն Ամերիկա մտնէ: Պայուսակներս կ'առնեմ ու օդանաւակայանէն դուրս

կելլեմ որպէսզի զարմիկիս ինքնաշարժը նստիմ եւ քիչ մը անդին իրաքցին կը տեսնեմ: Մարդը ինձմէ առաջ արդէն դուրս ելած է: Բախտ ըսածդ ասանկ կ'ըլլայ...:

(72)

Մեծահարուստ վաճառական բարեկամ մըն է պատմողը.

«Չինաստան եմ եւ այդ օր կ'որոշեմ նախաճաշս սենեակս առնել: Սպասեակը նախաճաշի յարմար քիչ մը ամեն ուտելիք եւ խմելիք պարունակող շարժական սեղանը սենեակս կը մտցնէ եւ դուրս կ'ելլէ: Կը մոռնամ “Հաճեցէ՛ք չխանգարել” ազդարարագիրը կախել դուռին վրայ: Հինգ վայրկեան ետք կամացուկ մը դուռը կը զարնուի եւ մաքրարար կիներ ներս կը մտնէ: “Օ՛, կը ներէք”, կ'ըսէ եւ կը պատրաստուի դուրս ելլել: “Խնդրեմ”, կը պատասխանեմ, “հրամմեցէ՛ք միասին նախաճաշենք. բաւարար ուտելիք կայ”: Ինծի կը նայի, սեղանին կը նայի եւ վշտալի ձայնով կը յարէ. “Տունը երեք անօթի զաւակ եւ վեց թոռնիկ ունիմ. չեմ կրնար առանց իրենց պատառ մը հաց դնել բերանս. դուք կերէք. անո՛ւշ ըլլայ”: Ձեռքէն կը բռնեմ եւ ամեն ջանք կը թափեմ, որ նստի եւ գոնէ պատառ մը բան ուտէ: Անկարելի կ'ըլլայ: Շուտով գոգնոցին գրպանը գումար մը կը դնեմ եւ սենեակէս դուրս կու գամ որպէսզի շնչասպառ չըլլամ...»:

(73)

Նոյն մեծահարուստ վաճառական բարեկամս է պատմողը.

«Ընտանիքով Մենհեթըն (Նիւ Եորք) ենք՝ արձակուրդի: Մէկ շաբաթ ամենաճոխ պանդոկներէն մին կը մնանք եւ կը վայելենք ամերիկեան ամեն ինչի մեծութիւնը – լայն սենեակներ, լայն անկողիններ, լայն լուացարաններ, լայն լոգարաններ, խոշոր *սթէյքներ*, մեծ շիշով *գոգա-գոլաներ* եւ այլն: Ամեն մարդ գոհ է եւ յոփացած:

Ապա Փարիզ կ'անցնինք: Հոս եւս մէկ շաբաթ արձակուրդ պիտի անցընենք եւ ամենասուղ պանդոկներէն մին պիտի մնանք: Անշուշտ ֆրանսական *լիւքսը* կայ, բայց չափերը ամերիկեանին հետ չեն համեմատուիր. հոս ամեն բան փոքր է, թէւ աւելի ճաշակաւոր: Մերինները մէկ

շաբաթ այնքա՛ն շփացած էին, որ հազիւ եօթը տարեկան փոքր տղաս կէս ժամ ետք պանդոկին մէջ ապստամբութեան դրօշը կը պարզէ. “Աս ի՞նչ է: Ես հոս չեմ մնար: Ես ետ Նիւ Եորք պիտի երթամ”: Անշուշտ չենք ձգեր որ երթայ...»:

(74)

Դարձեալ մեծահարուստ վաճառական բարեկամս է պատմողը.

«Վերջապէս Լոս Անճելըս կը վերադառնանք եւ սրճարան մը կը նստինք: Չորս մօտիկ ընկեր ենք եւ գրեթէ տարի մըն է շաբաթը մէկ անգամ, չորեքշաբթի կէսօր, նոյն հայկական ճաշարանը կ’երթանք եւ միշտ նոյն խմիչքը, *մեզէներն* ու ճաշերը կ’ապսպրենք, եւ ամեն անգամ մեզմէ մէկը կը վճարէ հաշիւը: Մեր արձակուրդին մասին կը հարցնեն եւ ես մեծ ուրախութեամբ կը պատմեմ, թէ շատ լաւ անցուցինք: Ապա, խօսակցութիւնը մեր չորեքշաբթի կէսօրներու ճաշին շուրջ կը դառնայ: Խաչիկը կը հարցնէ. “Ատ չէ ալ, ի՞նչ կը վճարէք կոր ամեն անգամ”: “Երկու հարիւր-երկու հարիւր յիսուն տոլարի պէս բան մը կ’ելլէ կոր կարծես”, կը պատասխանէ Վահէն: “Հա՛, հա՛. մարդուն պատառն ալ համով է, *պապաւ*”, կ’աւելցնէ Զարեհը: Ես լուռ կը մնամ եւ թեթեւ մը գլուխս կը շարժեմ: “Տղա՛ք այս չորեքշաբթի իմ հիւրս էք”, կ’ըսեմ եւ սրճարանէն դուրս կ’ելլենք:

Չորեքշաբթի կէսօր չորսով նոյն ճաշարանն ենք: Կ’ուտենք, կը խմենք, կը կատակենք եւ հաճելի պահեր անցընելէն ետք՝ ընկերներս կը մեկնին: Ճաշարանատէրը հաշիւը կը բերէ: Հաշուեցոյցին կը նայիմ. ինչպէս միշտ՝ իմ հաշուեցոյցս չորս հարիւր տոլար է: Այլեւս համբերութեանս բաժակը կը յորդի եւ կը պոռթկամ. “Ինչո՞ւ ընկերներուս հաշիւը առաւելագոյնը երկու հարիւր յիսուն տոլար կ’ելլէ կոր միշտ եւ իմս՝ չորս հարիւր տոլար: Ի՞նչ է ասոր գաղտնիքը: Նոյն չորս հոգիով կերածնիս-խմածնիս նոյնն է ամեն ատեն”: “Այո՛, ճիշդ էք, բայց դուք անոնցմէ աւելի հարուստ էք...”:

(75)

Նիւ Ճըրզի հայկական Ճաշարաններէն մէկուն մէջ, մկրտութենէն ետք, խրախճանքի համար ընտանիք մը իր հարազատներով կը հաւաքուի:

Նախապէս կատարուած համաձայնութեամբ, երեխային հայրը կ'երթայ եւ կը վճարէ ճշդուած երկու հազար տոլարի գումարը: Երեխային հօրեղբայրը, որ մկրտութեան կնքահայրն էր եւ եղբօրը հետ նախօրոք եկած եւ երկու հազար տոլարի համաձայնութեան կնքումին ինք եւս ներկայ եղած էր հայ ճաշարանատիրոջ հետ, առանց իմանալու, թէ եղբայրը վճարած է՝ կ'երթայ եւ երկու հազար տոլար ալ ինք կը վճարէ:

Բաւական ժամանակ կ'անցնի եւ այս մասին նիւթ չի՝ բացուիր երկու եղբօր միջեւ: Ս. գատիկի առթիւ երկու եղբայր ընտանիքներով եկեղեցի կու գան եւ կ'որոշեն սուրբ պատարագէն ետք տեղ մը ճաշի երթալ: Մէկը միւսին կ'առաջարկէ այս հայկական ճաշարանը. բայց կը կասկածին, որ կրնան տեղ գտնել վերջին վայրկեանին եւ կը նախընտրեն երկուքով մէյ մը երթալ եւ ստուգել: Ինքնաշարժին մէջ մկրտութեան նիւթը կը բացուի. ճաշերուն գովքը կը հիւսեն, հիւրասիրութիւնը կը գովեն եւ վճարումին կը յանգին: Եւ ահա կը պարգուի, որ երկու հազար տոլարի փոխարէն չորս հազար տոլար վճարած են: Կ'ընդվզին եւ հազիւ ճաշարան հասած, բոլորին ներկայութեան՝ ճաշարանատիրոջ երեսին կը պոռան. «Անամօ՛թ. չ'ամչցա՞ր իւրաքանչիւրէս երկու հազար տոլար գանձելու»: Վերջինս փոխանակ ներողութիւն խնդրելու եւ երկու հազար տոլարը վերադարձնելու, կը պատասխանէ. «Ես չուզեցի. դուք տուիք՝ ես ալ առի»: Ի՛նչ տրամաբանութիւն...:

(76)

Սահակ ընկերս է պատմողը. «Սմբուկ չեմ սիրած, բայց մինչեւ մօրս մահանալը կերած եմ: Տունը միշտ սմբուկ չուտելու կռիւ կար: Օր մըն ալ դպրոցէն անօթի տուն կը մտնեմ եւ ճաշասեղանին վրայ կը տեսնեմ, որ մամաս *իմամ պայրնտը* եփեր է: Սառնարանը կը բանամ որպէսզի պանիր-հաց ուտեմ. մայրս կ'արգիլէ: Ես կը պնդեմ. մայրս կ'ընդդիմանայ: Մօտաւորապէս տասը վայրկեան կ'առնենք-կու տանք: Վերջապէս մայրս *իմամ պայրնտըի* ափսէն կ'առնէ սեղանին վրայէն եւ գլուխէս վար կը թափէ՝

«Հիմա կերա՞ր մը» ըսելով, եւ «Մտիր լոգցիր» կ'աւելցնէ: Լոգցած ատենս կը մտածեմ՝ «Աժան ազատեցայ»: Երբ դուրս կ'ելլեմ, մայրս զիս սեղանին մօտ կը նստեցնէ եւ հետեւեալ անուշ ու անմոռանալի խրատականը կը խօսի. «Տղա՛ս, *պաթըլճանը* շատեր չեն սիրեր. բայց ի՞նչ ընենք, հիմա *պաթըլճանի* ատենն է, աժան է. ինչ որ աժան է ան պիտի առնեմ, դրամ չի՛ կայ: Յետոյ, պիտի սորվիս, որ կեանքիդ մէջ ամեն բան ուզածիդ պէս չըլլար. երբեմն ալ չի՛ սիրած բաներդ ստիպուած պիտի սիրես, աչք պիտի գոցես, պիտի վարժուիս, սուտ խենթ պիտի ըլլաս»: Ապա սառնարանը կը բանայ եւ ուրիշ ափսէ մը *իմամ պայընտը* կը դնէ առջեւս եւ «Միայն համին նայիր» կ'ըսէ՝ պզտիկ պնակ մըն ալ տալով եւ պանիր-հացի սանտուիչս փաթթելով...:

(77)

Եւրոպայի զանազան երկիրներէն ժամանած եօթնանդամ միջեկեղեցական բարձրաստիճան պատուիրակութիւն մը կը տանիւմ Սուրիայի Պաշար Ասատ նախագահին քով: Նախագահը մեծ գովեստով կը խօսի հայերուն մասին եւ հետեւեալը կը պատմէ. «Հայ մը Հալէպի պետական գրասենեակներէն մին կերթայ պաշտօնական վաւերաթուղթ մը առնելու համար: Պաշտօնեան անհրաժեշտ ստուգումները կը կատարէ եւ միաժամանակ հարց կու տայ նոյն գրասենեակին մէջ գտնուող քաղաքացիներուն եթէ նման վաւերաթուղթի կարիք ունեցող կայ: Սուրիայի անապատային շրջաններէն եկած արաբ մը կը մօտենայ: Պաշտօնեան ասոր անձնաթուղթը կը ստուգէ եւ երեւան կ'ելլէ, թէ Հալէպ ապրող հայն ու անապատի խորերէն եկող արաբը 1915-ի Հայկական ցեղասպանութենէն վերապրած եղբայրներու զաւակներու շառաւիղ են: Ահաւասիկ մենք այսպէս կ'ապրինք Սուրիայի եւ Լիբանանի մէջ» կեզրակացնէ պարոն նախագահը:

(78)

Կլենտէյլ եմ եւ կէսօրին զարմիկներուս հետ իտալական ճաշարան մը կ'երթանք:

Իրիկունը լիբանանահայ բարեկամի մը աղջիկն ու նշանածը զիս ընթրիքի հրաւիրած են: Նշանածն ալ լիբանանահայ ընտանիքի մը զաւակն

է, որուն նոր պիտի ծանօթանամ: Կու գան եւ զիս զարմիկիս Իկըլ Ռագի բնակարանէն կ'առնեն եւ... զարմանալի՝ խոփ-խոշոր Կլենտէյլի մէջ նոյն իտալական ճաշարանը կը տանին: Անշուշտ, ես բան մը չեմ ըսեր. սակայն հազիւ նստած եւ մի քանի բառ փոխանակած ենք, սպասեակը կը մօտենայ եւ ինծի ակնարկելով կ'ըսէ. «Այնպէս կ'երեւի, որ վարդապետը մեր ճաշարանը շատ հաւնած է. նոյն օրը կէսօր եւ իրիկուն մեր քովը կու գայ. շատ ուրախ եւ հպարտ ենք»: Հիրընկալներս իրար կ'անցնին: «Սրբազա՛ն, ելէք ուրիշ ճաշարան երթանք», կը պնդեն: Այս խայտառակը ի՞նչ պետք ունէր բերանը բանալու, կը մտածեմ, եւ կ'ըսեմ. «Ինչո՞ւ ուրիշ ճաշարան երթանք. կարելորդ միասին ըլլալն է: Հայտէ՛ ապսպրենք եւ մեր գրոյցը շարունակենք»: Կը համաձայնին: Ես ապուր եւ կէսօրուան ձուկէն կ'ապսպրեմ: Այս անգամ ալ սպասեակը երկրորդ ակնարկութիւն մը կը կատարէ. «Ո՛չ միայն մեր ճաշարանը շատ սիրեցիք, այլ՝ նաեւ մեր այս յատուկ ճաշատեսակը»: Դանակը ոսկորին հասած նկատելով, յանդիմանական շեշտով կ'ըսեմ իրեն. «Կը խորհիմ, որ ձեր ակնարկութիւնները մասնագիտական սահմանները անցան: Կը նախընտրենք, որ ուրիշ անձ մը սպասարկէ մեզի: Շնորհակալութիւն եւ երթաք բարով»: Մեղանակիցներս կը գոչեն. «Հիմա եղաւ, սրբազա՛ն. enough is enough», եւ հաճելի ընթրիք մը կ'ունենանք:

(79)

Տիրայր արք. Փանոսեան Գամիշլիի առաջնորդական փոխանորդ է եւ սրբոց Վարդանանց տօնին առթիւ կը պատարագէ եւ կը քարոզէ: Քարոզի պահուն ժամկոչը իր գործերուն ետեւէն է (ածուխը պատրաստել, մոմերը փոխել եւ այլն) եւ անդադար կ'երթայ-կու գայ ու կը մտնէ-կ'ելլէ: Սրբազան հայրը կ'ընդհատէ քարոզը, ժամկոչը քովը՝ խորանին վրայ կը կանգնեցնէ եւ խօսքը հաւատացեալներուն ուղղելով կ'ըսէ. «Գիտէ՞ք ինչու Վարդանանց պատերազմը պարտուեցանք. որովհետեւ բոլոր հայ զինուորները փոխանակ զօրավար Վարդան Մամիկոնեանին մտիկ ընելու՝ մեր ժամկոչ աղբարին պէս պատերազմի դաշտին վրայ միայն կ'երթային-կու գային». ապա, ժամկոչը վար՝ դասը կը դրկէ յանձնարարելով. «Հիմա վար իջիր, խելօք մը նստիր դպիրներուն քովը եւ քարոզը մտիկ ըրէ», ու կը շարունակէ քարոզը:

Ամառ է: Տիրայր արք. Փանոսեան ամեն երեկոյ առաջնորդարանին բակը կը նստի եւ մի քանի հայորդիներ կու գան ու իր հետ հինէն-նորէն կը զրուցեն: Սրբազան հայրը կը նշմարէ, որ իր առանձին եղած ատենը, միշտ նոյն ժամուն, երեկոյեան ժամը 5-ի շուրջ, մէկը կու գայ, գլուխը դարպասէն ներս կը մտցնէ, արագ աչք մը կը պտտցնէ եւ կը մեկնի: Այսպէս ամբողջ շաբաթներ: Սրբազանը կանդրադառնայ, որ այս անձը միայն կրնայ գաղտնի ոստիկան մը ըլլալ: Օր մըն ալ սրբազանին համբերութեան բաժակը կը յորդի: Մարդը հագիւ գլուխը դարպասէն ներս մտցուցած, սրբազանը զինք իր քով կը կանչէ: Մարդը չի՛ կրնար խոյս տալ եւ կու գայ: Սրբազանը մարդուն կըսէ. «Մինչեւ սա դիմացի պատը գնա եւ ետ քովս եկուր, հաճիս»: Մարդը կ'երթայ եւ ետ կու գայ: «Նայի՛ր, բարեկա՛մ, ինչպէս որ այդ ճերմակ պատին վրայ ոչ մէկ բիծ տեսար, բոլոր հայերուն եւ իմ վրաս ալ ոչ մէկ բիծ կը տեսնես. հոս գալով-երթալով պարապի ժամանակ մի՛ անցըներ. մեր բոլորին *տոսիէները* մաս-մաքուր են» կ'եզրակացնէ սրբազանը: Գաղտնի ոստիկանը անգամ մըն ալ չ'երեւիր առաջնորդարանին բակին կողմերը...:

(80)

Անթիլիասի մայրավանքի բարապան Թորոս Հելվաճեանն է պատմողը. «1980-ին, Անթիլիասի մէջ, Լիբանանի թեմի Կիրակնօրեայ վարժարաններու վկայականներու բաշխումի հանդէսը տեղի կ'ունենայ Գարեգին Բ. արքեպիսկոպոսի հովանաւորութեամբ: Երբ անունս կը կարդացուի, վեհափառ հայրապետին սուրբ աջը կը համբուրեմ, վկայականս կը ստանամ եւ տեղս պիտի վերադառնամ, նորին սրբութիւնը քաղցր ժպիտով հարց կու տայ ինծի. «Տղա՛ս, դպրեվանք կու գա՞ս»: «Մամայիս պէտք է հարցնեմ, վեհափա՛ռ տէր», կը պատասխանեմ: «Շա՛տ լաւ. հարցուր եւ յետոյ ըսէ ինծի», կը յանձնարարէ: Տունին մէջ առաջին հարցումս կ'ըլլայ. «Մամա՛, կը ձգե՞ս որ կարդալու համար դպրեվանք մտնեմ»: Մայրս հարց կու տայ. «Օղղը՛ւ, դպրեվանք ի՞նչ է»: «Գիշերօթիկ եկեղեցի է», կը պատասխանեմ: «Ո՛չ, ո՛չ. ես չեմ դիմանար», ըսելով՝ փափաքս դանակի պէս կը կտրէ: Անշուշտ ես անմիջապէս կը հասկնամ, որ գլխաւոր պատճառը իր չդիմանալը չէր, այլ՝ աղքատութիւնը. այսպէս

կամ այնպես ուսումնա պիտի ընդհատուէր եւ ես գործի ասպարէզ մտնէի կարիքաւոր ընտանիքիս օգնելու համար:

Տարիները անցան եւ 6 փետրուար 2002-ին փոխան դպրեւանքի՝ որպէս բարապան Անթիլիասի մայրավանք մտայ եւ ահաւասիկ մինչեւ այսօր ձեզի հետ եմ...»:

(81)

1981-ին նոր արեղայ ձեռնադրուած եմ եւ ազգականի մը աղջկին սուրբ պսակին կը հրաւիրուիմ Պուրճ Համուտի Հայ աւետարանական եկեղեցին: Հարսը առաքելական է, Լիբանանէն, փեսան աւետարանական է, Սուրիայէն: Եկեղեցին լեցուն է ինիսուն առ հարիւր առաքելականներով: Առաջին անգամ ըլլալով հայ աւետարանական եկեղեցի մը կը մտնեմ: Երեք պատուելի բազմած է բեմին վրայ: Պատուելիներէն մին, կերելի հովին է, զիս կը հրաւիրէ որ իրենց կողքին աթոռ մը գրաւեմ եւ աղօթքին մասնակցիմ: Շնորհակալութիւն կը յատնեմ եւ կըսեմ, թէ երբ իրենք աւարտեն իրենց բաժինը ես ալ աղօթք մը կընեմ, եւ տեղս կը նստիմ: Ամեն բան կը վերջանայ եւ իմ կարգս կու գայ: Ոտքի կելլեմ, բեմին մէջտեղը կու գամ, պարեգօտիս գրպանէն ձեռաց խաչս կը հանեմ, ձեռքով նշան կընեմ, որ ժողովուրդը ոտքի ելլէ, «Պահպանիչ»-ով կօրհնեմ նորապսակ ամուլն ու հարսնետրները. ժողովուրդին մեծասնութիւնը կը խաչակնքէ, դէպի պատէն կախուած մեծ խաչը կը դառնամ, ենթադրաբար արեւելք, եւ «Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն», ըսելէ ետք կը սկսիմ «Հայր մեր»-ը երգել, որուն հարսնետրները եւս կը միանան: Ապա «Օրհնեալք եղերուք»-ով վերջին օրհնութիւնը կը բաշխեմ եւ հաւատացեալները երկնային խաղաղութեամբ իրենց տունները կը ճամբեմ: Հարսնետրներուն մեծասնութիւնը դարձեալ կը խաչակնքէ եւ բարձրաձայն ու գոհունակ «Օ՛ ֆ» մը յայտարարելով դուրս կելլէ եկեղեցիէն...:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն, երբ ամեն քանի սուր տագնապ կայ, Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութիւնը Անթիլիասի մայրավանք հաւաքուած է՝ Միաբանական ընդհանուր ժողովի համար: Մեզի հետ է նաեւ ամերիկեան կենցաղային հանգստաւէտ պայմաններու մէջ երկար տարիներ ապրած ու միաժամանակ զուարթախօս Սմբատ արք. Լափաճեան, որ ժուժկալ եւ վանական խմոր ունեցող Արտաւազդ արք. Թրթռեանին հետ հետեւեալ խօսակցութիւնը կ'ունենայ.

- «Սրբազան եղբայր, հացը ինչպէ՞ս կ'ապահովէք ամեն օր»:

= «Մի քանի երիտասարդ միաբան եւ տիրացու հոս, վանքին մօտիկ փութին առջեւ կարգի կը սպասեն եւ մեզի բաժին հասնող հացը կ'առնեն՝ կը բերեն, մենք ալ կ'ուտենք»:

- «Մեր քովը հացն ալ, միսն ալ, պտուղն ալ, ես ինչ գիտնամ, ինչ որ ուզես՝ *սուփըրմարքէթ* կ'երթաս, *տալերը* կու տաս, ուզածիդ չափ կ'առնես, դուրս կ'ելլես»:

= «Այո՛, դո՛ւք նոր Աւետեաց երկիրին մէջ կ'ապրիք: Իսկ *տալեր* չունեցողն ալ անօթի-ծարաւ փողոցը կը պառկի եւ հինգ-տասը *սէնթ* կը մուրայ»:

- «Ա՛յդ ալ ճիշդ է: *Օթոներուն պենզինը* ինչպէ՞ս կ'ապահովէք կոր»:

= «Հացին պէս: Տղաքը *պենզինի* կայարաններուն առջեւ կարգի կը սպասեն եւ 10, 20, 30 լիթր *պենզինի* իւրաքանչիւր ինքնաշարժի իրաւունքը կը լեցնեն»:

- «Ուրեմն աս ալ այս տեսակ պատմութիւն: Մերինները չլսեն. չեն կրնար պատկերացնել: Մեր քով *օթոդ* կը կեցնես, ուզածիդ չափ *պենզին* կը լեցնես, կը քշես-կ'երթաս: Իսկ ելեկտրականութեան չըլլալը՝ բնաւ խելքիս չի՛ պառկիր կոր. իրիկունները մոմ կը վառենք կոր. հապա եթէ մէկը մոռնայ եւ քնանա՞յ. հրդեհ պիտի ելլէ: Իսկ լսեցի, որ դպրեվանեցիները *լիքսի* տակ սերտողութիւն կ'ընեն կոր. *չոճուխներուն* աչքերուն մուխը պիտի մարի»:

= «Այո՛. ելեկտրականութեան հարցը շատ բարդ է: Խոհանոցի մեծ սառնարանը բան չենք կրնար պահել: Ամենօրեայ ուտելիքը մատակարարը օրը-օրին պէտք է գնէ: Ի՞նչ ընենք: Այս պայմաններուն պիտի յարմարինք: Աստուած աւելի վատէն պահէ»:

- «Բայց, ըսեմ ձեզի, ինծի համար ամենէն դժուարը ջուրի հարցն է: Հասած օրերնիս մատակարարապէս հայր սուրբը յանձնարարեց, որ հետեւինք, եւ երբ ծորակէն ջուր գայ՝ ջուրը դոյլին մէջ լեցնենք եւ խնայողութեամբ գործածենք: Ես Լոս Անճելըս օրը երկու անգամ կը լոգնամ: Դոյլ մը ջուրը միայն մատներս լուալու կը բաւէ: Դուք այսքան ատեն է ինչպէ՞ս կ'ընէք կոր»:

= «Կամ մատակարարապէս հայր սուրբին ըսածը պիտի ընես ու խնայողութեան վարժուիս, եւ կամ ալ միայն մատներդ հոս պիտի լուսա եւ լոգանքդ երբ Լոս Անճելըսդ վերադառնաս հոն պիտի առնես...», կէզրափակէ Արտաւազդ սրբազան:

(83)

Հայ գրողներու համագումարին առթիւ, Հայաստանէն Անթիլիասի մայրավանք կը ժամանեն նաեւ Կարպիս Սարկաւազեանն ու Երուանդ Տէր Խաչատրեանը: Երկու բարեկամ մտաւորականներ, որոնց հետ միշտ հոգեհարազատ եղած եմ եւ յաճախ ու անսպառ ժամեր զրուցած ենք՝ մեզի հետ ունենալով գեղանկարիչ Յակոբ Յակոբեանն ու արուեստաբան Շահէն Խաչատրեանը:

Քաջ գիտնալով, որ Յունաստան ծնած եւ Կիպրոսի Մելգոնեան ուսած ու Ս. Մակարի վանքը ամառնային բանակումներ անցուցած Կարպիսը յատուկ սէր ունի ձիթապտուղի, ձիթախլղի եւ ձուկի հանդէպ, *սուփրըմարքէթ* մը կը մտնենք եւ ձիթապտուղ ու ձիթախլղ կը գնենք, ապա ծովահայեաց ձուկի ճաշարան մը կ'երթանք: Կարպիսը այնքա՛ն տարուած է Լիբանանի ծովով, իսկ ես ալ՝ իր պատմած պատանեկան ուսանողական յուշերով, որ գրեթէ մոռցած ենք Երուանդին ներկայութիւնը. իսկ ինք նոյնիսկ չուզեր խանգարել մեր մտերմիկ զրոյցը եւ իր հերթին կը վայելէ ծովային տեսարանը: Ի վերջոյ հայութեան, հայ գրականութեան ու Հայաստանի ընդհանրական հարցերուն մասին կը սկսինք խօսիլ, եւ Երուանդը եւս կը միանայ մեզի: Մէկ կողմէն կ'ընթերցենք եւ միւս կողմէն կը շարունակենք մեր եռաձայն զրոյցը, որ կ'աւարտի պաղպաղակով եւ լիբանանեան սուրճով:

Մի քանի տարի ետք, Երուանդը դարձեալ Լիբանան է՝ հայագիտական դասախօսութիւններ տալու համար: Ինչպէս միշտ, այս անգամ եւս ան Անթիլիաս կը մնայ: Բարեկամ մը, որ Երուանդին նոր պիտի ծանօթանայ՝ մեզ ընթրիքի կը հրաւիրէ, եւ կը փափաքի, որ ես ընտրեմ ճաշարանը: Ես ալ նկատի ունենալով, որ Հայաստանի մէջ աղի ջուրի ձուկը յարգի կ'ըլլայ եւ յիշելով Կարպիսին ու Երուանդին հետ մեր ձուկի ճաշարան երթալն ու համով-հոտով ձուկ ուտելը, ձուկի ճաշարան մը կ'ընտրեմ: Որոշուած իրիկունը Երուանդը, բարեկամս, տիկինը եւ ես կը հասնինք ճաշարան: Կաւետեմ Երուանդին. «Երբ Երեւան վերադառնաս, Կարպիսը պիտի նախանձի քեզի. որովհետեւ այսօր մեր ընթրիքը միայն ձկնեղէն պիտի ըլլայ»: Կը տեսնեմ, որ մեր մարդը բնաւ խանդավառ չ'երեւիր. «Թերեւս դասերէն յոգնած է», կը մտածեմ: Սեղանը կը լեցուի, գաւաթներն ալ կը լեցուին, կենացներն ալ կը խմուին, սակայն իմ գիտցած չէն Երուանդս չէ քովս նստողը: Ընթրիքի աւարտին, ընկերոջս տրամադրութիւնը քիչ մը կը բարեփոխուի, կը խօսի, կը սրամտէ եւ հիւրընկալները գոհ կը մնան:

Երբ մայրավանք կը վերադառնանք, Երուանդ կ'ըսէ ինծի. «Սրբազան ճան, ես քեզ ի՞նչ վատութիւն եմ առել, որ ինձ կրկնակի խաչելութեան արժանացրիր. մի անգամ Կարպիսի հետ, մի անգամ էլ հիմա: Ախր ես ձուկ չեմ սիրում. ձուկ չեմ կարող կուլ տալ: Ասեցի երեւի *հու՛մոս*, պանիր, ես իմ եղպիսի մի բան կը լինի, *հռչա* կը գնամ: Մէկ էլ դու՝ «Սրա համը նայիր». մէկ էլ կինը՝ «Ասիկա շատ համով է». մէկ էլ մարդը՝ «Վստահ եմ ասկէ առաջ ասոր համին չեք նայած»: Աբխաղում աղա եղանք, մնացինք, ա՛յ մարդ: Մէկ էլ նայում եմ միւս սեղաններին, մարդիկ համով-համով խորովածները ուտում են: Ոչինչ: Սրանից էլ պրծանք: Միրգը եւ քաղցրաւենիքը ընտիր եւ համեղ էր. դուք ասում էք անուշ էր: Յամենայնդէպս, անմոռանալի գիշեր էր: Շնորհակալութիւն»: «Ա՛յ մարդ, ասէիր, քեզ համար խորոված կը պատուիրէինք. բարեկամիս էլ աւելի էժան կը լինէր. էլ ո՛չ մի ձուկ քեզ. ձուկը՝ մեզ, մուկը՝ քեզ...» ըսելով, կատակի կու տամ ես, եւ գիշեր բարի մաղթելով մեր սենեակները կ'երթանք:

(84)

Նիւ Ճըրզիցի Սամոն հպարտութեամբ կը պատմէ ընկերներուն.
«Այսօր Արամ կաթողիկոսը Լիբանանէն *թելեֆոնով* հետս խօսեցաւ»: «Ի՞նչ
ըսաւ», կը հարցնեն: «Ո՞վ է խօսողը: Եղբայրս՝ Յովիկը կրնա՞ս տալ», ըսաւ:
Սամոն Յովիկին հետ նոյն գրասենեակը կ'աշխատի եւ պատահածը այն է,
որ Յովիկին տեղ ինք պատասխանած է վեհափառին հեռախօսագանգին...:

(85)

2005-ի ամառը երեք ընկեր մէկ շաբթուան արձակուրդով առաջին
անգամ ըլլալով Երեւանէն Պէյրութ կու գան եւ որպէսզի կարենան թէ՛ ծովը
եւ թէ՛ ճաշարանները դիւրութեամբ վայելել՝ ինձմէ հայ շարժավար մը կը
խնդրեն: Ես ալ հայ երիտասարդ մը՝ Պետիկը կը յանձնարարեմ: Սակայն
գործս այսքանով չ'աւարտիր: Ամեն անգամ, որ իրենց հետ չեմ կրնար
ըլլալ՝ կը հեռախօսեն ինծի որպէսզի իրենց ըսածը հայ երիտասարդին
«թարգմանեմ»: Կը բաւականանամ երկու օրինակով: Առաջին՝ ծով եւ լո-
ղաւազան կ'ուզեն երթալ եւ Պետիկին կ'ըսեն. «Կարո՞ղ ես մեզ *պասելին*
տանել»: Պետիկ բնաւ Հայաստան չէ այցելած եւ *պասելին* բառը չէ լսած:
Պետիկին կը բացատրեմ, որ *պասելինը* մեր *բիսինն* է: Երկրորդ՝ տղաքը
անօթի են եւ կը փափաքին ճաշարան մը երթալ: Կը թուեն իրենց լսած
նշանաւոր ճաշարաններուն անունները՝ «Մըհաննա», «Հալապի», «Պըրճ-
ըլ-Համամ», եւ կ'ակնկալեն, որ Պետիկը այս ճաշարաններէն մին տանի
զիրենք: Պետիկ իւրաքանչիւրին համար ալ «Աղուոր է» կը պատասխանէ,
մինչ իրենք «Ահաւոր է» կը հասկնան եւ անճրկած ինծի կը հեռախօսեն
ըսելով. «Սրբազա՛ն ջան, սոված մեռանք. չենք իմանում որտեղ հաց պիտի
ուտենք...»:

(86)

1990-ին, երբ Վանգուվըր հոգեւոր հովիւ եւ համալսարանի ուսանող
եմ, ծնողքս քովս կը հաստատուին: Օր մը զիրենք *սուշիի* ճաշարան կը
տանիմ: Հայրս ամեն ճաշ մեծ հաճոյքով կը փորձէ: Մայրս ալ, ընդհա-

կառակը, բան չ'ուտեր եւ կը նախընտրէ տուն վերադարձէն ետք հաց-պանիրով գոհանալ: Այս ճաշարանը եզակի է: Բոլոր ճաշողները կը նստին *պանի* մեծ սեղանին շուրջ եւ նաւակներու մէջ դրուած պնակներով *սուշիի* զանազան տեսակներ առջեւէդ կ'անցնին. ուզածդ եւ ուզածիդ չափ կ'ուտես, եւ աւարտին սպասեակը կերած պնակներդ կը հաշուէ ու ըստ այնմ քեզմէ համապատասխան գումարը կը գանձէ: Ճաշատեսակի միակ բացառութիւնը այն է, որ նաեւ հաւի թելերու պնակ մըն ալ կայ *սուշիներու* այս բազմազանութեան մէջ: Ծնողքիս կը բացատրեմ այս բոլոր մանրամասնութիւնները: Հայրս եւ ես մեծ ախորժակով կը սկսինք ուտել, մինչ մայրս շուրջը կը դիտէ եւ ուտողներուն ախորժակին վրայ կը հիանայ: Մէյ մըն ալ կը տեսնեմ, որ կամաց-կամաց մայրս կը սկսի հաւի թելերու պնակները իր դիմաց դիզել: Կ'ուրախանամ, որ վերջապէս ինք ալ կը մասնակցի մեր ճաշին:

Երկու շաբաթ կ'անցնի ծնողքիս *սուշիի* առաջին արկածախնդրութենէն, երբ մայրս ինծի հարց կու տայ. «Ե՞րբ նորէն *սուշի* ուտելու պիտի երթանք»: Մինչ այդ ամբողջ կերածը միայն հաւի թել է...:

(87)

1988-ին Վանգուվըրէն Անթիլիաս եկած եմ Միաբանական ընդհանուր ժողովին մասնակցելու համար: Խաժակ վրդ. Յակոբեանն ալ հոս է Թորոնթոյէն:

Վեհարանի սպասաւոր Յարութը եղբայր մը ունի Թորոնթօ եւ խնդրած է հայր Խաժակէն, որ հետը նամակ մը տանի եղբօրը եւ անձամբ յանձնէ գայն: Հայր սուրբը «Միրով» պատասխանած է: Սակայն Յարութ մոռցած է նամակը հայր Խաժակին տալու եւ ինծի կը մօտենայ ու կ'ըսէ. «Հա՛յր Նարեկ, լսեցի, որ հայր Խաժակը երէկ առտու Թորոնթօ ճամբորդեր է: Այս նամակս եղբայրիս պիտի տար, կրնա՞ս դուն տալ»: «Միրով, *մըալլէմ* Յարո՛ւթ. հազիւ Վանգուվըր հասնիմ նամակատուն կը յանձնեմ եւ երկու օրէն եղբայրդ կը ստանայ նամակը», կը պատասխանեմ: «Ի՞նչ», կը հարցնէ զարմացական, եւ կը շարունակէ. «Դուն իրեն *թելեֆոն* ըրէ, ինքը կու գայ քովէդ կ'առնէ»: «Յարո՛ւթ», կ'ըսեմ, «Դուն Քանատան Լիբանա՞ն կը կարծես կոր. Վանգուվըրէն Թորոնթօ վեց ժամ է»: «Վնաս չունի», կը յամառի, «Եղբայրս կը քշէ, կու գայ»: «Վեց ժամ է օդանաւով», կ'ըսեմ: Վերջապէս

տեղի կու տայ, բայց նաեւ կը նեղուի, որ պիտի չկարենանք եղբայրն ու ես տեսնուիլ եւ գոնէ սուրճ մը խմել. կը մերժէ նամակը յանձնել: «Ես Թորոնթօ գացող մը կը գտնեմ», կը յարէ եւ կը քալէ...:

(88)

Արցախի Ազգային ժողովի շէնքին մէջ Արցախի նուիրուած համա-
ժողովի մը կը մասնակցիմ՝ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը
ներկայացնելով: Կողքիս նստած է Լիբանանէն նոյն տարին պետական
երեսփոխանական ընտրութիւններուն մասնակցած եւ չընտրուած հայ
թեկնածու մը, որ ինծի կ'ըսէ. «Է՛հ, Լիբանանի *բարլըմանին* մէջ չկրցանք
նստիլ, գոնէ հոս նստեցանք...»:

(89)

2002-ին եպիսկոպոսական ձեռնադրութեանս առթիւ հայրս եւ մայրս
Մոնթրէալէն Անթիլիաս կու գան: Արամ Ա. կաթողիկոս կ'ընդունի մեզ եւ
խօսակցութեան ընթացքին՝ հօրս կ'ըսէ. «Տիրահա՛յր, աւելի տիրամայրը կը
խօսի կոր քան թէ դուն, մի՞շտ այդպէս է»: Հայրս կը պատասխանէ. «Շատ
խօսողը՝ շատ կը սխալի, վեհափա՛ռ տէր»: «Շատ ճի՛շդ ըսիր», կը հաս-
տատէ վեհափառը:

(90)

Գարեգին Բ. կաթողիկոսն է պատմողը. «Գիտե՞ք մենք ինչու արա-
բերէն չսորվեցանք դպրեվանքին մէջ: Արաբերէնի ուսուցիչ մը ունէինք, որ
ֆէս կը գործածէր: Հազիւ դասարան մտած՝ ֆէսը կը հանէր, գրասեղանին
վրայ կը դնէր եւ կը մրափէր: Մենք ալ գիրք կը կարդայինք կամ ուրիշ դաս
կը սորվէինք: Օր մըն ալ յանկարծ արթնցաւ եւ ըսաւ. «Դուք օր մը *ապունա*
(քահանայ) պիտի ըլլաք, ըսէք նայիմ ի՞նչ է *ապունային* յոգնակին»: «Արա-
բագէտ»-ին մէկը պատասխանեց. «*Լէյմուն-լէյմուն-լէյմուն՝ լէյմունաթա. ապունա-ապունա-ապունա՝ ապունաթա...*»:

Հինգ տարեկան եմ եւ հօրենական մեծ մայրս կորոշէ, որ դպրոց չունեցած օրերս եւ կիրակիները մեր թաղի Սրբոց Վարդանանց եկեղեցիին մէջ շապիկ պիտի հագնիմ: Կը դիմէ ժամկոչին՝ Միքայէլ Պայրագտարեանին, որ կըսէ, թէ եկեղեցին շապիկը եւ ժամագիրքը կու տայ, իսկ մենք կաշիէ առջելը գոց հողաթափը պէտք է բերենք: Մեծ մայրս զիս աւանդատուն կը տանի եւ հասակիս յարմար շապիկն ալ կ'ապահովէ:

Կիրակի օր մեծ խանդավառութեամբ եւ նոյնիսկ ժամերգութենէն կէս ժամ առաջ մեծ հօրս եւ մեծ մօրս հետ եկեղեցի կը հասնինք, եւ նոր հողաթափս *նէյլոն* տոպրակի մը մէջ դրած թոշկոտելով աւանդատուն կը մտնեմ: Ժամկոչը եւ մի քանի դպիրներ եկած են արդէն: Շապիկս ու հողաթափս կը հագնիմ եւ ժամագիրքս բռնած կը սպասեմ եկեղեցի մտնելու հրահանգին: Քիչ ետք նաեւ կը հասնի դպրապետ Եփրեմ Քենտիրճեանը, որ զիս՝ նորեկս տեսնելով ժամկոչին հարց կու տայ, թէ ո՞վ կըլլամ: Ժամկոչը «Մայրիկ Հայկուհի Ալեմէզեանին թոռնիկն է», կըսէ: Իսկ դպրապետը յանկարծ հողաթափիս կը նայի եւ ինքզինքէն ելած խստութեամբ կ'արգիլէ ինծի եկեղեցի մտնել, եւ կը հրահանգէ. «Շուտ շապիկդ հանէ՛ եւ գնա՛ *նենէիդ* քովը նստիր: Կապոյտ հողաթափով չես կրնար դպրաց դասին մաս կազմել»: Ես կ'անձրկիմ: Ժամկոչը յանցաւոր կը զգայ, որ մոռցած է մեծ մօրս ըսելու, թէ սեւ հողաթափ պէտք է բերել եւ դպրապետէն կը խնդրէ, որ այս կիրակի բացառութիւն ընէ եւ զիս՝ փոքրիկը չխրտչեցնէ: Դպրապետը, ընդհակառակը, աւելի կը բորբոքի եւ զիս գրեթէ կը վտարէ աւանդատունէն: Մեծ մօրս քով կ'երթամ, որ առաջին շաբթի *մինտերին* վրայ իր մնայուն տեղը գրաւած է եւ երկիւղածութեամբ ժամերգութեան կը մասնակցի: Հեկեկալով կը պատմեմ եղելութիւնը: «Հիմա աղօթէ Աստուած *պապային*, յետոյ տունը կը խօսինք», կըսէ եւ ինծի շաքար մը կու տայ:

Երբ տուն կը հասնինք, «Անգամ մըն ալ եկեղեցի պիտի չերթամ եւ ատ մարդուն (դպրապետին) երեսը պիտի չտեսնեմ» կըսեմ, եւ հողաթափս իրեն կը վերադարձնեմ: Ան հողաթափս ինծի կու տայ եւ կըսէ. «Տղա՛ս, աս կապոյտ *բապուճը* տունը կը հագնիս: Ես վաղը քեզի եկեղեցիին համար սեւ *բապուճ* կ'առնեմ եւ կ'երթաս աղուոր-աղուոր կը հագնիս: Տե՛ս, դուն շապիկ պիտի հագնիս ըսելով Աստուած *պապան* քեզի երկու հատ *բապուճ* տուաւ: Դուն դպրապետին համար եկեղեցի պիտի չերթաս, Աստուծոյ համար

պիտի երթաս: Ես ալ գիտեմ եւ ամեն մարդ կըսէ կոր, որ մեր դպրապետը շատ ջղային է, բայց մէկ բան ալ ճիշդ է, որ երբ շատեր կիրակի առտունները պառկած են, ինքը եկեղեցին է»: Ահա այսպիսի շինիչ մթնոլորտի մէջ կը կազմաւորուի եւ կը ծաղկի հայ քրիստոնէայ նոր սերունդը....:

(92)

Նիւ Ճըրզիի Յովնանեան վարժարանի դասերը կաւարտին եւ աշակերտները տուն երթալու փոխարէն դպրոց կը մնան՝ որպէսզի ամառներջի հանդէսի փորձերը կատարեն: Հակառակ անոր, որ մէկ օր առաջ յանձնարարուած էր ճաշ բերել, ուսուցչուհին կը փափաքի նաեւ *բիցցա* ապսպրել եւ հարց կու տայ. «Ո՞վ անօթի է»: Բոլորը ձեռք կը բարձրացնեն բացի երկու հայաստանցի եղբայրէ, որոնք անօթի փորով երեք ժամ փորձերուն կը մասնակցին եւ տուն երթալէն ետք իրենց մօր կը յայտնեն, թէ շա՛տ սոված են, որովհետեւ ուսուցչուհին «անօթին» «անօղի» հասկցած էին...:

(93)

Ամառը, բարեկամի մը հետ Հալէպ ենք եւ մեր ընկերներէն մին՝ Տարօնը մեզ ֆուլի նախաճաշի կը հրաւիրէ Բերդին տակը գտնուող բացօթեայ ճաշարանը: Հազիւ նստած, մէջ մըն ալ կօշիկ ներկողը կու գայ, մեզի հողաթափեր կու տայ եւ մեր կօշիկները կ'առնէ-կ'երթայ: Ֆուլի պնակները իրենց առնչակից ուտելիքներով կը զարդարեն մեր սեղանը, եւ մեր Տարօնը հինգ վայրկեան ետք կը կանչէ սպասեակը «*Սալլըհա*» գոչելով, որպէսզի մեր ֆուլի պնակներուն ձիթաիւղը աւելցնէ: Մեր պնակները կը սկսին փայլիլ: Քիչ ետք նաեւ կը հասնին մեր փայլուն կօշիկները...:

(94)

Գարեգին Բ. կաթողիկոս հովուապետական այցելութեամբ Հալէպ կը ժամանէ: Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցիին մէջ կանոնական աղօթքէն ետք, խումներամ հաւատացեալներ աջահամբոյրի համար կը բարձ-

րանան առաջնորդարանի դահլիճը: Վեհափառ հայրապետը կը բազմի գահին վրայ. անոր աջին՝ առաջնորդ Սուրեն արք. Գաթարոյեան ու ձախին՝ Վարդան արք. Տէմիրճեան: Դահլիճը մէկ մուտք ունենալով՝ ժողովուրդը շարք կազմած կը յառաջանայ եւ կ'անցնի Վարդան սրբազանին առջեւէն, կը քալէ մէջտեղէն եւ վեհափառին սուրբ աջը կը համբուրէ, ետ աջ կու գայ եւ Սուրեն սրբազանին աջը կը համբուրէ, ապա ետ ձախ կ'երթայ եւ Վարդան սրբազանին աջը կը համբուրէ, եւ նորէն վեհափառին ու Սուրեն սրբազանին առջեւէն անցնելով կը փորձէ ներս մտնողները չխանգարել եւ դուրս ելլել: Կարճ խօսքով, կատարեալ տակնուվրայութիւն կը ստեղծուի: Վեհափառը անհամբեր կը դառնայ եւ որպէս լուծում կը հրահանգէ Վարդան սրբազանին. «Սրբազա՛ն, դուն աջդ մի՛ տար»: Վարդան սրբազան կը հնազանդի, սակայն ժողովուրդը կը շարունակէ նոյն ընթացքը: Վեհափառին բարկութիւնը այն աստիճան կը սաստկանայ, որ Վարդան սրբազան ստիպուած ձեռքը ետ կը պահէ, գլուխը շարժելով կողջունէ իր առջեւէն անցնողները եւ կը սկսի եկողին ըսել. «Համբուրուած համարեցէք...»:

(95)

1997-ին Դամասկոսի մէջ միջեկեղեցական ժողով մը ունինք: Նիւ Ճըրզիէն Անթիլիաս վերադարձէս ետք առաջին միջեկեղեցական ժողովս է: Ամերիկեան ճշդապահութեամբ ժամանակացոյց, օրակարգ, թղթածրար եւ այլն պատրաստած եմ բոլորին համար եւ ճշդուած ժամէն՝ առաւօտեան 9.00-էն 10-ը վայրկեան առաջ արդէն ժողովասրահ կը մտնեմ: Ժամը 9.35 կ'ըլլայ եւ 35 վայրկեան ուշացումով ժողովականներ կը սկսին ժամանել: Տասը ժողովականէն վեցը եկած է: Ես արդէն ջիղերուս վրայ եմ: Փոխանակ, ըստ ժամանակացոյցի, աղօթելու՝ ոմանք սուրճ կամ թէյ կը խմեն, ուրիշներ կը զրուցեն կամ դուրս կ'ելլեն եւ ետ ներս կը մտնեն: Վերջապէս ժամը 9.50-ին ժամը 9.00-ին սկսելիք ժողովը աղօթքով եւ ութը ժողովականով կը բացուի: Հայկական շրջանակի մէջ մենք այս մէկը կը կոչենք «հայկական ժամադրութիւն», իսկ միջեկեղեցական շրջանակի մէջ օտարներ այս մէկը կը կոչեն «*օրթոտոքս* ժամադրութիւն...»:

Աւելի հետաքրքրականը այն է, որ ատենապետը կ'առաջարկէ ժամը 9.50-ին սկսած ժողովին ժամը 10.30-ին դադար տալ: Երբ դադարին ատե-

նապետին ուշադրութեան կը յանձնեմ ժամանակացոյցի ու օրակարգի եւ մանաւանդ ժամը 10.30-ի անտրամաբանական դադարի խախտումը՝ կը բացատրէ, թէ ժողովականներուն մէջ վեց տարիքոտ կայ եւ որովհետեւ ես Ամերիկայէն կու գամ շատ լաւ պէտք է գիտնամ ինչ կը նշանակէ «*nature's call*» (բնութենական կարիք):

(96)

Արտակ վրդ. Մանուկեան որպէս նորընտիր առաջնորդ հազիւ հասած է Թեհրան եւ լծուած թեմը վերակազմակերպելու աշխատանքին: Առաջին հերթին ան կը փափաքի նաեւ ժողովական կեանքը աշխուժացնել եւ երեսփոխանական ժողովի հրաւեր կը խմբագրէ: Գրասենեակին չորս կողմը կը պրպտէ եւ նամակի պահարաններ չի՝ գտներ: Հրաւերը մէկ կողմ կը դնէ եւ պատշաճ կը համարէ նախ Անթիլիաս՝ Զարեհ վեհափառին նամակ մը գրել եւ իր Թեհրան հասնիլը իմացնել: Երբ նամակը պատրաստ կըլլայ, ներքին հեռախօսով քարտուղարին կըսէ, թէ պահարանի մը պէտք ունի: Քարտուղարը կը պատասխանէ, թէ պահարանը շուտով կը բերեն: Քառորդ ժամ կանցնի եւ հայր սուրբը դարձեալ կը կապուի քարտուղարին հետ, որ կը կրկնէ, թէ պահարանը հիմա իր մօտ կըլլայ: Մի քանի վայրկեան ետք, հայր Արտակ փայտեայ պահարանի մը վերի յարկէն աստիճաններուն վրայ *թը/ս-թը/ս* իր գրասենեակի յարկ էջքը կը լսէ եւ ահաւասիկ հագուստի մեծ պահարան մը կը յայտնուի գրասենեակի դուռին առջեւ: «Այս ի՞նչ է», կը հարցնէ հայր սուրբը: «Ձեր ուզած պահարանն է, հայր սուրբ», կը պատասխանեն զայն բերած չորս պաշտօնեաներ: «Ես ի՞նչ պիտի ընեմ այս պահարանը. ետ իր տեղը տարէք», կըսէ հայր Արտակ, «եւ ինծի մէկ տուփ նամակի պահարան բերէք»: «Վա՛յ, հայր սուրբը ծրար է ուզել եւ մենք սխալ ենք հասկացել», կը յարէ պաշտօնեաներէն մին, եւ հարցը կը փակուի:

(97)

Վանգուվըր՝ ընկերս, մայրը, կինը եւ 10 տարեկան տղան շաբաթ երեկոյեան պարսկական ճաշարան մը ընթրիքի կերթան: Տէր եւ տիկին մեծ

մայրիկը եւ թոռնիկը ճաշարանին առջեւ կիջեցնեն, որպէսզի անոնք շատ չքալեն եւ իրենք կերթան ինքնաշարժը կանգնեցնելու տեղ փնտռելու: Մեծ մայրիկը հագիւ ճաշարանէն ներս կը մտնէ, ոտքը կը սահի եւ գետին կիյնայ: Ան ահաւոր ցաւերու մէջ է: Բարեբախտաբար ճաշարանին մօտ հիւանդանոց մը կայ եւ տղան ու հարսը հասնելէն առաջ շտապ օգնութեան անձնակազմը կը հասնի: Նախնական դարմանումը կը սկսին կատարել: Մեծ մայրիկը *ախ-ուխ* ընելով իր կոտորած անգլերէնով կարգ մը հարցումներու կը պատասխանէ եւ թոռնիկին դառնալով կ'ըսէ. «Տղա՛ս, ասոնք երկար ըրին. մնացածներուն ալ դուն պատասխանէ»: Հիւանդապահներէն մին մեծ մայրիկին կը հարցնէ. «Քանի՞ տարեկան ես»: Մեծ մայրիկին տեղ թոռնիկը կը պատասխանէ. «Կարծեմ 70 է»: Մեծ մայրիկը ցաւերուն մէջէն հայերէնով կը յանդիմանէ թոռնիկը. «Տղա՛ս, 70-ը ուրտեղէ՞ն հանեցիր», եւ անգլերէնով հիւանդապահին կ'ըսէ. «Նոր 69 տարեկան եղայ...»:

(98)

2022-ը Սփիւռքի տարի է:

Հայ ընտանիքը խառն ամուսնութեան ուռկանին մէջ բռնուած է՝ Ամերիկաներէն մինչեւ Անթիլիասի քիթին տակ գտնուող Հայ Սփիւռքի բաբախուն սիրտն ու մայրաքաղաքը հանդիսացող Պուրճ Համուտ:

Մի քանի ուրուագծումներ պիտի կատարեմ միայն՝ մնացածին ձեր ուզած անուններն ու քաղաքները կրնաք դնել եւ սխալած չէք ըլլար:

Բարեկամ մը յաճախ կը կրկնէր, երբ զաւակները դեռ փոքր էին. «Օտարը կ'առնեն կոր, գոնէ շնորհքով մէկը թող առնեն»: Իր երեք զաւակներն ալ օտար առին. երեքին սուրբ պսակն ալ Հայ եկեղեցիի մէջ եւ օրհնեցի՝ մի քանի տարի առաջ. մինչեւ հիմա փեսան եւ երկու հարսերը շնորհքով են. չեմ գիտեր եթէ շնորհքով պիտի մնան. ժամանակը ցոյց կու տայ...:

Ուրիշ ընտանիքի մը երեք տղաքը օտար առին եւ ըստ բամբասող հայ լեզուներու՝ երեք հարսերն ալ առաջին օրէն շնորհքով չէին, բայց աւելի քան երեսուն տարիէ ի վեր երեք նորակազմ ընտանիքներն ալ երջանիկ են եւ եօթը զաւակներով բախտաւոր. խեղճ մեծ հայրիկը եկեղեցիի սրահին մէջ մեկուսի եւ գլխահակ կը նստէր, իսկ մեծ մայրիկը կ'ափսոսար. «Ի՞նչ կ'արժէ, հայր սուրբ, երբ թոռնիկներս *«եալքում, եալքում»* ըսելով կը

սիրեմ ու իրենք ասկէ բան չեն հասկնար. համով-հոտով «մանթը» կ'էփեմ եւ ո՛չ իրենք եւ ո՛չ ալ հարսերս բերաննին կը դնեն: Խերով-բարով սա Քանատան եկած չըլլայինք»:

Կիրակի կէսօրէ ետք ընկերոջ մը ընտանիքին կ'այցելեմ, որուն մէկ աղջիկին սուրբ պսակին ներկայ գտնուած եմ մարոնիթ եկեղեցիի մը մէջ եւ «Պահպանիչ»-ով ալ օրհնած հայ-արաբ նորապսակ զոյգը: Տունը լեցուն է հայ եւ արաբ ազգականներով, բարեկամներով եւ խնամիներով: Փեսան յաջող վաճառական է եւ իր ձեռքի հեռախօսով աշխարհի ամեն կողմին հետ կապի մէջ մտած՝ իր գործերուն լծուած է: «Դուք ինծի մի՛ նայիք», ինծի կ'ըսէ արաբերէնով, «ազատ զգացէք հայերէն խօսելու. ես անհանգիստ չեմ ըլլար»: Ի՛նչ ազնուութիւն եւ ազատախոհութիւն...: Նորածին աղջիկ մը ունի զոյգը եւ ընկերոջս կինը կը խնդրէ, որ երեխան օրհնեմ: «Պահպանիչ» մըն ալ երեխային վրայ կ'արտասանեմ: Երեխան գիրկէ-գիրկ կ'անցընեն եւ հայերէն ու արաբերէն չնաշխարհիկ զգուանքներու եւ բարեմաղթութիւններու կ'արժանացնեն: Քիչ ետք տուն կը մտնէ նաեւ մի քանի օր առաջ Լոս Անճելըսէն հասած ընկերոջս աղջիկը եւ անգլերէնն ալ կը խառնուի խօսակցութիւններուն: Ի տես այս բոլորին, ընկերս կ'ըսէ ինծի. «Այս ի՛նչ օրերու հասանք. այս ի՛նչ Բաբելոնի մէջ կ'ապրինք կոր: Ո՞վ գիտէ մեզմէ յետոյ եկողները ի՛նչ պիտի ըլլան...»:

Ընկերներէս մին կը հեռախօսէ. «Սրբազա՛ն, լաւ եւ գէշ լուր ունիմ. ո՞ր մէկը կ'ուզես առաջ լսել»: «Այս օրերուն գէշ լուր լսելէն մեռանք», կը պատասխանեմ, «առաջ լաւ լուրը տուր»: «Գալ շաբաթ իրիկուն, ժամը 8-ին, մեր տունը պիտի գաս աղջիկս նշանելու», կ'աւետէ: «Է՛հ, այս ինչ աղուոր լուր տուիր. ի՞նչ է եղեր գէշ լուրդ», անհամբեր կը հարցնեմ: «Տղան արաբ իսլամ է...», կը պատասխանէ դողդոջուն ձայնով: Ժամանակին արաբ իսլամին ուղղակի «թուրք» կ'ըսէինք...: Հայերուս համար բոլոր իսլամները թուրք էին: Հիմա *քիպարցուցեր* ենք՝ «արաբ իսլամ» կ'ըսենք, սակայն կացութենէն ոչինչ կը փոխուի:

(99)

1983-ին Գարեգին Բ. կաթողիկոս Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի 6-րդ համաժողովին մասնակցելու համար Վանգուվըր պիտի ժամանէ եւ նաեւ հողօրհնէքը կատարէ նոր կառուցուելիք եկեղեցիին ու

հայ կեդրոնին: Արարողութեան յաւելեալ շուք տալու համար՝ առաջնորդ սրբազանը կը հրահանգէ, որ կիրակի կէսօրէ ետք, հողօրհնէքի աւարտին, 12 փոքրիկներ սպիտակ աղանիներ թոցնեն: Կազմակերպիչ յանձնախումբէն անդամ մը յանձն կ'առնէ հաւնոցէ մը աղանիները բերել. սակայն փոխանակ աղանիները կիրակի առտու բերելու, շաբաթ իրիկուն *քարթոնէ* տուփի մէջ կը դնէ եւ ինքնաշարժին սնտուկը կը տեղաւորէ՝ առ ի պատրաստութիւն կիրակի օրուան: Այլ տնօրինումներու կարգին, առաջնորդ սրբազանը աղանիներուն մասին ալ կը հարցնէ եւ կը պարզուի, որ խեղճ աղանիները սատկեր են: Զանոնք բերողը ինքզինք կ'արդարացնէ ըսելով. «Ի՞նչ կ'ըլլայ, պիտի չուտէիք *էա*, միայն օդը պիտի թոցնէիք. *չօճուխները* նորէն օդը թող նետեն, աղանիները վեր կ'ելլեն եւ յետոյ վար կ'իջնեն: Ես շուտ մը կը հաւաքեմ, *զիպիլը* կը թափեմ. բան մըն ալ յայտնի չ'ըլլար»: Հապա՝ ասանկ ալ կ'ըլլայ, անանկ ալ կ'ըլլայ...

(100)

1986-ին նոր ժամանած եմ Վանգուվըր եւ երկու շաբաթ յետոյ դրացի Ալպերթա նահանգի Էտմընթըն քաղաքը կը հրաւիրուիմ հայ գոյգի մը սուրբ պսակը օրհնելու: Տակաւին չեմ կողմնորոշուած: Հովուական առաջին ծառայութիւնս է: Առաջին անգամ մայրավանքէն հեռու եմ: Թէ՛ եկեղեցիին եւ թէ՛ տունիս մէջ ամեն բան ես պէտք է ընեմ: Հիմա ալ այս սուրբ պսակը ելած է, Վանգուվըրէն օդանաւով մէկ ժամ հեռու, երգին բառերով՝ «Օտար, ամայի ճամբէքի վրայ», վարձուած յոյն ուղղափառ եկեղեցիի մը մէջ, առանց սարկաւագի, առանց լուսարարի, առանց դպրաց դասի, առանց երգեհոն նուագողի...: Աստուած ծ իմ, ինչպէ՞ս պիտի ընեմ այս բոլորը:

Սուրբ պսակէն մէկ օր առաջ կը ծանօթանամ 20–25 տարեկան ինծի տարեկից փեսացուին եւ հարսնցուին, որոնք ամչկոտ կանգնած են եւ պրկուած պահը թուլցնելու համար՝ գրեթէ միաբերան կ'ըսեն. «Գիտէ՞ք, հա՛յր սուրբ, մեր առաջին պսակն է»: Ես ալ կը պատասխանեմ. «Ի՛մ ալ առաջին սուրբ պսակս է»: Բարեբախտաբար յաջորդ օր սուրբ պսակը շատ յաջող կանցնի եւ բոլորս ալ ուրախ կ'ըլլանք:

Մի քանի ամիս ետք, երբ կը մտերմանանք՝ հարս ու փեսան կըսեն. «Մեզ լաւ մը վախցուցիր, բայց Աստուած երեսնիս նայեցաւ»: «Միայն ձե՞ր երեսին...», կեզրափակեմ:

(101)

1991-ին Նիւ Ճըրզի հոգեւոր հովիւ կը նշանակուիմ: Եկեղեցիի հոգաբարձութեան (թաղականութեան) ատենապետը կը յայտնէ, թէ եկեղեցիին անմիջական շրջապատին մէջ հայ եւ օտար վաճառատուներ կան, որոնք յատկապէս տարեկան պագարին նուէրներ կու տան եկեղեցիին. լաւ կըլլայ, որ որպէս նոր հովիւ այցելեմ իրենց եւ ինքզինքս ծանօթացնեմ: Բոլորն ալ սիրալիր կընդունին եւ մի քանի բառ կը փոխանակենք: Կը մտնեմ կահ-կարասի վաճառող ամերիկահայի մը խանութը: Մարդը յաճախորդ ունի եւ անգլերէնով կէս-բերան «Բարի լոյս: Կը ներես, զբաղած եմ, բայց օր մը քեզի սուրճ մը պիտի գնեմ», կըսէ: «Բարի լոյս: Կը հասկնամ. ուրիշ օր կը հանդիպիմ», կը պատասխանեմ, եւ ապա քանիցս կ'այցելեմ իրեն: Մինչեւ այսօր դեռ իր խոստացած սուրճը պիտի գնէ...:

(102)

Ամերիկայի Միացեալ Նահանգներու առաջնորդ եղած օրերուն, Թորգոմ արք. Մանուկեան ինքնաշարժը շատ արագ կը վարէր: Օր մը թաղումի համար Նիւ Եորքէն Պոսթոն պիտի երթայ եւ ուշացած է: Հետը սարկաւագ մըն ալ կայ, որ շարունակ կը յուշէ. «Սրբազան՝ հայր, շատ արագ էք, *փռլիսը* պիտի կեցնէ»: Սրբազանը ականջ չի՛ կախեր. «Աստուած մեզի հետ է, տղա՛ս», կըսէ եւ կը սուրայ: «*Թիքէթ* պիտի ուտենք», կը զգուշացնէ սարկաւագը: Սրբազանը աւելի կարագացնէ ինքնաշարժը եւ կը կրկնէ. «Աստուած մեզի հետ է, տղա՛ս»: «*Էքսիտընթ* պիտի ըլլանք», կը սպառնայ սարկաւագը: Սրբազանը ինքնաշարժը կը կանգնեցնէ *պենզին* լեցնելու համար եւ սարկաւագին կըսէ. «Ո՞ր է հաւատքդ: Վերջին անգամ ըլլալով պիտի ըսեմ. Աստուած մեզի հետ է»: Սարկաւագը սրբազանին կըսէ. «Դուք եւ Աստուած գացէք. ես հոս կ'իջնեմ», եւ ինքնաշարժին դուռը կը բանայ ու դուրս կ'ելլէ...:

Վանգուվըր հոգեւոր հովիւ եղած շրջանիս՝ նաեւ տարին մի քանի անգամ կ'այցելէի դրացի Ալպերթա նահանգի Էտմընթըն ու Գալկըրի քաղաքները, ուր փոքրաթիւ հայ համայնքներ ունէինք:

Առաջին հովուական այցելութեամբ ուրբաթ երեկոյեան կը հասնիմ Գալկըրի եւ պանդոկին մէջ կարճ դադար մը առնելէն ետք, զիս կը տանին հայորդիի մը տունը, ուր հաւաքուած է շուրջ 40 անձերէ բաղկացած հայ համայնքը: Կը ծանօթանանք, կը խօսակցինք, սեղանը կ'օրհնեն, կ'ընթրենք, հայերէն երգեր կ'երգենք, համայնքին մասին տեղեկութիւններ կը քաղեմ եւ ի վերջոյ շաբաթ ու կիրակի օրերու յայտագիրիս մասին կը հարցնեմ: Համայնքի վարչութեան ատենապետը, որ նաեւ զիս օդանաւակայանին մէջ դիմաւորած էր եւ միշտ հետս էր, կը տեղեկացնէ, թէ շաբաթ հանգիստի եւ պտոյտի օր է, իսկ կիրակի կ'եսօրէ ետք ժամը 2-ին պիտի պատարագեմ յոյներու եկեղեցիին մէջ, իրենց սուրբ պատարագէն յետոյ: Ապա, եկեղեցիի սրահին մէջ համայնքային ճաշ տեղի պիտի ունենայ, եւ կ'աւելցնէ, որ ամեն մարդ արդէն տեղեակ է, ներկայ պիտի ըլլայ եւ ամեն բան կարգադրուած է: Բոլորն ալ շատ ուրախ են, որ ես եկած եմ եւ առաջին սուրբ պատարագը պիտի ընեմ, յաճախ պիտի այցելեմ իրենց եւ համայնքը պիտի կազմակերպեմ: Իմ հերթիս ես ալ յաւուր պատշաճի շնորհակալական խօսք մը կ'ուղղեմ եւ սուրբ պատարագին վերադառնալով կը յայտնեմ, թէ ամեն բան բերած եմ հետս (սկիհ, նշխար, զինի, մաս, պատարագի զգեստ, շապիկ, խունկ եւ այլն): Միայն կը փափաքիմ իմանալ, թէ որոնք են սարկաւազները, դպիրները, դպրաց դասը, երգեհոնը նուագողը, հոգաբարձուները (թաղական), որպէսզի իրարու ծանօթանանք եւ վաղը կարճ փորձ մը ընենք: Մարդիկ զարմացած իրարու երես կը նային: Ատենապետը կ'ըսէ. «Հա՛յր սուրբ, ձեր ըսածները ոչ թէ չի՛ կան հոս, այլ առաջին անգամ կը լսենք կոր: Մեր քովը ասկէ առաջ պատարագ չէ եղած. ասիկա առաջին պատարագն է»: Բանս բուրդ է, կը մտածեմ. ուրեմն ամբողջ սուրբ պատարագը առանձինս պիտի ընեմ: «Շատ լաւ», կ'ըսեմ՝ կացութեան հետ համակերպած, «ձեր մէջ մէկը կա՞յ, որ պզտիկ եղած ատենը եկեղեցին շապիկ հագած է»: Կը փորձեմ գոնէ խորանին վրայ քովս բուրվառակիր մը ունենալ, որ ի պահանջել հարկին օգտակար ըլլայ: Յանկարծ կ'ես հայերէնով-կ'ես արաբերէնով մի քանի ամիսէ ի վեր Պուրճ Համուտէն նոր եկած երեսուն տարեկանի շուրջ երիտասարդ մը կ'ըսէ, թէ ինք մի քանի ամիս Մեսրոպ-

եան վարժարան գացած է եւ Ս. Փրկիչ եկեղեցին շապիկ հագած: Ես ալ կ'ուրախանամ, որ մեր կիրակնօրեայ «փրկիչը» գտայ: Պանդոկ երթալէս առաջ սենեակ մը կը մտնենք եւ երիտասարդին կը բացատրեմ, թէ խորանին վրայ ո՛ր պիտի կենայ եւ ամեն անգամ երբ «Խաղաղութիւն ամենեցուն» ըսեմ, ինչպէ՛ս հինգ հատ բուրվառ պիտի ընէ: Նաեւ կը յանձնարարեմ, որ կիրակի օր քառորդ ժամ շուտ գայ եկեղեցի եւ մէյ մըն ալ բուրվառով փորձ ընենք:

Միտքս հանգիստ՝ կիրակի օր եկեղեցի կը հասնիմ եւ երիտասարդին հետ մեր փորձը շատ յաջող կ'անցնի: Սուրբ պատարագը կը սկսիմ: Բոլոր գալկըրիախայութիւնը ներկայ է սուրբ պատարագի սկիզբէն: Ինչ ուսանելի երեւոյթ...: Առաջին «Խաղաղութիւն ամենեցուն»-ին ամեն բան իրար կ'անցնի: Մեր «փրկիչը» բուրվառը կը դարձնէ եւ ածուխն ու խունկը խորանին վրայ կը թափին: Հաւատացեալներէն 10-15 հոգի խորան կը վազէ գորգին կրակը մարելու համար, մինչ այդ ծուխէն եկեղեցիի ահագանգը խլացուցիչ ձայնով կը հնչէ եւ հրշէջներ եկեղեցի կը շտապեն...:

(104)

1986–1991, երբ Վանգուվըր կը ծառայէի, դպտի ուղղափառներ եկեղեցի չունէին: Իրենց Շնուտա Գ. պատրիարքը մեր եկեղեցիին մէջ կը մատուցէ սուրբ պատարագը՝ իր Վանգուվըր շնորհած հովուապետական այցելութեան ատեն:

1999-ին, երբ Վանգուվըր կ'այցելեմ՝ կ'իմանամ, որ դպտիներ եկեղեցի մը հիմնած են եւ հանդիպում մը կ'ունենան իրենց հոգեւոր հովիւին հետ: Ան ինծի հետեւեալը կը պատմէ. «Երեք ամիս առաջ Գահիրէ գացի Շնուտա Գ. պատրիարքին գանգատելու, թէ մեր սարկաւազներէն մին անջատուած է մեր Վանգուվըրի եկեղեցիէն, օտար եկեղեցի մը վարձած է եւ պարբերաբար Ամերիկայի Միացեալ Նահանգներու դրացի քաղաքէն դպտի քահանայ մը հրաւիրելով՝ սուրբ պատարագ մատուցել կու տայ ու մեր հաւատացեալները կը գողնայ: Պատրիարքը ապշեցուցիչ, բայց ուսանելի պատասխան մը տուաւ. «Տղա՛ս, գնա եւ առաքելութիւնդ շարունակէ: Մէկի տեղ հիմա երկու եկեղեցի ունինք Վանգուվըրի մէջ: Աւելի ուրա՛խ պիտի ըլլայիր եթէ դպտի եղբայրներդ եւ քոյրերդ կաթողիկէ կամ աւետարանական եկեղեցիներ երթային»: Յայտնեմ, որ այսօր Քանատայի մէջ

երեսունհինգ հազար դպտի կ'ապրի, դպտի ուղղափառներ վաթսունչորս եկեղեցի ունին, որոնցմէ երեքը Վանգուվըրի մէջ են....:

(105)

Մեծ մայրիկ մըն է պատմողը. «Մաման պարտականութիւն կու տայ իր երկու աղջիկներուն ամեն առտու նստասենեակին չորս պատուհաններուն վարագոյրները բանալ. իւրաքանչիւրը երկու վարագոյր պիտի բանայ: Օր մըն ալ պզտիկ աղջիկը՝ Սեդան կը մերժէ իր երկու վարագոյրները բանալ: Քոյրը՝ Մայտան քանիցս անոր կը յիշեցնէ մամային ըսածը: Ապարդիւն: Մայտան դժկամակութեամբ կը բանայ չորս վարագոյրները, ու կը նեղուի Սեդայէն: Սեդան ամեն միջոցի կը դիմէ, որ Մայտան հետը խաղայ, բայց ան տեղի չի՝ տար: Սեդան մամային կը զանգատի, որ Մայտան իր հետ չի՝ խօսիր եւ հետը չի՝ խաղար: Մաման Մայտան ու Սեդան չորս պատուհաններուն քով կը տանի եւ վարագոյրները կը գոցէ: «Սեդա՛, աղջիկս» կ'ըսէ, «քանի որ քոյրիկդ առտու չորս վարագոյրները բացաւ, հիմա ալ դո՛ւն չորս վարագոյրները պիտի բանաս»: Սեդան կը բանայ վարագոյրները եւ կը պատրաստուի պուպրիկներուն քով վազելու: Մաման զինք կը կեցնէ եւ կը խրատէ. «Ի՛նչ լաւ պիտի ըլլար եթէ առտու դուն ալ երկու վարագոյր բացած ըլլայիր՝ ինչպէս Մայտան բացաւ: Տեսա՞ր հիմա ի՛նչ եղաւ: Առաջին՝ Մայտան քեզմէ նեղուեցաւ: Երկրորդ՝ մաման նեղուեցաւ, որ երկու քոյրիկներ իրարու հետ չեն խօսիր եւ չեն խաղար: Երրորդ՝ մամային գործ բացիր, չորս վարագոյրները ետ գոցել տալով: Չորրորդ՝ ի վերջոյ չորս վարագոյրները դո՛ւն նորէն բացիր, եւ երկուքի տեղ չորս վարագոյր բացիր, որովհետեւ առտու Մայտան չորս վարագոյր բացած էր»: Սեդան մօրը դառնալով կ'ըսէ. «Ներողութիւն, մամա. Անգամ մըն ալ չեմ ըներ»: Ապա, կ'երթայ Մայտային կը փաթթուի. երկու քոյր իրար *պաշիկ* կ'ընեն ու կ'ըսեն. «Ես քեզի շա տ կը սիրեմ», եւ ամեն բան մոռցած՝ կը սկսին իրենց պուպրիկներուն հետ խաղալ»:

(106)

Մոնթրեալի մէջ, Սարգիս առաջին անգամ ըլլալով իտալացի սափրիչ Մարիոյին կ'երթայ: Հոսկէ-հոնկէ խօսելու ընթացքին՝ մեր մարդը Մարիոյին կը հարցնէ, թէ Մարիօ Քանատա ծնա՞ծ է թէ Իտալիայէն եկած:

Մարիօ հպարտօրէն կը պատասխանէ. «Ես Սիսիլիայէն եմ»:

Սարգիս եւս հպարտօրէն կ'ըսէ. «Կնիկս ալ Սիսէն է, դուն եւ կնիկս իրարու հայրենակից էք ուրեմն», եւ մեկուսի կ'աւելցնէ. «Տունի Սիսիլիէն չազատած՝ այս Սիսիլիին ձեռքը ինկանք. Աստուած վերջը բարին ընէ...»:

(107)

Երեք տարի Մոնթրեալ ապրած տիկին Արշալոյս երկու շաբաթ առաջ Պէյրուօն Մոնթրեալ հասած իր ընկերուհին՝ Աստղիկը դրամատուն կը տանի հաշիւ բանալու:

Ֆրանսախօս պաշտօնեան անհրաժեշտ տուեալները (անուն, մականուն, հասցէ եւ այլն) ստանալէ ետք, կը հարցնէ. «Ամուսնացա՞ծ էք»: Արշալոյս Աստղիկէն հետեւեալ պատասխանը կը ստանայ. «Անամ, աս ի՞նչ հարցում է: Դուն ալ գիտես՝ մերինը *չօճուխներուն* պզտիկ եղած ժամանակը տունը ձգեց գնաց: Հիմա ասոր ի՞նչ պիտի ըսենք»: Հնարամիտ Արշալոյս իր հազիւ գիտցած ֆրանսերէնով պաշտօնեային կարճ-կտրուկ կը պատասխանէ. «Տիսփարու» (անհետացած է): Մնացածը պաշտօնեային գործն է. ինք թող որոշէ ի՞նչ պիտի գրէ...:

(108)

Ծառայասէր տիկին Արշալոյս Հալէպէն նոր ժամանած ազգակա-նուհին՝ տիկին Զարուհին Մոնթրեալի ներգաղթի գրասենեակը կը տանի կեցութեան արտօնագիր ստանալու համար:

Դասական հարցումներու կարգին, պաշտօնեան ֆրանսերէնով նաեւ կը հարցնէ. «Տիկինը քանի տարեկա՞ն է»: Թարգմանի դեր կատարող Արշալոյս Զապէլին ըսածը կը փոխանցէ պաշտօնեային. «Ըսէ, որ 1935-ին ծնած եմ, հաշիւը ինքը թող հանէ...»:

Տիկին Վարսենիկին աղջիկին՝ Անժելին տունին հեռաձայնը կը հնչէ եւ գիծին միւս ծայրէն Վիգէն կը յայտնէ, թէ երկու օրէն Մոնթրէալէն Պէյրուօ պիտի երթայ եւ կ'ուզէ Անժելին մօրը հարցնել եթէ Պէյրուօ բան մը ունի դրկելիք, բայց մօրը հեռաձայնի թիւը չունի, որ հետը խօսի: Անժել կը յայտնէ, որ մայրը քովն է եւ հեռաձայնը անոր կը փոխանցէ: Տիկին Վարսենիկ չուզեր աղջկան ներկայութեան ըսել, թէ ի՛նչ պիտի դրկէ Պէյրուօ, եւ Վիգէնին կ'ըսէ. «*Մէլուլըրիս* թիւը տամ, ինծի երկու ժամէն *թէլեֆօն* ըրէ, տունս կ'ըլլամ, կը խօսինք»: Տիկին Վարսենիկ իր թիւը միայն ֆրանսերէնով գոց սորված ըլլալով, կ'աւելցնէ. «Գրէ՛. *թըրուա, թըրուա, տէօ, զերօ, թըրուա, սենք, զերօ*»:

Քիչ ետք, Վիգէն իր ընկերոջ՝ տիկին Վարսենիկին տղուն, Պարգելին, խանութը կը հանդիպի գործով եւ յատուկ հիացումով կը յարէ. «*Ակա՛ս*, մամադ ինչ աղուոր ֆրանսերէն կը խօսի կոր. ինձմէ լաւ: *Մէլուլըրիս* թիւը ինծի ֆրանսերէնով տուաւ»: Պարգել խնդալէն կը մարի, որովհետեւ մօրը գիտցած ֆրանսերէնը միայն այդքան էր....:

Տիկին Արշալոյս Պոլիսէն Մոնթրէալ հաստատուած ութսունամեայ Նուրիձա մայրիկին տունը սուրճ խմելու կ'երթայ: Երկու դրացուհիներ հազիւ կը սկսին խօսակցիլ եւ սուրճը վայելել, երբ դուռը կը զարնուի եւ հեռաձայնը նորոգող պաշտօնեան ներս կը մտնէ: Նուրիձա մայրիկ Արշալոյսին կ'ըսէ. «Ոտքդ *ուղուրլու* եկաւ, *քա*: Երկու օր է այս մարդը կը սպասէի կոր: Գիտե՞ս, մէկու մը տունը չեմ կրնար կոր երթալ. այսօր պիտի գայ, վաղը պիտի գայ, *իշտէ* հիմա եկաւ: Աս *թէլեֆոնն* ալ չըլլայ *նէ*, պիտի խենթանամ»: Ու կը շարունակեն շաղակրատել:

Երկու ժամ ետք, հեռաձայնը նորոգող պաշտօնեան կը յայտնէ, թէ գործը վերջացուցած է եւ պիտի մեկնի: «Բայց կ'ուզեմ ձեզի բան մը ըսել: Ինչ որ կը խօսէիք իրարու հետ, գրեթէ քառորդը հասկցայ», կ'աւելցնէ ան: Նուրիձա մայրիկ Արշալոյսին դառնալով զարմացած կը յարէ. «Քու ֆրանսերէնդ զօրաւոր է. սըւոր հարցուր նայինք չէ *նէ* հա՛յ է մը»:

Պաշտօնեան կէս-ֆրանսերէն կէս-հայերէն ինք կը պատասխանէ. «Ես քառորդ հայ եմ: Մամայիս պապան հայ է: Ես իրմէ քիչ մը հայերէն սորված եմ»: Նուրիձա մայրիկ *խըրսով* մը՝ «Ի՞նչ ըսել է քառորդ հայ. դուն հայ *օղլու* հայ ես. գնա՛ աղուոր հայերէն սորվիր» ըսելով, հարցը կը փակէ:

(111)

Հայ գիրքը երկու առիթով հայ ըլլալս կը յայտնէ:

Փարիզէն Մոնթրէալ կը ճամբորդեմ եւ ճաշի սպասարկութեան ընթացքին հայերէն գիրք մը կը կարդամ, երբ սպասեակը ճաշի ափսէն սեղանիկիս վրայ դնելէն ետք՝ անգլերէնով կը հարցնէ. «Դուք հայ էք, այնպէս չէ՞»: «Այո՛», կը պատասխանեմ. «Ինչէ՞ն գիտցաք»: «Ձեր կարդացած գիրքէն», կ'ըսէ:

Քանի մը օր ետք ալ համակարգիչի *Էփըլ* վաճառատունը կ'երթամ եւ պայուսակիս մէջ հայերէն գիրք մը ունիմ: Երբ նորոգութեան կարօտ համակարգիչս պայուսակէս դուրս կը հանեմ, գիրքը պաշտօնեային սեղանին վրայ կը դնեմ՝ որպէսզի եթէ երկար սպասելու կարիք ըլլայ գոնէ կարդալով ժամանակս լեցնեմ: Յանկարծ պաշտօնեան ինծի կը դառնայ եւ հայերէնով կ'ըսէ. «Դուք հայ էք, չէ՞»: «Այո՛», կը պատասխանեմ. «Մինչեւ հիմա անգլերէն խօսեցանք. ինչպէ՞ս գիտցաք, որ հայ եմ»: «Հայերէն գիրքէն», կ'եզրափակէ ան:

(112)

Քորոնա ժահրի օրերուն Կարպիս կը հեռախօսէ ընկերոջ՝ Արսէնին. «Ամա՛ն, աս անիծեալ քորոնան ալ ուրկէ ելաւ. չենք կրնար կոր աղուոր մը տեսնուիլ: Եկուր այսօր ժամը 11-ին մեր *կարածը* հանդիպինք, սուրճ մը խմենք»: «Համաձայն», կ'ըլլայ պատասխանը: Արսէն կը մտածէ, որ Կարպիս չպատուաստուած երկու փոքրիկ գաւակ ունի եւ կը վախնայ, որ անոնք կրնան վարակուիլ. ուրեմն աւելի ապահով է տունին *կարածը* հանդիպիլ եւ սուրճը խմել: Ան ժամը 11-ին Կարպիսենց տունին *կարածը* կ'երթայ: Մինչ այդ, առաւօտեան ժամը 8-էն Կարպիս իր գործի *կարածն* է եւ ժամը 11-ին Արսէնը հոն կը սպասէ, որ միասին սուրճը խմեն: Արսէն կը

նայի, որ ո՛չ Կարպիսին եւ ո՛չ ալ անոր կնոջ ինքնաշարժը կայ, կը հեռախօսէ ընկերոջ եւ «Ո՞ւր ես, ընկե՛ր», կը հարցնէ: «Ես *կարածն* եմ», կը պատասխանէ Կարպիս: «Է՛, ես ալ *կարածն* եմ» կը պատասխանէ Արսէն: Փաստօրէն երկուքն ալ *կարածն* էին, բայց երկու տարբեր *կարածներ* ...:

(113)

Մայրս եւ հայրս մէկ տարի քովս կը մնան Վանգուվըր եւ ապա հետո Նիւ Ճըրզի կը փոխադրուին 1991-ին: Վանգուվըրի հայ համայնքը շատ փոքրաթիւ ըլլալուն՝ վերջին մէկ տարուան ընթացքին սուրբ մկրտութիւն, սուրբ պսակ եւ թաղում չէր եղած. իսկ Նիւ Ճըրզի մի քանի ամիսէն երբ ծնողքս ծանօթներու լայն շրջանակ կունենայ, ուրախ եւ տխուր առիթներու յաճախակի հրաւերներ կը ստանայ:

Երբ առաջին ամերիկահայ յուղարկաւորութենէն տուն կը վերադառնանք, մայրս իր զարմանքը կը յայտնէ՝ ըսելով. «Ես ամչցայ սեւ հագուստ հագած ըլլալուս համար: Այդ ի՞նչ էր, կարծես պարահանդէսի եկեր էին. ամենքն ալ գունաւոր հագուստներ հագեր են. կեանքիս մէջ առաջին անգամ ասանկ *ճիճիլի-պիճիլի* հագուստներով մեռելի եկողներ կը տեսնեմ կոր. մեղք ունի ճանրմ. նոյնիսկ Աստուած չընդունիր: Ասի չի՛ բաւեր, մէյ մըն ալ հոգեճաշի համար ճաշարան երթալ, գինի եւ ուիսքի խմել, ուզած ճաշդ ապսպրել, խօսիլ, խնդալ: Մեր գիտցածը՝ մեռելին տունը կերթան, տէր հայրը աղօթք մը կընէ, սուս ու փուս *շեհմեճիւն* մը կ'ուտեն, թան մը կը խմեն, սուրճ մը կը խմեն մեռնողին հոգիին համար, ան ալ դժուար կ'իջնէ կոկորդէդ: “Աստուած հոգին լուսաւորէ, կեանքը ձեզի» կըսեն, կ'ելլեն տուներնին կերթան. ոչ թէ հոստեղի պէս *քահ-քահ, քիհ-քիհ*: Ասանկ մեռե՞լ մը կըլլայ: Ես անգամ մըն ալ մեռելի գացողը չեմ...»:

Վեց տարի մնացինք Նիւ Ճըրզի. մայրս ամեն բանին յարմարեցաւ. մեռելներուն եւ հոգեճաշերուն ալ եկաւ, բայց միշտ սեփ-սեւ հագուստով:

(114)

Իրիկուն մը Մեսրոպ արք. Աշճեանին հետ հրաւիրուած ենք տուն մը, ուր քանի մը տարի առաջ սրբազան հայրը մեծ մայրիկը փոխան տիկին Նուէրի սխալմամբ տիկին Փերուզ կոչած է եւ գերզգայուն մեծ մայրիկը ամեն անգամ ու ամեն տեղ այս դէպքը պատմած է:

Մեսրոպ սրբազան շատ զգուշ է, որ նման սխալ մը չգործէ: Ճամբան, ինքնաշարժին մէջ, ինծի հարց կու տայ. «Դուն ինչպէ՞ս միտքդ կը պահես անուն-մականունները»: «Ես անուններուն վրայէն կը ցատկիմ եւ միայն մականունները կը գործածեմ. օրինակ՝ պարոն Մանուկեան, տիկին Կարապետեան, օրիորդ Սարգիսեան», կը պատասխանեմ: «Լաւ ըսիր այս մէկը. այսօրուրնէ սկսեալ ես ալ այսպէս պիտի ընեմ» կ'ըսէ ուրախութեամբ: Կը հասնինք մեր հիւրընկալներուն տունը եւ մտերմիկ իրիկուն մը կ'անցընենք: Սրբազանը տիկին Նուէրին կը պատմէ ինքնաշարժին մէջ մեր ունեցած խօսակցութիւնը, որուն, ինծի ակնարկելով, կեսարացի մեծ մայրիկը թրքերէն առածով մը կը պատասխանէ. «Խելքը տարիքին մէջ չէ, գլուխին մէջ է»: Մեսրոպ սրբազան կը յարէ. «Այսօր ալ ուրիշ *կաֆ* մը գործեցի: Տիկին Նուէրին ձեռքէն նորէն պիտի չազատիմ: Հիմա ալ ամեն տեղ աս պիտի պատմէ...»:

(115)

Լիբանանի դասընկերներէս մին Նիւ Ճըրզի մեր տունը կը մնայ եւ տիւ ու գիշեր իր բժշկական վկայականը ստանալու համար հիւանդանոց պաշտօնավարելու պայմանները լրացնելուն կը հետեւի: Այդ օրերուն բջիջային հեռախօս չկայ տակաւին: Օր մը տունէն ճամբայ կ'ելլէ հիւանդանոց երթալու, մինչ այդ հիւանդանոցէն քարտուղարուհի մը տունը կը հեռախօսէ եւ զինք կը փնտռէ: Մայրս կը պատասխանէ եւ հազիւ կրնայ հասկննել, թէ անգլերէն չի՛ գիտեր ու կ'առաջարկէ ֆրանսերէն խօսիլ: Դիմացինը կը պատասխանէ, թէ ֆրանսերէն չի՛ գիտեր. արաբերէն՝ չի՛ գիտեր. յունարէն՝ չի՛ գիտեր. հայերէն՝ չի՛ գիտեր. թրքերէն՝ չի՛ գիտեր: Վերջապէս անգլերէնով մօրս շնորհակալութիւն կը յայտնէ եւ հեռախօսը կը գոցէ: Երբ դասընկերս հիւանդանոց կը հասնի՝ ան կը հարցնէ, թէ ո՞վ էր

այս հինգ լեզու խօսող կինը: *Տոթորը* կը պատասխանէ, որ իր ընկերոջ ու Հայ եկեղեցիի հոգեւոր հովիւին մայրն էր եւ ինք անոնց տունը կը մնայ:

Երբ դասընկերս այս դէպքը կը պատմէ մօրս, ան կ'ըսէ. «Եթէ միայն անգլերէն գիտնալով մէկը հիւանդանոցի մը *սեքրէթերը* կըլլայ կոր, ես ալ հինգ լեզու գիտնալով Ամերիկայի նախագահը կրնամ ըլլալ: Մէ դք որ ես աս երկիրը կանուխ չեկայ...»:

(116)

Նիւ Ճըրզիի հայ մայրիկ մը ամերիկեան հպատակութիւն պիտի առնէ եւ զաւակներն ու թոռները իրեն կ'օգնեն, որ հիմնական հարցումներուն պատասխանները սորվի: Օրինակ՝ իր անուն-մականունը, ծննդեան թուականը, Ամերիկա մուտքի թուականը եւ այլն: Նաեւ կ'ըսեն, թէ պէտք է գիտնայ Ամերիկայի առաջին նախագահին անունը, որովհետեւ դատաւորը անպայման այս մէկը կը հարցնէ: Մեծ մայրիկին կ'ըսեն, որ շատ դիւրին է Ամերիկայի առաջին նախագահին անունը. ճորճ Ուաշինկթըն, եթէ յիշէ Նիւ Ճըրզիի կամուրջը, որուն վրայէն յաճախ կ'անցնինք Նիւ Եորք երթալու համար, ճորճ Ուաշինկթըն *պրիճ*: «Ամա՛ն, շատ դիւրին է եղեր», կ'ըսէ մեծ մայրիկը, «մեր Ազնիւին տունին քովի կամուրջն է՝ ճորճ Ուաշինկթըն *պրիճ*: Եղաւ. *տեմեկ* մարդուն անունն է. աս ալ սորվեցանք: Պարապի չեն ըսած՝ կեանքը դպրոց է»: Մի քանի շաբաթ ետք մեծ մայրիկը ներգաղթի գրասենեակը կ'երթայ եւ բոլոր հարցումներուն ճիշդ կը պատասխանէ, իսկ Ամերիկայի առաջին նախագահին փոխան «ճորճ Ուաշինկթըն» պատասխանելու, միայն «*պրիճ*» կ'ըսէ...:

(117)

Նիւ Ճըրզիի հովութեանս տարիներուն ամերիկահայ բարեկամներու խումբ մը ունիմ, որուն հետ շաբաթը երկու անգամ, առաւօտեան ժամը 10.30-էն կ'եսորուան ժամը 12.00, ակումբի մը մէջ *թենիս* կը խաղամ: Ապա խումբէն մէկը, հերթաբար, բաներ մը կը բերէ եւ միասին թեթեւ ճաշ մը կ'ընենք ու սուրճ կը խմենք: Ինծի կը պատուիրեն, որ ես փոխան հերթին մաս կազմելու՝ մօրս ըսեմ, որ տարին երկու անգամ նախընտրաբար

պահքի հայկական ճաշեր պատրաստել եւ խումբը մեր տունը գայ եւ միասին ճաշենք: Երբ այս խումբը առաջին անգամ մեր տունը կը հրաւիրեմ, մայրս ուսպով *քէօֆթէ*, պահքի *սարմա-տոլմա* եւ *թահինով* հաց կը պատրաստէ: Անշուշտ ոգելից ըմպելի կը հրամցնենք եւ ճաշի սեղաններուն վրայ *շիփս* ու կուտ-*ֆրստըիս* ալ կը դնենք: Մինչեւ մայրս ուսպով *քէօֆթէն* շաղէ՝ հիւրերը կը սկսին *շիփսն* ու կուտ-*ֆրստըիսը* ուտել, խմիչքը կոնծել եւ անշուշտ անգլերէնով զրուցել: Մայրս զիս խոհանոց կը կանչէ եւ կըսէ. «Ես անգլերէն չեմ գիտեր, որ ըսեմ. դուն ըսէ ասոնց, որ չկշտանան. ահագին ճաշ կայ: Ի՞նչ կայ *մոթորի* պէս կուտ-*ֆրստըիսը* կուտեն կոր. պիտի կշտանան, յետոյ ալ ճաշերս պիտի չի՛ հաւնին»: Ես «Լաւ, լաւ», կըսեմ եւ բան չեմ ըսեր մեր հիւրերուն: Մայրս կը հետեւի եւ քիչ յետոյ հիւրերուն քով կու գայ եւ իր կոտրած անգլերէնով ու հեղինակաւոր շեշտերով կըսէ. «Նօ՛, նօ՛: *Տիս իս Աթլանթիք սիթի*» (Ո՛չ, ո՛չ: Աս Աթլանթիք սիթի է: (Յայտնեմ, որ Աթլանթիք սիթին Նիւ Ճրքի նահանգի բախտախաղի քաղաքն է): Մայրս անգլերէն բախտախաղ ուրկէ՞ պիտի գիտնար, Աթլանթիք սիթին միտքը կու գայ եւ անով կը փորձէ հասկնել, թէ եթէ մէկը սկսի կուտ-*ֆրստըիսը* ուտելու՝ դիւրին-դիւրին չի՛ կրնար գայն թողուլ, ինչպէս է պարագան բախտախաղի մոլութեան...:

(118)

1988-ին առաջին անգամ ըլլալով Վանգուվըրէն Նիւ Եորք կը մեկնիմ՝ որպէսզի Ազգային առաջնորդարանին եւ շրջանի հոգեւորականներուն ծանօթանամ: Յաջորդ օր կէսօրին Մուշեղ աւ. քին. Տէր Գալուստեան զիս կը տանի ամերիկեան եկեղեցի մը, որ ժամանակաւորապէս կը գործածուի մեր Ս. Սարգիս եկեղեցիի ծուխին կողմէ, որովհետեւ Ս. Սարգիս եկեղեցին վերջերս արկածի մը հետեւանքով հրոյ ճարակ դարձած է: Ծուխին հոգեւոր հովին է պոլսահայ Ասողիկ աւ. քին. Գըլընճեանը, որ մեծ ուրախութեամբ կընդունի մեզ, ինքզինք կը ծանօթացնէ «որպէս հրկիզեալ Ս. Սարգիս եկեղեցիի քահանան» եւ եկեղեցիի քարտուղարը կը դրկէ *տէօնէր (շաուրր-մա) սանտուիչ* եւ թան բերելու: Անմիջապէս կանդրադառնամ, որ տէր հայրը կատակասէր է եւ իմ հերթիս կըսեմ, որ ինք «հրկիզեալ եկեղեցիին ոչ-հրկիզեալ քահանան է»: Այս ակնարկութիւնը շատ հաճելի կը հնչէ իր ականջներուն եւ տէր Մուշեղին դառնալով կըսէ. «Շա՛տ աղուոր ըսաւ

հա՛յր սուրբը. մինչեւ հիմա ասի չէի լսած»։ Մէկ ամիս ետք, Ս. Սարգիս եկեղեցիի թերթիկը կը ստանամ, ուր մեր այցը նկարագրուած է հետեւեալ ուռուցիկ վերնագիրով. «Եկեղեցիիս հոգեւոր հովիւը սիրոյ սեղանով պատուեց Նարեկ վրդ. Ալեկմեղեանն ու Մուշեղ աւ. քին. Տէր Գալուստեանը»։ Ինչպէս կը յիշե՞ք՝ եղած-չեղածը *տէօնէր սանտուիչ* եւ թան էր...:

1991-ին, երբ արդէն Նիւ Ճըրզիի հոգեւոր հովիւ եմ, աւելի կը մտերմանամ արդէն հանգստեան կոչուած տէր Ասողիկին հետ, որ ամառուան արձակուրդիս կիրակի մը կու գայ եւ իմ եկեղեցիս կը պատարագէ ու կը քարոզէ։ Արձակուրդէս վերադարձին հոգաբարձուները (թաղականները) կըսեն՝ թէ նախընտրելի է, որ այլեւս ինք չփոխարինէ զիս, որովհետեւ այնքան շատ հոգեհանգիստ կար, որ հոգեհանգիստի անուն-մականունները կարդացած պահուն տէր հայրը ողջերն ու մեռելները իրար կ'անցընէ, եւ հոգեհանգիստի աւարտին ալ կէս կատակ-կէս լուրջ հաւատացեալներուն կըսէ. «Այս բոլոր հոգեհանգիստներուն համար ինձի՞ սպասեցիք. գալ կիրակի ընէիք՝ հայր Նարեկը հոս կըլլար...»:

(119)

Միջին Արեւելքէն նոր Վանգուվըր հաստատուած Յակոբ կը փափաքի երկար ատենէ ի վեր հոն գտնուող հայ վաճառականի մը փորձառութենէն օգտուիլ։ Վերջինս բարեկամաբար կը յանձնարարէ իրեն գոնէ տարի մը քանատացիի մը մօտ աշխատիլ, յաճախորդներուն հետ բարեկամութիւն մշակել եւ ապա անձնական գործի ձեռնարկել։ Յակոբ կը պատասխանէ. «Ես մէկ տարի կորսնցնելիք ժամանակ չունիմ։ Ես Քանատայի մէջ շուտ կ'ուզեմ հարստանալ»:

Ան մի քանի օր ետք իր հաշիւ բացած դրամատունը կ'երթայ եւ կը յայտնէ, թէ կը փափաքի տնօրէնը ճաշի հրաւիրել հարց մը քննարկելու համար։ Քարտուղարուիին օր ու ժամ կը ճշդէ, եւ տնօրէնը Յակոբին հրաւիրած ճաշարանը կ'երթայ։ Համով-հոտով կը ճաշեն ու կը զրուցեն եւ ի վերջոյ Յակոբ կըսէ, թէ զինք ճաշի հրաւիրած է որովհետեւ նոր վաճառատուն մը պիտի բանայ, Իտալիայէն պնակեղէններ պիտի բերէ եւ կը փափաքի երկու հարիւր հազար տոլարի պարտք առնել դրամատունէն։ Տնօրէնը կը բացատրէ, թէ ինք իրաւասութիւն չունի պարտք տալու,

որովհետեւ այդ մէկը իր մասնաւոր տնօրէնը ունի եւ անոր հետ պէտք է խօսիլ: Յակոբ կը զարմանայ, թէ այս ինչ տեսակ տնօրէն է որ չի՝ կրնար այսքան պարզ հարց մը լուծել եւ քաղաքավարօրէն կը հասկցնէ, որ եթէ այս պարտքը պիտի չկարենար կարգադրել ինչո՞ւ իր ճաշի հրաւերը ընդունած էր: Տնօրէնը առանց ամչնալու ուղղակի կը պատասխանէ. «Բայց միշտ ալ ձրի ճաշ ուտելու պատեհութենէն օգտուելուն մէջ վնաս մը չկայ կարծեմ. հարց մը քննարկելու համար հրաւիրեցիք, ես ալ եկայ եւ պատասխանս տուի...»:

Մէկ շաբաթ ետք, յատուկ ժամադրութեամբ, Յակոբ դրամատունին մէջ պարտքի բաժանմունքի տնօրէնը կը տեսնէ եւ երկու հարիւր հազար տոլարի պարտքը կ'առնէ, Իտալիա կը ճամբորդէ, պնակեղէնները կը բերէ եւ նոր վաճառատունը կը բանայ: Ահագին մարդ կը մտնէ-կ'ելլէ վաճառատունը եւ կը հիանայ իտալիայէն բերուած որակաւոր պնակեղէններուն, բայց միայն մի քանի գնող կըլլայ: Յակոբ հինգ ամիս ետք ստիպուած կըլլայ վաճառատունը փակելու եւ Քանատայի մէջ իր շուտ հարստանալը անհասանելի երագ կը մնայ...:

(120)

Երեք ընկեր՝ Արմէնը, Անդրանիկը եւ Պօղոսը շաբաթը մի քանի անգամ իրարու տուն կը հաւաքուին եւ պատառ մը հաց ուտելով ու գաւաթ մը *ուիսքի* խմելով կը զրուցեն եւ ժամանակ կ'անցընեն: Միակ անհամաձայնութիւնը որ ունին այն է, որ Արմէն միայն *Պլէք լէյպըլ* կը խմէ, իսկ Անդրանիկ եւ Պօղոս *Ռէտ լէյպըլով* կը գոհանան: Ամեն ատեն Արմէն ընկերները կը մեղադրէ, ըսելով. «Դուք *ուիսքի* խմել չէք գիտեր. բուն *ուիսքին* *Պլէք լէյպըլն* է»: Անդրանիկին ու Պօղոսին համբերութեան բաժակը կը յորդի եւ օր մըն ալ *Պլէք լէյպըլի ուիսքին Ռէտ լէյպըլի* շիշին մէջ կը պարպեն ու ամբողջ գիշերը իրենք *Պլէք լէյպըլ* կը խմեն եւ իրենց ընկերոջ *Ռէտ լէյպըլ* կը խմցնեն: Իսկ Արմէն, ըստ իր բարի սովորութեան, չի՝ դադրիր կրկնել. «Դուք *ուիսքի* խմել չէք գիտեր. բուն *ուիսքին* *Պլէք լէյպըլն* է»: Երբ այլեւս տուն երթալու ժամը կը հասնի, Անդրանիկ ու Պօղոս զադտնիքը կը բացայայտեն, որուն Արմէն կը պատասխանէ. «Ես բան մը կը զգայի կոր, բայց ընկերութեան սիրոյն բերանս չէի բանար կոր...»:

Կեանքի մէջ բաներ կան, որոնք առաջին անգամ, – եւ թերեւս ոչ վերջին անգամ –, կրնենք:

Որպէս հոգեւոր հովիւ Քանատա ծառայած տարիներուս եւ ապա՝ միայն մէկ անգամ դահուկներով սահելու կերթամ: Այսպէս կը պատահի. Արեւմտեան Քանատայի նահանգներ հովուական այցելութիւն կու տամ եւ երկուշաբթի պետական արձակուրդ է: Երեք ընկեր կառաջարկեն նշանաւոր Պէնֆ քաղաքը երթալ: Կորոշուի երկուշաբթի առտու ժամը 6-ին մայրուղիին վրայ գտնուող *Թիմ Հորթընզ* սուրճի կայանին կանգառը հանդիպիլ, սուրճ մը գնել եւ ճամբայ ելլել, որպէսզի ժամը 8-ին Պէնֆ հասնինք, երկու ժամ դահուկներով սահինք, ժամը 10-ին նախաճաշենք եւ ապա մեր տունները վերադառնանք: Ընկերս եւ ես ժամը 6-ին կը հասնինք ճշդուած վայրը, իսկ մեր միւս ընկերները մէկ ու կէս ժամ կուշանան (է՛հ, գիտեմ՝ «հայկական ժամադրութիւն» պիտի ըսէք. այսպէս ենք, ի՞նչ կրնանք ընել): Փոխան ժամը 8-ի ժամը 9.30-ին Պէնֆ կը հասնինք: Էնտրուն, աչքերը շփելով, կըսէ. «Չեմ գիտեր ձեր պարագան, բայց ես նախ պետք է բան մը ուտեմ. անօթի կը սատկիմ կոր»: Դահուկներով սահելէն առաջ ճաշարան կը մտնենք եւ կը նախաճաշենք: Ժամը 11 կըլլայ եւ ճէմզ կըսէ. «Եթէ ժամը 12-ին տուն պիտի երթանք, չարժեր մէկ ժամուան համար դահուկները ինքնաշարժներէն վար իջեցնել. սուրճ մը խմենք եւ վերադառնանք»: Այս կըլլայ իմ միակ «դահուկներով սահելու երթալս»:

Վանգուվըր հոգեւոր հովիւ եմ եւ միաժամանակ համալսարանի ուսանող: Կէսօր մը համալսարանէն տուն կու գամ եւ կորոշեմ որպէս ճաշ հաւկիթ խաշել: Ջուրը կը դնեմ օճախին վրայ, նստասենեակ կանցնիմ, գիրք մը կ'առնեմ եւ կը սկսիմ կարդալ: Քառորդ ժամ ետք կը յիշեմ, թէ ջուր դրած եմ օճախին վրայ եւ խոհանոց կը վազեմ: Ուշացած եմ արդէն: Ջուրը եռացած ու շոգիացած է. բարեբախտաբար հաւկիթները չեմ դրած ջուրին մէջ: Ջրամանը կ'առնեմ օճախին վրայէն ու հաւկիթներն ալ սառնարանէն, աղբաման կը թափեմ եւ կորոշեմ անգամն ալ կեանքիս մէջ հաւկիթ չխաշել:

Միջեկեղեցական առաքելութեամբ Կիպրոս կը գտնուիմ եւ հակառակ այն իրողութեան, որ քորոնա ժահրի ոչ մէկ ախտանշան ունիմ՝ Լառնագայի օդանաւակայանի քննութիւնս դրական արդիւնք ցոյց կու տայ

եւ կիպրական առողջապահութեան նախարարութիւնը կը պարտադրէ, որ տասը օր մեկուսանամ: Ընկերոջս Լաոնագայի բնակարանը կ'երթամ եւ առանձինս կ'ապրիմ: Ամեն բան հեզասահ կ'ընթանայ բացի հագուստ լուալէն, որովհետեւ առաջին անգամ ըլլալով կը պարտաւորուիմ ընկերոջս հեռախօսել եւ իմանալ, թէ լուացքի մեքենան ինչպէս կ'աշխատցնեն, որպէսզի կարենամ հագուստներս լուալ:

Քորոնա ժահրի մեկուսացումէս դուրս գալէն ետք, ընկերս կու գայ որպէսզի զիս Լաոնագայէն Նիկոսիա տանի եւ կ'ըսէ, թէ մայրուղի ելլելէն յետոյ ինքնաշարժը եւ պիտի վարեմ մինչեւ Նիկոսիայի մուտքը, որովհետեւ սրունքի ահաւոր ցաւ ունի: Այդպէս ալ կ'ընենք եւ այս ալ դէկը աջէն ինքնաշարժը առաջին վարելս կ'ըլլայ:

(122)

Լոս Անճելըս, ամերիկացի մը հայկական նպարավաճառատուն մը կը մտնէ եւ անգլերէն խօսելով *փառնտ* մը սուրճին գինը կը հարցնէ: Հայ վաճառորդուհին ընկերուհին օգնութեան կը կանչէ՝ ըսելով. «Արի, մի հատ իմացիր եւ օտարը ի՞նչ է ուզում»:

(123)

Սմբատ արք. Լափաճեան շատ անհանգիստ է եւ Լոս Անճելըսի հայկական ծերանոցին մէջ իր երկրաւոր կեանքի մայրամուտին կը մօտենայ, սակայն պահած է իր գուարթախօսութիւնը: Մեր միաբաններէն մին կ'այցելէ սրբազան հօր եւ խօսակցութեան ընթացքին ան կ'ըսէ. «Հա՛յր սուրբ, երբ որ ես մեռնիմ, ո՞ւր պիտի երթամ. ի՞նչ կը կարծես»: Հա՛յր սուրբը կը պատասխանէ. «Սրբազա՛ն հայր, շա՛տ կանուխ է վախճանումի մասին խօսելու համար: Անշուշտ ձեր տեղը դրախտն է. Աստուծոյ գիրկին մէջ: Զարեհ կաթողիկոսին, Խորէն կաթողիկոսին, Գարեգին կաթողիկոսին, Տաճատ սրբազանին, Արտաւազդ սրբազանին, Վարդան սրբազանին» եւ կը շարունակէ թուել վախճանեալ միաբաններու անունները, երբ յանկարծ Սմբատ սրբազան դժգոհութեամբ կ'ընդմիջէ. «Է՛հ, անո՞նք ալ հոն պիտի

ըլլան...». այսինքն՝ ի՞նչ հասկցայ դրախտ երթալէն եթէ միայն ինծի համար առանձնաշնորհեալ վայր մը պիտի չըլլայ ան:

(124)

Ս. Էջմիածինի միաբան արքեպիսկոպոս մըն է պատմողը. «Երեւանում մի բարեկամի տանն եմ եւ ինձ ծանօթացնում են մի ուրիշ անծանօթ մարդու: Էս մարդը երբ “արքեպիսկոպոս” բառն է լսում, ինձ ասում է. “Ուրեմն դուք *նորմալ* եպիսկոպոս չէք”»:

(125)

2014-ի ամառը զարմիկներուս հետ Մոնթրէալէն Երեւան կը ճամբորդենք: Իրենց առաջին այցելութիւնն է հայրենիք եւ ամեն ինչով խանդավառ են: Երեկոյ մը նստած ենք Արմենիա-Մարիոթ պանդոկի բացօդեայ սրճարանը եւ իրենց եօթը, տասը եւ տասներկու տարեկան զաւակները Հանրապետութեան հրապարակին մօտ կը խաղան իրենց տարեկից երեւանցի խումբ մը երեխաներու հետ: Յանկարծ երեքը մէկ մեծ ուրախութեամբ ու զարմանքով քովս կը վազեն եւ կը գոչեն. «Սրբազա՛ն, բոլոր *չօճուխները* հոս հայերէն կը խօսին կոր...»: «Ինչո՞ւ զարմացած էք», կը պատասխանեմ՝ «մոռցա՞ք որ Երեւան կը գտնուինք եւ ոչ թէ Մոնթրէալ»:

(126)

Երբ եւրոպական քաղաքի մը մէջ ապրող Անթիլիասի դպրեվանքէն շրջանաւարտ սարկաւազի մը բարեկամ մը կը հարցնէ. «Ի՞նչ կ'ընես, ինչպէ՞ս կ'ապրիս, ապրուստդ ինչպէ՞ս կ'ապահովես», ան հետեւեալ սրամիտ պատասխանը կու տայ. «Ես հիմա երեք սեղանի կը սպասարկեմ: Երկուշաբթիէն շաբաթ մարդոց ստամոքսի սեղանին կը սպասարկեմ (ճաշարանի մը մէջ կ'աշխատեմ). իրիկունները հայ մամուլի սեղանին կը սպասարկեմ (հայ թերթի մը սրբագրիչ էր). կիրակիները Աստուծոյ սուրբ

սեղանին կը սպասարկեմ (հայ եկեղեցիի մը մէջ սարկաւագութիւն կ'ընէր)»:

(127)

1984-ին, որպէս Գարեգին Բ. կաթողիկոսի գաւազանակիր, վեհափառ հայրապետին կ'ընկերանամ Յունաստանի վրայով Դանիա այցելութեան ընթացքին: Աթէնքի մէջ, երաժիշտ Սահակ արք. Այվազեան վեհափառը կը հիւրընկալէ իր տունին մէջ եւ դաշնակի վրայ իր հեղինակած կտորներէն կը նուագէ: Գարեգին կաթողիկոս առ ի գնահատանք կ'ըսէ սրբազանին. «Տաճատ սրբազանին հիմնադրամով Անթիլիասի մէջ պիտի հրատարակեմ երաժշտական ստեղծագործութիւններդ»: Սահակ սրբազան կը պատասխանէ. «Շնորհակալ եմ ձեր ազնիւ առաջարկին համար, սակայն մերժելով կը մերժեմ, որովհետեւ Տաճատ սրբազանը ո՛չ ականջ եւ ո՛չ ալ ձայն ունէր...»:

(128)

Արսէն արք. Պերպերեանն է պատմողը. «Վազգէն Ա. կաթողիկոսի գաւազանակիրն եմ՝ տակաւին երիտասարդ վարդապետ եւ Երեւան-Մոսկուա-Փարիզ երկար ու յոգնեցուցիչ ճամբորդութեամբ վերջապէս կը ժամանենք Փարիզ: Բարերարներ եւ ազգայիններ, Սերովբէ սրբազանին գլխաւորութեամբ, մեզ կը դիմաւորեն ու պանդոկ կը տանին: Կը բարձրանանք վեհափառ հայրապետին յարկաբաժինը: Փոխանակ առիթ տալու, որ ան հանգիստ ընէ, կը շրջապատեն զինք եւ ոտքի վրայ կը շարունակեն զրուցել: Գիտես, վեհափառը շատ փափկանկատ էր եւ չըսէր, որ յոգնած է, անօթի է, ծարաւ է: Նոյնիսկ չի՛ նստիր: Թերեւս կը մտածէ, որ եթէ ոտքի մնայ կրնան անդրադառնալ, թէ պետք է աւելի շուտ մեկնին: Սակայն անօգուտ. հասկցող չկայ: Ես ալ ուժասպառ եմ, բայց քիչ մը անդին գաւազանը բռնած կայնած եմ վեհափառին ետեւը: Մէյ մըն ալ կը նշմարեմ, որ երկուքիս միջեւ կլոր սեղանիկի մը վրայ պտուղներու բլուր մը կայ: Երբ ամեն մարդ խօսակցութեամբ տարուած է, ձեռքս կը նետեմ տանձի մը եւ չար բախտէս պտուղներու բլուրը փուլ կու գայ եւ վեհափառին ու խօսա-

կիցներուն ոտքերուն միջեւ կը թաւալի: Վազգէն կաթողիկոս ետ կը դառնայ եւ զարմացկոտ կը յարէ. «Էս ի՞նչ պատահեց»: Իսկ ես առանց ձայն հանելու կը սկսիմ պտուղները հաւաքել եւ փլած բլուրս վերականգնել ու կ'անդրադառնամ, որ պտուղները *փլասթիք տեքորասիոն* էին...»:

(129)

Լիբանանէն Ժընեւ ժամանած պետական բարձրաստիճան պաշտօնատար մը Միացեալ Ազգերու Կազմակերպութեան ընդհանուր քարտուղարին Միջին Արեւելքի հարցերու պատասխանատուին բջիջայինին կը հեռախօսէ եւ կ'առաջարկէ, որ յաջորդ հինգշաբթի, ժամը 1-ին, «Ինթերգոնթինոնթալ» պանդոկը ճաշի հանդիպին: Պատասխանատուն կը հաստատէ ժամադրութիւնը: Հինգշաբթի օր, ժամը 1-ին 10-ը մնացած լիբանանցին պանդոկին ճաշարանը կը հասնի եւ մինչեւ ժամը 1.15 իր հիւրին կը սպասէ: Ապա կը հեռախօսէ եւ կը հարցնէ ուշացումին պատճառը: Միւսը կը պատասխանէ, թէ ինք ճիշդ ժամը 1-էն ի վեր Փարիզի «Ինթերգոնթինոնթալ» պանդոկի ճաշարանը զինք կը սպասէր: Փաստօրէն կը պարզուի, որ երբ լիբանանցին Ժընեւէն ՄԱԿ-ի պատասխանատուի բջիջայինին հեռախօսած եւ Ժընեւի «Ինթերգոնթինոնթալ» պանդոկին համար պայմանաւորուած է, ան արդէն իսկ գործով Փարիզ կը գտնուէր եւ Փարիզի «Ինթերգոնթինոնթալ» պանդոկը գացած է...:

Ահաւասիկ բջիջայինը ունի նաեւ իր անպատեհութիւնները...:

(130)

Նայրոպի (Քենիա) եւ միջեկեղեցական ժողովի մը եւ տեղւոյն աւետարանական եկեղեցիի պատուելին հետեւեալը կը պատմէ. «Երբ Եւրոպայէն առաջին միսիոնարները կու գան Ափրիկէ եւ կը սկսին Աստուածաշունչը քարոզել, կ'անդրադառնան, որ հոն համարներ կան, որոնք ափրիկեցիները պիտի չկարենան հասկնալ. ուրեմն զանոնք կը պատշաճեցնեն մեր տեղական պայմաններուն», եւ մեզի գործնական օրինակներ կը թուէ իրենց աւանդութիւններէն ու բարքերէն եւ զանոնք կը համեմէ նահապետական զրոյցներով: Կը յիշեմ մեր Գողթան երգերու պատառիկ-

ները եւ կ'ափսոսամ, որ որքա՛ն բան կորսնցուցած ենք...: Չեմ մոռցած պատուելիին տուած սա այնքա՛ն դիպուկ օրինակը. «Սաղմոսներուն մէջ կը կարդանք. «[Աստուած] *Ձիւնը կը պարգեւէ բուրդի պէս, եղեամ կը ցանէ մոխիրի պէս*» (Սղ 147.16): Մենք թարգմանած ենք. «*Բամպակը կը պարգեւէ բուրդի պէս, եղեամ կը ցանէ մոխիրի պէս*», որովհետեւ մեր մօտ ձիւն չի՛ գար. մեր ժողովուրդը ձիւնի շնորհաբեր զգայնութիւնը չունի, սակայն բամպակինը ունի»:

(131)

2004-ին Ս. Էջմիածինէն եւ Անթիլիասէն վեց սրբազան Գահիրէ կը գտնուինք միջեկեղեցական ժողովի եւ այլ հանդիսութիւններու մասնակցելու համար: Եգիպտոսի առաջնորդն ու ազգային իշխանութիւնը Նեղոս գետի վրայ շրջան ընող նաւուն վրայ ընթրիքով կը պատուէ մեզ: Ընթրիքի կիսուն բարձրաձայն երաժշտութիւն կը հնչէ եւ պարուհի մը կը մտնէ նաւուն առաջին յարկը, ուր այլ սեղանակիցներու հետ կ'ընթրենք նաեւ մենք եւ կը սկսի պարել սեղանին գլուխը բազմած Տիրայր արք. Մարտիկեանին մօտ: Սրբազան հայրը անմիջապէս տեղէն կ'ելլէ եւ երկրորդ յարկ կը բարձրանայ, իսկ պարուհին ուրիշ սեղաններ կ'երթայ: Քիչ ետք Տիրայր սրբազան երկրորդ յարկէն վազելով առաջին յարկ կը վերադառնայ եւ իրեն յատուկ գուարթախօսութեամբ ազգային իշխանութեան ատենապետին կ'ըսէ. «Չգիտցայ, որ ինծի համար բերեր էիք այս պարուհին. ուր որ գացի ետեւէս եկաւ: Հազիւ վեր փախած էի եւ պատշգամը կանգնած գետը կը դիտէի՝ ետեւէս վեր հասաւ...»:

Կորոշենք յաջորդ օրը երեկոյեան վեց սրբազաններով Հիլթըն պանդոկը հանդիպիլ եւ սուրճ մը առնել: Երբ հոն կը հասնինք՝ կը զարմանանք, որ ասեղ ձգելիք տեղ չկայ: Երկար տարիներ Միջին Արեւելք ծառայած փորձառու սրբազան մը կ'ըսէ. «Հինգ վայրկեան սպասեցէք, ես հիմա տեղ բանալ կու տամ», եւ քիչ մը անդին կայնած սպասեակին կը մօտենայ ու ձեռքը գումար մը կը դնէ: Մէյ մըն ալ կը տեսնենք, որ սպասեակը պանդոկին ներսէն կլոր սեղան մը դարձնելով եւ քանի մը սեղաններ ասդին-անդին հրելով տեղ կը բանայ եւ սրճարանին ճիշդ կեդրոնը կը

նստեցնէ մեզ: Հիւրընկալ սրբազանը կը յարէ. «Այս երկիրներուն մէջ *կարսոնին* նուէրը սկիզբէն եւ առատ եթէ տասն անկարելին կարելի կըլլայ»:

(132)

Եգիպտոսի առաջնորդ Աշոտ եպս. Մնացականեանն է պատմողը. «Գիտէք, մեր մօտ *Ֆուլն* ու *Ֆալաֆիլը* շատ ընդհանրացած ճաշեր են: Հայաստանէն նոր եկած եմ Եգիպտոս եւ երկուքին ալ ծանօթ չեմ: Առաջնորդարանի պաշտօնեաները անընդհատ *Ֆուլը* կը գովեն: «Սրբազան հայր, կառքով մինչեւ Առաջնորդարանի փողոցը եկող մարդ մը կայ, որ այնքա՛ն համով *Ֆուլ* ունի, պէտք է մէյ մը փորձէք, չէք զոջար եւ ամեն օր պիտի ուզէք»: Վերջապէս զիս կը համոզեն: Գրասենեակիս պատուհանէն կը նայիմ, որ Առաջնորդարանի մեր սպասաւորը մեծ ամանը բռնած կարգի կեցած է *Ֆուլ* ծախողին կառքին քովը, մինչ ծախողը *Ֆուլը* կը լեցնէ եւ իշուկն ալ պոչը ամանին մէջ կը մտցնէ-կը հանէ: Հիմա հասկցա՞ք, թէ ինչո՞ւ շատ համով *Ֆուլ* ունի այս մարդը...»:

(133)

Վանգուվըր հոգեւոր հովիւ եղած առաջին երկու տարիս համալսարանը կապրէի եւ կը ճաշէի: Օր մը կորոշեմ մօտակայ չինական ճաշարանը ընթերել: Վեց սեղանով փոքրիկ ճաշարան մըն է. մարդը խոհարարն է եւ կինը՝ սպասեակը: Նախ ապուր կապսպրեմ. շատ համով է, բայց քանի մը դգալ խմելէ ետք կնոջ շնորհակալութիւն կը յայտնեմ եւ կը խնդրեմ, որ տանի եւ գլխաւոր ճաշը բերէ: «Զսիրեցի՞ք արդեօք», ազնւօրէն հարց կու տայ: «Սիրեցի, շատ համեղ էր, սակայն կը խնդրեմ, որ տանիք», կը պատասխանեմ: Կինը կը տանի եւ տասը վայրկեան յետոյ հաւն ու *փիլաւը* կը բերէ: Ասկէ ալ մի քանի դգալ կուտեմ եւ հաշիւը կը խնդրեմ: Այս անգամ չինացի կինը մայրական գուրգուրանքով կըսէ. «Կը ներէք. եթէ մեր այս ճաշերը չհաւնեցաք, մի՛ վճարէք. ձեզի ուրիշ ճաշ հրամցնենք. ձուկ, միս, ի՛նչ որ ուզէք: Եթէ անոնք ալ չսիրէք, դարձեալ մի՛ վճարէք: Մենք կուզենք, որ մեր յաճախորդները ուրախ մնան, միշտ մեր մօտ գան եւ մեզի նոր յաճախորդներ դրկեն»: Կնոջ սրտբացութենէն քաջալերուած կը պա-

տասխանեմ. «Դուք շատ անկեղծ էք եւ ձեր ճաշերը շատ համով են: Շատ ուրախ եղայ, որ ձեր ճաշարանը եկայ: Ես չինական ճաշ շատ կը սիրեմ եւ նորէն պիտի գամ: Յայտնեմ, որ ես 11 տարեկանիս վանք մտած եմ, 19 տարեկանիս վարդապետ ձեռնադրուած եմ, վանքին մէջ ապրած եմ եւ միշտ հաւաքաբար ճաշած եւ աղօթած եմ. հիմա 25 տարեկան եմ եւ Լիբանանէն Վանգուվըր առանձին եկած եմ՝ ուսանելու ու հովուութիւն ընելու եւ այսօր առաջին անգամ ըլլալով առանձինս ճաշարան եկայ եւ ահաւասիկ չկրցայ ճաշ ուտել»: Չեմ գիտեր եթէ չինացի «մաման» ամբողջապէս հասկցաւ ըսածս, սակայն ես ստիպուած եղայ վճարելու եւ անմիջապէս ճաշարանէն դուրս ելլելու, որովհետեւ մաքուր օդի խիստ կարիքը ունէի...:

(134)

Մօրենական մեծ մայրս Ալեքսանտրէթէն թրքախօս յոյն եղած է: Մայրս կը պատմէ, թէ մայրը իր երկու աղջիկներուն սորվեցուցած է, որ երբ անախորժ հիւր մը գայ իր տունը եւ ինք «Մավրօ» (յունարէն՝ «սեւ») ըսէ՝ անմիջապէս սեւ սուրճ կը հրամցնեն, որպէսզի ան խմէ եւ մեկնի: Այլապէս հիւրը կը մեծարեն հարց տալով, թէ ինչպիսի՞ սուրճ կը փափաքի խմել եւ ըստ այնմ կը պատրաստեն եւ քիչ մը ուշ կը հրամցնեն...:

(135)

Հիւսիսային Ամերիկայի մեր քահանայ հայրերէն մէկն է պատմողը. «Հանգստեան կոչուած ծխական մը ունիմ, որ յաճախ օրուան ընթացքին եկեղեցիին գրասենեակը կու գայ եւ ի միջի այլոց կ'ըսէ. “Տէ՛ր հայր, երբ որ մեռնիմ, դո՛ւն զիս պիտի թաղես եւ աղուոր դամբանական մըն ալ պիտի խօսիս: *Ուիլիս* (կտակ) մէջ գրած եմ եւ մեծ գումար մըն ալ ձգած եմ ասոր համար”: Գիտես, Ամերիկայի մէջ ամեն բան դրամով կ'ըլլայ, մարդը *կարանթի* կը կապէ կոր: Այնքան գլուխս կ'արդուկէ՝ մեռնիմ-դամբանական, դամբանական-մեռնիմ, օր մըն ալ այլեւս կ'ըսեմ իրեն. “Եթէ ես քեզմէ առաջ մեռնիմ, ի՞նչ պիտի ըլլայ: Եկո՛ւր ասանկ ընենք: Հաշուէ որ մեռեր ես. եկեղեցի կը մտնենք, մեռելի սնտուկի սեղանին վրայ կը պառկիս,

թաղումի կարգը կը կատարեմ, ուզածիդ պէս դամբանական ալ կը խօսիմ եւ փարան ալ ինծի *գէշ* (կանխիկ) կը վճարես»: Երկուքս ալ կուշտ ու կուռ կը խնդանք եւ մեր բարեկամը անգամ մըն ալ այս նիւթը չարծարծեր...»:

(136)

1986-ի օգոստոսին, երբ որպէս հոգեւոր հովիւ եւ համալսարանական ուսանող Վանգուվըր կը հասնիմ, Հայ յեղափոխական բանակի տղոց կողմէ 1985-ի Օթթաուայի թրքական դեսպանատունի գրաւումէն տակաւին միայն մէկուկէս տարի անցած էր, եւ պատմելիք դէպքս ժամադրութիւն յարգելու օգտակար դաս մը կը սորվեցնէ ինծի:

1987-ի մարտին հեռաձայն մը կը ստանամ Օթթաուայի կեդրոնական կառավարութեան ապահովական գրասենեակէն, որ կը յայտնէ, թէ իր բարձրաստիճան պաշտօնեաներէն մին ինծի յարմար օրը եւ ժամուն յատուկ ժամադրութեամբ Օթթաուայէն Վանգուվըր պիտի գայ եւ հետս տեսնուի, որպէսզի իմանայ, թէ Վանգուվըրի հայ համայնքը 24 ապրիլը ինչպէս պիտի նշէ: Հեռախօսողին թիւը կ'առնեմ եւ կը խոստանամ մի քանի օրէն պատասխանել:

Անմիջապէս կապ կը պահեմ մեր եկեղեցիի հոգաբարձութեան (թաղականութեան) ատենապետին հետ եւ հարց կու տամ, թէ ի՞նչ պէտք է ընեմ: Պէտք եղած լուսաբանութիւնը ստանալէ ետք՝ երկու օրէն կը կապուիմ Օթթաուային հետ եւ շաբթուան մէջ օր մը, առաւօտեան ժամը 10-ին, եկեղեցիի գրասենեակս կը ժամադրուինք: Ճշդուած օրէն ու ժամէն 15 վայրկեան առաջ կը հասնիմ եւ 10 վայրկեան հիւրիս կը սպասեմ, ապա կը մեկնիմ: Ծուխը փոքր է եւ քարտուղարուի չունիմ. ես ալ երկու օրը անգամը եկեղեցի կը հանդիպիմ, նամակները կ'առնեմ եւ հեռախօսային պատգամները կը ստուգեմ ու կը պատասխանեմ: Նամակատուփին մէջ այցեքարտ մը կը գտնեմ, որուն վրայ արձանագրուած է պետական բարձրաստիճան պաշտօնեային անուն-մականունը եւ ետեւը հետեւեալը. «Ներողամիտ կըլլաք, որ երէկ 15 վայրկեան ուշացայ մեր ժամադրութեան: Եթէ պէտք զգամ՝ նորէն կը ժամադրուիմ ձեզի հետ»:

Ենթադրութիւնս այն է, որ մարդը ճիշդ ժամուն եկած է եւ եկեղեցիին դիմացը գտնուող սրճարանէն հետեւած, որ ես յարգած եմ ժամադրութիւնս եւ իր հետ հանդիպելու վերապահութիւն չունիմ, առաւել՝ ինք ալ իր

հերթին կարիք չէ զգացած այլևս զիս հարցաքննելու: Երբ այս մանրամասնությունները կը յայտնեմ մեր պատասխանատու ազգայիններուն, կը հաստատեն ենթադրությունս:

(137)

Սուրեն արք. Գաթարոյեան Մոնթրէալէն Պէյրութ պիտի վերադառնայ եւ յաջորդ օր Բերիայի թեմի առաջնորդարանի պաշտօնական ինքնաշարժով Հալէպ պիտի երթայ: Մինչ այդ կաթողիկոսարանի հիւրընկալ Վարդան արք. Տեմիրճեան Անթիլիասի պաշտօնական ինքնաշարժով Պէյրութի օդանաւակայան պիտի երթայ Սուրեն սրբազանը դիմաւորելու եւ մայրավանք բերելու: Բերիայի թեմի առաջնորդարանի պաշտօնական ինքնաշարժին շարժավարը կը մօտենայ Վարդան սրբազանին եւ ինք եւս կը փափաքի օդանաւակայան երթալ: Վարդան սրբազան կը պատասխանէ. «*Բրոթոքոլը* չ'արտօներ քու գալը»: Շարժավարը *բրոթոքոլին* ինչ ըլլալը չիմանալով՝ կը կարծէ, որ իր փոխարէն ուրիշի մը նախապատուութիւն կը տրուի Անթիլիասի պաշտօնական ինքնաշարժին մէջ եւ յետոյ Սուրեն սրբազանէն ներողամտութիւն կը խնդրէ, որ օդանաւակայան չ'երեկած զինք դիմաւորելու համար...:

(138)

Ասորի ուղղափառներու Հալէպի առաջնորդն է պատմողը. «Ընդհանրապէս սուրբ պսակի օրհնութեան յաջորդող խրախճանքին չեմ երթար, որովհետեւ եթէ մէկուն երթաս եւ միւսին չ'երթաս՝ անյարմար կ'ըլլայ: Առաւել՝ այս խրախճանքները մեր մօտ շատ ուշ կը սկսին, գոնէ կէս զիշերին եւ երբեմն նոյնիսկ առաւօտեան ժամը 1-ին, եւ մեզի հոգեւորականներուս համար ժամավաճառութիւն է անոնց ներկայ գտնուիլը, սակայն մարդ ենք եւ կը սխալինք, այդպէս ալ եղաւ: Անցեալ շաբաթ շատ մօտիկ բարեկամի մը տղուն սուրբ պսակը օրհնեցի եւ թէ՛ ծնողքը եւ թէ՛ նորապսակ գոյգը խնդրելով խնդրեցին, որ իրենց խրախճանքին գոնէ կէս ժամ ներկայ գտնուիմ, եւ ըսին, թէ խրախճանքը ճիշդ ժամը 11-ին պիտի սկսի եւ անշուշտ ամենէն առաջ զիս պիտի հրաւիրեն, որ սեղանը օրհնեմ:

Լաւ գիտնալով տեղական սովորութիւնը, երկու քահանայի ընկերակցութեամբ ժամը 11.30-ին խրախճանքի ճաշարանը գացի եւ ինչ տեսնեմ. դեռ նոր աթոռ-սեղան կը շարեն կոր: Ես գիտէի արդէն գլխուս գալիքը, բայց ուշ էր. մէյ մը “Այո” ըսած էի. սակայն ամենէն վիրաւորականը այն էր, որ ճաշարանը յարդարող սպասեակները իրարու կը փսփսային. “Կերելի սրբազան հայրը այնքա՛ն անօթի է, որ կանուխ եկեր է...”»:

(139)

Եփրեմ արք. Թապագեանն է պատմողը. «Առաւօտ կանուխ տունէս դուրս կելլեմ ամենօրեայ մարզանքիս համար եւ կը նշմարեմ, թէ դիմացէս Պէյրութի առաջնորդարանիստ Ս. Նշան եկեղեցիի նշանաւոր լուսարարին՝ Հայրապետին քալուածքն ու տարիքը ունեցող մարդ մը կու գայ իմ կողմս: Որքան կը մօտենայ ան, աւելի յստակ կը դառնայ պատմական տիպար Հայրապետին ուրուագիծը: Կայ-չկայ մեր Հայրապետն է, կը մտածեմ: Առանց “Բարի լոյս” ըսելու կանցնինք իրարու քովէն: Է՛հ, գիտես, Ամերիկայի մէջ անծանօթներ իրար բարեւելու բարի սովորութիւնը չունին Միջին Արեւելքի պէս: Հազիւ տասը քայլ հեռացած ենք իրարմէ, ուժեղ ներքին մղում մը կունենամ ետ դառնալու եւ “Հայրապետ” պոռալու: Մարդը կը կենայ, խոցող աչքերով ինծի կը նայի եւ կըսէ. “Հայրապետը Ս. Նշան մնաց...”»:

Ի՛նչ դիպուկ խօսք: Հատորներ կրնան գրուիլ այս բնանիւթով...:

(140)

Դէպքը կը պատահի Լիբանանի փառքի օրերուն, երբ աշխարհի ամեն կողմէն եւ մասնաւորաբար արաբական երկիրներէն մայրիներու երկիրը կու գային վայելելու համար Միջին Արեւելքի Փարիզին անհամար բարիքները:

Անթիլիասի “Հալապի” ճաշարանի սպասեակներէն մին է պատմողը. «Ամեն օր, կէսօր եւ իրիկուն, ճաշարանը ասեղ ձգելիք տեղ չկայ: Շատ հիւրեր ունինք Սէլուտական Արաբիայէն եւ Արաբական Ծոցի երկիրներէն, որոնք նուազագոյնը քսան-քսանհինգ հոգիով կու գան: Ահա այսպիսի

խումբ մը կու գայ եւ կը նստի լիբանանցիներու սեղանի մը կողքին, որ իր ճաշը աւարտած եւ պտուղ ու անուշեղէն կ'ուտէր: Խաղող եւ կեռաս լուալու համար սեղանին մէջտեղը, խորունկ ամանի մը մէջ, սառով ջուր դրած ենք եւ ամեն մարդ պտուղը կը լուայ ու կ'ուտէ: Քովի սեղանի արաբական երկիրի հիւրերը ամեն բան կապսպրեն եւ իրենց սեղանի կեդրոնական պնակը քարիտէգի մեծ ափսէն կը հանդիսանայ, որուն կողքին կը դնենք տաք ջուրը, որպէսզի քարիտէգ ճաշակողները իրենց ձեռքերը մաքրեն եւ ապա այլ կերակուրներ ձեռնեն. իսկ մեր այս հիւրերը,– կէրելի առաջին անգամ քարիտէգ կ'ուտեն կոր –, քովի պտուղի սեղանը կապկելով, կը սկսին քարիտէգները տաք ջուրին մէջ լոգցնել եւ ապա ճաշակել...: Մենք ճար չունինք. մեր խնդուքը ծածկելու համար խոհանոց կը վազենք»:

(141)

1991-ի Մեծ պահքին Նիւ Ճըրզիէն Մարսիլիա կերթամ ընկերոջս տղուն գաւակին մկրտութեան կնքահայր ըլլալու համար: Մկրտութիւնը կիրակի տեղի պիտի ունենայ Մարսիլիայի արուարձաններէն մէկուն փոքր հայ եկեղեցիին մէջ՝ սուրբ պատարագէն յետոյ, եւ կը յանձնարարեմ բոլորին, որ կանուխ գան եւ սուրբ պատարագին մասնակցին: Գրեթէ սուրբ պատարագի սկզբնաւորութեան երեսուն հոգիով եկեղեցի կը մտնենք: Պատարագիչն է հանգստեան կոչուած Յակոբ արք. Վարդանեանը, որ Մեծ պահք ըլլալով փակ վարագոյրի ետին կը պատարագէ եւ սուրբ պատարագի աւարտին երբ խորանէն վար կ'իջնէ քարոզելու համար՝ կը զարմանայ եկեղեցին բերնէ-բերան լեցուն տեսնելով:

Ան իր քարոզը կը սկսի հետեւեալ բառերով. «Միրելի՛ հաւատացեալներ, ես գիտեմ որ դուք այսօր կնունքի համար եկեղեցի եկեր էք, եւ չիմացայ ե՞րբ եկեղեցի մտաք, որովհետեւ վարագոյրը գոց էր եւ հիմա ձեզ տեսայ: Յանենայնդէպս բարի եկեր էք», եւ կը շարունակէ աւելի քան երեսուն վայրկեան քարոզել՝ այս ներածականէն ետք. «Քաջ գիտնալով, որ Մեծ պահքի միւս կիրակիներուն եկեղեցի պիտի չգաք, ձեզի միայն այս կիրակիի՝ Արտաքսման կիրակիի քարոզը պիտի չխօսիմ, այլ՝ բոլոր կիրակիներուն», եւ կը սկսի Բուն բարեկենդանէն ու կ'աւարտէ Գալըստեան կիրակիով...:

Սուրբ պատարագէն ետք, կը մօտենամ, ինքզինքս կը ծանօթացնեմ եւ կը շնորհաւորեմ իր Թորգոմ պատրիարք Մանուկեանի կողմէ Երուսաղէմի պատրիարքական փոխանորդ նշանակումը, որ մի քանի օր առաջ մամուլէն կարդացած էի, որուն կը պատասխանէ. «Շնորհակալ եմ. բայց եթէ պատրիարքը կը սպասէ կոր, որ ասոր համար Երուսաղէմ երթամ՝ շատ երկար պիտի սպասէ. ես փոխանորդութիւնը հոսկէ ալ կրնամ վարել»: Պետք է ըսել, որ այդպէս ալ ըրաւ, եւ շատ ձեռնհասօրէն վարեց...:

(142)

Գարեգին Բ. կաթողիկոս կը պատմէ. «Նոր Զուղա առաջնորդ եղած շրջանիս հայաբնակ գիւղի մը մէջ Մարկոս անունով քահանայ մը ունէինք, որ իր անունը “Մարգոս” կը գրէր: Նախ խորհեցայ, որ վրիպակ է. սակայն երբ նամակներուն մէջ միշտ նոյնը կրկնուեցաւ, առանձինն քովս կանչեցի եւ նկատողութիւն ըրի, թէ ինչպէս կրնայ ըլլալ, որ Մարկոս աւետարանիչին անունը “Մարգոս” կը գրէ, երբ յաճախ գոնէ եկեղեցիին մէջ “Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Մարկոսի” կը կարդայ: Տէր հայրը զարմացաւ եւ ըսաւ, թէ ճիշդ այդ պատճառաւ փոխան Մարկոսի “Մարգոս” կը գրէ, որովհետեւ ինք Մարկոս աւետարանիչը չէ...»:

(143)

1963-ին, Անթիլիասի մայրավանքին մէջ, Խաղ արք. Աջապահեանի 80-ամեակը կը տօնուի եւ միաբան մը իր սիրտի խօսքը արտասանած պահուն կը բարեմաղթէ. «Սրբազան հայր, կաղօթեմ Աստուծոյ, որ ձեզ քաջառողջ պահէ եւ մինչեւ 100 տարի ձեր հայրական շուքը մեր վրայէն անպակաս ընէ»: Խաղ սրբազան դժգոհ կը մնայ եւ կը գոչէ. «Քի՛չ է, *օղլո՛ւմ*, հարիւրը քիչ է...»: Դժբախտաբար 1968-ին, 85 տարեկանին, կը վախճանի:

Այլ պաշտօնական առիթով, որպէս կաթողիկոսական տեղապահ, Խաղ արք. Աջապահեան հանդիսութեան մը փակումի խօսքը պիտի կատարէ եւ նկատի ունենալով սրբազանին տարիքն ու սահմանափակ կարողութիւնը՝ դիւանապետը խօսքը նախօրոք գրած եւ յանձնած է իրեն,

ինքն ալ ընթերցելու փորձը կատարած է: Ամեն բան յաջող կ'անցնի, սակայն հագիւ փակումի խօսքը աւարտած՝ թուղթը կը ծալլէ, գրպանը կը դնէ եւ իրեն յատուկ հեղինակութեամբ կ'ըսէ. «Հիմա քանի մը խօսք ալ մե'ր կողմէն...»:

(144)

Առաւօտեան ժամը հինգին Պէյրութէն Երեւան կը հասնիմ: Ընկերս կը դիմաւորէ զիս եւ կ'ըսէ, թէ տուն մտնելէն առաջ կը փափաքի, որ շուկայէն անցնինք եւ պտուղ գնենք: Վերջապէս ճամպրուկներովս եւ Երեւանի շուկայէն մեր գնած թարմ պտուղներով, որոնց մէջ խոշոր ձմերուկ մըն ալ կայ, տուն կը մտնենք: Մինչ ընկերս, զաւակները եւ ես նստասենեակը նստած կը խօսակցինք, սուրճի ափսէն ձեռքը բռնած տանտիկինը խոհանոցէն մեր քով կու գայ եւ խնդալով կ'ըսէ. «Տատիկը զարմացել է, թէ սրբազանը ինչի՞ համար էդքան միրգ է բերել Պէյրութից Երեւան. եւ մանաւանդ հարց է տալիս, թէ ինքնաթիռի մէջ ո՞նց է շալակել էդ խոշոր ձմերուկը...»:

(145)

Կոստանդնուպոլիսի Մեսրոպ պատրիարք Մութաֆեան եւ ուսողագէտ եւ Կիլիկիայի պատմութեան մասնագէտ ֆրանսահայ Արմէն Մութաֆեան առաջին անգամ ըլլալով իրարու կը հանդիպին: Պաշտօնական ծանօթացումէն ետք, Մեսրոպ սրբազան կը հարցնէ. «Ես Գլոտ Մութաֆեանի մը ֆրանսերէն յօդուածները կարդացած եմ, ձեզի ազգական կ'ըլլա՞յ»: Արմէն, ժպիտը դէմքին կը պատասխանէ. «Նոյնինքն ես եմ, հայկական շրջանակին մէջ “Արմէն” կը կոչուիմ, իսկ ֆրանսականին մէջ՝ “Գլոտ”»:

(146)

2015-ի Ս. ծնունդի համերգի փակումին խօսքը կը կատարեմ Նիկոս-
իայի մէջ եւ գնահատանքս կը յայտնեմ Ս. Աստուածածին եկեղեցիի
երգչախումբին մաս կազմող կրտսերներուն ու երէցներուն եւ պատկեր մը
գործածելով կըսեմ՝ «փոքր տարիքէն մինչեւ անսահմանափակ տարիքի
պատկանողներ»։ Ամեն բան շատ լաւ կաւարտի եւ բոլորը գոհ տրա-
մադրութեամբ իրենց տուները կերթան։

Յաջորդ առաւօտ, տէր հայրը առաջնորդարանի գրասենեակս կը
մտնէ եւ կըսէ. «Այս առտու կանուխ անակնկալ հեռաձայն մը ստացայ։
Երգչախումբի ամենատարեց անդամուհին էր խօսողը. ձեզմէ շատ նեղուեր
է։ Սրբազանը «անսահմանափակ տարիք» ըսելով ինծի կականարկէր ըսաւ
եւ աւելցուց՝ ես այլեւս երգչախումբէն պիտի չերգեմ։ Ինչ որ ըրի չկրցայ
խօսք հասկցնել, թէ չարաչար կը սխալէր։ Լաւ կըլլայ, որ մէյ մը հետը
խօսիք»։

Անմիջապէս կը հեռախօսեմ ենթակային, անհրաժեշտ լուսաբանութե-
անը կու տամ եւ սիրտը կը շահիմ։ Բարեբախտաբար ան կը շարունակէ
մաս կազմել երգչախումբին եւ իր քաղցր ձայնով ու անուշ ներկայութեամբ
մեզի հետ մնալ։

(147)

Լոնտոնի տիկին Թագուհին կը հեռախօսէ իր ընկերուհիին՝ Զուար-
թին տունը։ Հեռաձայնին կը պատասխանէ փոքրիկ Սթիւը եւ կը հարցնէ.
«Բարեւ ձեզ։ Ո՞վ կ'ուզէք»։ Տիկին Թագուհին կը հարցնէ. «Զուարթը տո՞ւնն
է», եւ անմիջապէս կ'աւելցնէ. «Սթիւ, դո՞ւն ես խօսողը»։ Սթիւ կը պա-
տասխանէ. «Այո։ Մամաս տունը չէ։ Դուք ո՞վ կ'ըլլաք»։ Դիմացէն կը լսուի.
«Ես Թագուհին կ'ըլլամ։ Երբ մամադ տուն գայ, ըսէ որ Թագուհին հեռաձայն
բացաւ»։

Երբ Զուարթ տուն կը մտնէ, Սթիւ խանդավառուած կըսէ մօրը.
«Մա՛մ, գիտե՞ս թագուհին հեռաձայնեց եւ հետս հայերէն խօսեցաւ։ Չէի
գիտեր, թէ մեր թագուհին հայերէն ալ կը խօսի»։ Տիկին Զուարթ կը սկսի
խնդալ եւ կը պատասխանէ. «Տղա՛ս, հեռաձայնողը Անգլիայի թագուհին չէ,
այլ նոր ընկերոջդ՝ Թոմըսին մայրը, որուն անունը Թագուհի է...»։

(148)

Անգլիայի առաջնորդ Յովակիմ սրբազանն է պատմողը. «Նոր եմ եկել Լոնտոն եւ առաջին ոտնլուայի արարողութիւնը պիտի անեմ: Ինձ ասեցին, որ տեղական սովորութիւն է բոլոր փափաքողների ոտերը լուալ արարողութեան ընթացքում: Տեսայ, թէ եկեղեցին շատ ժողովուրդ կայ՝ խորանի վրայ տէր հայրին հարցրեցի. “Կօզնէ՞ս ինձ, որ միասին լուանանք էսքա՛ն մարդկանց ոտերը”: Տէր հայրը պատասխանեց. “Երբ Յիսուս իր աշակերտների ոտերը լուաց՝ Պետրոս առաքեալին չասեց, որ օգնի իրեն: Աւելի ճիշդ կը լինի, որ դուք մենակ լուաք...”:

(149)

2007-ին Լիմուրու եմ (Քենիա), Քրիստոնէական համաշխարհային համախմբումի համաժողովին մասնակցելու համար: Առաջին անգամն է, որ նուիրապետական կառոյց ունեցող պատմական եւ արդի ազատ եկեղեցիներու ու եկեղեցական մարմիններու մեծ թիւով ներկայացուցիչներ ի մի կու գան:

Սուրճի դադարին Ափրիկէի նորաբոյս եկեղեցիի հովիւ մը ինձի կը մօտենայ եւ քաղաքավարական փոխձանօթացումէն ետք կը հարցնէ. «Ձեր եկեղեցին ո՞ր թուականին հիմնուած է (ցանուած=planted)»: Կը պատասխանեմ. «Առաջին դարուն»: Չի՛ ձգեր, որ շարունակեմ եւ հակիրճ պատմական մը կատարեմ, մեծ խանդավառութեամբ կողջագուրուի հետս եւ կը բարձրաձայնէ. «Որքա՛ն ուրախ եմ, որ դուք եւ մենք Հոգեգալուստի օրը Երուսաղէմի վերնատունին մէջ գտնուած ենք եւ հրեղէն լեզուներու շնորհքով օժտուած», ու քիչ մը անդին կեցած կաթողիկէ եպիսկոպոս մը ցոյց տալով՝ կ'աւելցնէ. «Ոչ թէ ասոնց պէս, որ շատ աւելի ուշ քրիստոնէայ դարձան...»:

(150)

Նիւ Ճըրզի հոգեւոր հովիւ եմ եւ ամերիկահայ օրիորդ մը մեծահասակներուն կամաւորաբար անգլերէնի դաս կու տայ կիրակնօրեայ վար-

Ժաքանին դասարաններէն մէկուն մէջ: Հայրս ու մայրս ալ դասի կ'երթան եւ շատ գոհ են: Հայաստանցի ընկեր մը ունիմ, որ Ամերիկա փոխադրուած է եւ մինչեւ գործ գտնէ, եկամուտ ունենայ ու տուն վարձէ՝ ամիսներէ ի վեր մեր տունն է: Մայրս կ'ըսէ իրեն. «Մեր անգլերէնի դասերը իրիկուններն են: Ինչո՞ւ դուն ալ անգլերէն չես սորվիր կոր մեզի հետ»: Կը համոզէ երիտասարդը եւ իր հետ դասի կը տանի: Ուսուցչուհին եւ երիտասարդը կը համակրին իրարու եւ մի քանի ամիս յետոյ իրարու հետ կը նշանուին: Մայրս կ'ըսէ ընկերոջս. «Քեզի անգլերէն սորվելու եկուր ըսինք, օրիորդը առ չըսինք...»:

(151)

1982-ի փետրուարին, տակաւին նոր ձեռնադրուած աբեղայ, Հալէպ հրաւիրուած եմ Սրբոց Վարդանանց տօնին դասախօսելու համար: Առաջնորդը՝ Սուրէն արք. Գաթարոյեան ազգայինի մը տունը ընթրիքի հրաւիրուած է եւ զիս ալ հետը կը տանի: Ամչնալով քանի մը պատահական կ'ուտեմ: Մէջ մըն ալ տանտիկինը ամբողջ պնակս լեռնակուտակ կը լեցնէ: «Շնորհակալ եմ, բայց չեմ կրնար ուտել», կ'առարկեմ: «Վնաս չունի. պնակին մէջ ձգեցէք. պարապ պնակ չեմ սիրեր», կ'ըսէ: Քիչ մը ժամանակ անցնելէն ետք, առ քեզի նոր փորձանք: «Ինչո՞ւ չէք ուտեր կոր...» կը հարցաքննէ:

(152)

Մոնթրէալի հովիւր՝ Արմէն աւ. քիյ. Իշխանեան եկեղեցիին գրասենեակն է: Երիտասարդ մը եւ երիտասարդուհի մը ներս կը մտնեն եւ կ'ըսեն. «Տէ՛ր հայր, հիմա պսակուելու եկած ենք: Մի քանի վայրկեանէն կնքահայրը եւ կնքամայրն ալ կը հասնին»: Երբ խումբը կ'ամբողջանայ, տէր հայրը հայ կեդրոնի խոհանոցը կը հեռախօսէ եւ տիկին Զուարթին կ'ըսէ. «Աղուոր մը հագուէ, շքուէ եւ շուտ մը եկեղեցի եկուր»: Տիկին Զուարթ կը զարմանայ այս անակնկալ հրաւերին համար եւ եկեղեցի կը շտապէ: Տէր հայրը կը լուսաբանէ տիկին Զուարթը եւ կը հրահանգէ. «Դուն սա առաջին

նստարանին վրայ նստիր. գոնե վիտեռոյին մէջ թող ելլէ, որ պսակած ատենս հարսնետր մըն ալ կար եկեղեցիին մէջ...»:

(153)

Լիբանանի առաջնորդ եմ: Քահանայ մը կու գայ գրասենեակս եւ կըսէ, թէ Պուրճ Համուտի իր եկեղեցիէն երիտասարդ մը նշանուած է Այնճարէն աղջիկի մը հետ եւ կը փափաքի իրենց սուրբ պսակը Այնճարի եկեղեցիին մէջ օրհնել տալ: Տէր հայրը բացատրած է, թէ սուրբ պսակը պէտք է փեսային եկեղեցին կատարուի. այլապէս պէտք է թէ՛ իր եկեղեցիին եւ թէ՛ Այնճարի եկեղեցիին համապատասխան նիւթական նուէրը կատարէ: Երիտասարդը քահանային ըսած է, թէ ինք երկու տեղ վճարելիք դրամ չունի եւ սպառնացած ի գին ամեն բանի սուրբ պսակը Այնճարի եկեղեցիին մէջ ընել: Տէր հայրը ինձմէ յանձնարարութիւն կը խնդրէ այս հարցին բարօք լուծումին համար: Մէկ օր ժամանակ կը ճշդեմ պատասխանելու համար քահանային: Կը հեռախօսեմ Պուրճ Համուտի նոյն եկեղեցիին երկար տարիներ հովուութիւն կատարած ու այժմ հանգստեան կոչուած տէր հայրին եւ տեղեկութիւններ կ'ուզեմ այս երիտասարդին եւ անոր ընտանեկան պարագաներուն մասին: Քահանան մանրամասն կը զեկուցէ, թէ եկեղեցիին դիմացը կը բնակին, բարեկեցիկ ընտանիք մըն են՝ հայր, մայր եւ երկու տղայ ու մէկ աղջիկ, երկու նոր ինքնաշարժ ունին, յաջող գործատէր են, եւ կ'եզրակացնէ. «Օր մը իսկ եկեղեցի ոտք չեն կոխած»:

Յաջորդ օր ծխատէր քահանան քովս կը կանչեմ եւ հետեւեալը կը փոխանցեմ. «Փեսացուին կ'ըսես՝ Առաջնորդ սրբազանը կ'արտօնէ, որ սուրբ պսակը Այնճար կատարէք: Որովհետեւ դրամ չունիք, ո՛չ մէկ վճարում պիտի կատարէք եկեղեցիներուն. պայմանաւ, որ ուրիշ ծախսեր ալ պիտի չընէք՝ ո՛չ նկարիչ, ո՛չ առատ ծաղկազարդարում, ո՛չ ճոխ խրախճանք: Ո՛չ մէկ մսխում»: Մի քանի օր ետք տէր հայրը կու գայ եւ կը հաղորդէ. «Մեր երիտասարդը չհամաձայնեցաւ, եւ ըսաւ. “Ես առաջնորդարանէն միայն ժեսթ մը կը սպասէի կոր...”»:

(154)

Քանատայի առաջնորդ Խաժակ արք. Յակոբեան կիրականօրեայ քարոզին մէջ դպրեվանքին մասին կը խօսի եւ երիտասարդ ծնողներուն կը պատգամէ գոնէ երեք զաւակ բերել ու մէկ հատը եկեղեցիին նուիրել:

Յաջորդ շաբթուան ընթացքին, Մոնթրէալի Ս. Յակոբ դպրոցի խոհանոցին մէջ, տիկին Մարի, ի միջի այլոց, իր երեք տղայ ու մէկ աղջիկ ունեցող ընկերուհին՝ տիկին Սիլվան կը քաջալերէ ըսելով, որ լաւ կ'ըլլայ եթէ իր տղոցմէ մէկը վանք դրկէ: Սիլվա կը պատասխանէ. «Անանկ կ'երեւի կոր որ դուն Խաժակ սրբազանին փաստաբանն ես»: Շատ եկեղեցի չգացող Սիլվան անցեալ կիրակի եկեղեցի գացած եւ սրբազան հօր քարոզը լսած էր...: Ի՛նչ գուգադիպութիւն:

(155)

Հայրս լաւ ճանչցողներ գիտէին, որ ան սակաւախօս եւ հանդարտաբարոյ անձ մըն էր. իսկ հօրեղբայրս անոր հակապատկերը՝ կրակ ու բոց:

Օր մը իրենց մօտիկ ընկեր մը հետեւեալ պատկերաւոր սահմանումը կու տայ ինձի. «Եթէ թաղի մը մէջ երկու անձերու միջեւ կռիւ ըլլայ, հայրդ այդ փողոցը չի՛ մտնէր, ճամբան կը փոխէ. իսկ *ամմոդ* նոյնիսկ եթէ եօթը թաղ անդին գտնուի՝ վազելով կու գայ եւ կռիւին մէջ կը մտնէ»:

Կը յիշեմ, թէ երբ ճաշի նստած ըլլայինք, մեծ հայրս հօրեղբօրս դառնալով կը յանդիմանէր. «Ի՛նչ է *մօթորի* պէս կուտես կոր, ետեւէդ վազող չկայ». իսկ հօրս կ'ըսէր. «Ճաշդ դեռ չվերջացուցի՞ր, սեղանէն ելլելիք եղանք»:

Է՛հ, որքան մարդ՝ այնքան բնաւորութիւն:

(156)

Երեքշաբթի օր Մոնթրէալի Ս. Յակոբ դպրոցի խոհանոցը լուր կը հասնի, թէ եկեղեցիի աղօթքի քոյրերէն Սրբուհին մահացեր է եւ յաջորդ օր, առաւօտեան ժամը 11-ին եկեղեցիի կարգը պիտի կատարուի:

Նոյն օրը տիկին Պերճուհի գոյժը մօրը՝ Ովսաննա մայրիկին կը հաղորդէ եւ չորեքշաբթի առտու մայրը Ս. Յակոբ եկեղեցի հասցնելէն ետք՝ դպրոցին խոհանոցը իր գործին կերթայ:

Ովսաննա մայրիկ հագիւ կը նստի եկեղեցիին նստարանին վրայ, «ննջեցեալ» Սրբուհին կու գայ քովը կը նստի: Մայրիկը մի քանի անգամ Սրբուհիին կը նայի եւ գլուխը միւս կողմ կը դարձնէ՝ առանց բան մը ըսելու:

Յուդարկաւորութենէն ետք, երբ Պերճուհի մայրը տուն կը հասցնէ, ան ինքնաշարժին մէջ պատահածը կը պատմէ եւ իր զարմանքը կը յայտնէ:

Յաջորդ օր առեղծուածը կը լուծուի: Աղօթքի քոյրերուն մէջ երկու Սրբուհի կայ եղեր եւ Ովսաննա մայրիկին չճանչցած Սրբուհին եղած է մահացածը:

(157)

Հայաստան ներգաղթի օրերն են: Հօրենական թրքախօս մեծ հայրս շուկան զարտուղի իրարանցում կը տեսնէ, սակայն չհասկնար, թէ ի՞նչ կանցնի-կը դառնայ: Ի վերջոյ բարեկամներէն մին կըսէ իրեն, թէ բոլոր հայերը նաւով Հայաստան պիտի երթան: Անմիջապէս կերթայ կ'արձանագրուի եւ հապճեպով տուն կը հասնի ու մեծ մօրս կը հրահանգէ ճամբորդելու պատրաստուիլ: Մեծ մայրս իրար կանցնի եւ կըսէ. «Ա՛յ մարդ, կեցիր նայինք. ինչո՞ւ մենք առաջիններէն գացողը պիտի ըլլանք: Փա՛ռք Աստուծոյ, տուն-տեղ եւ գործ ունինք, կ'ապրուինք կոր»: Սակայն գիտնալով, թէ մեծ հայրս դիւրին-դիւրին իր միտքը պիտի չփոխէ, մեծ մայրս իրենց կնքահայրին կը դիմէ, որ մեծ հայրս համոզէ Հայաստան չերթալ: Մեծ մօրս ծրագիրը յաջողութեամբ կը պսակուի: Կնքահայրը կը բացատրէ մեծ հօրս, թէ Հայաստանի մէջ ամեն մարդ պարտաւոր է հայերէն խօսիլ: Մեծ հայրս կը պատասխանէ. «Ես այս տարիքէս յետոյ չեմ կրնար դպրոց երթալ եւ հայերէն սորվիլ», եւ նոյն փութով կերթայ ու անունը սրբել կու տայ Հայաստան գացողներու ցուցակէն:

(158)

Վանգուվրի հովուական ծառայութեանս տարիներուն լիբանանահայ ընտանիքի մը կը ծանօթանամ, որուն մանչուկը՝ Արան նոր սկսած է խօսիլ: Երբեմն երեկոյեան կ'այցելեմ այս նորակազմ ընտանիքին եւ միասին կ'ընթերնք: Հայր ու մայր հետս կը գրուցեն զիս «հայր սուրբ» կոչելով: Արան ալ սկսած է իմ ուշադրութիւնս գրաւելու համար՝ «հայր սուրբ» ըսել հայերէն-անգլերէն մանկական իւրայատուկ շեշտով: Օր մը, երբ ապուր կը խմենք, ինծի կը դառնայ եւ կը գոչէ. «This is you – HOT SOUP»: Արային ծնողքը եւ ես կուշտ ու կուռ կը խնդանք՝ անդրադառնալով, որ Արային համար ես «հայր սուրբ» չեմ, այլ՝ «hot soup» («տաք ապուր»)՝ մինչ Արան իր համով-հոտով տաք ապուրը կը դգալէ:

(159)

Մոնթրէալի մէջ, ընկերոջս աղջկան՝ Սիլվային «Ճաշակեսցուք» աղօթքը կը սորվեցնեմ եւ ան կանոնաւորապէս կը սկսի զայն ճաշերէն առաջ ուրախութեամբ արտասանել: Որոշ ժամանակ մը անցնելէ ետք, կ'ուզեմ ճաշերէն ետք արտասանուող «Փառք կերակրողին» աղօթքը եւս սորվեցնել Սիլվային եւ ան դժուար գտնելով կարգ մը բառերու եւ բայերու հնչիւնը կ'առարկէ. «Don't make a speech. Thank you, Յիսուս պապա, կ'ըսեմ կը վերջանայ»:

(160)

Պոլսոյ հոգեւորականներէն մին է պատմողը. Յունաց պատրիարքարանէն կը տեղեկացնեն, թէ Բարթողիմէոս տիեզերական պատրիարքը կը փափաքի մէկ ժամէն մեր Գարեգին պատրիարքին այցելել: Երբ Գարեգին պատրիարք կ'իմանայ, թէ Մեսրոպ սրբազան պատրիարքարանն է՝ կը հրաւիրէ, որ ան եւս իրեն միանայ յունաց պատրիարքին հետ տեսակցութեան համար: Մեսրոպ սրբազան Գարեգին պատրիարքին կը յայտնէ, թէ պանակէ չէ բերած եւ Գարեգին պատրիարք իր պանակէներէն մին փոխ կու տայ Մեսրոպ սրբազանին: Բարթողիմէոս պատրիարք Մեսրոպ սրբա-

զանին կրած փառաւոր պանակէն տեսնելով՝ կըսէ. «Այս ի՛նչ գեղեցիկ պանակէ է, սրբազա՛ն: Բարիով գործածես»: Մեսրոպ սրբազան կը պատասխանէ. «Շնորհակալ եմ. բայց իմս չէ: Մեր պատրիարքէն փոխ առի ձեզ դիմաւորելու համար»: Բարթողիմէոս պատրիարք Գարեգին պատրիարքին կը դառնայ եւ կը յարէ. «Գիտե՞ք չէ, ինչ որ նուէր կու տան, ետ չեն առներ»:

Չենք գիտեր, թէ Գարեգին պատրիարք նուիրե՞ց պանակէն Մեսրոպ սրբազանին:

(161)

Նորընծայ աբեղայ՝ շաբաթավերջի մը Հալէպ եմ Անթիլիասի դպրեւանքին համար սաներ արձանագրելու առաքելութեամբ: Ամառ է: Առաջնորդը՝ Սուրեն սրբազան արձակուրդով Գանատա կը գտնուի: Առաջնորդարանի քարտուղարը կը տեղեկացնէ, թէ շաբաթ եւ կիրակի ուրիշ սուրբ պսակի օրհնութեան պիտի նախագահեմ Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցիին մէջ: Առաջին պսակադրութեան սկիզբն իսկ իրար կ'անցնիմ, երբ կը տեսնեմ, թէ ատեանին մէջ աջիս ու ձախիս կանգնած տասը քահանայ արարողութեան պիտի մասնակցի: «Աստուա՛ծ իմ», կ'անճրկիմ, «այս բոլորին ի՛նչ աղօթք պիտի տամ», կը մտածեմ եւ մտահոգութիւնս առաջնորդական փոխանորդ տ. Ատոմ աւ. քահանային կը յայտնեմ: «Դուն ինծի՛ ձգէ», կըսէ փորձառու տէր հայրը, եւ ամեն մէկուն սուրբ պսակի խորհուրդէն ընթերցում մը կու տայ՝ ինծի ալ բացումի եւ փակումի «Հայր մեր»-ը յանձնարարելով:

(162)

Եկեղեցիի մը թաղականութեան ընտրութիւնը պիտի կատարուի: Թեր ու դէմ երկու խումբի բաժնուած են ընտրողները: Առաջնորդը եւ ազգային իշխանութիւնը ամեն միջոցի կը դիմէ համերաշխաւորին գոյացնելու համար: Ապարդիւն: Ի վերջոյ երկու խումբի պարագլուխները սրբազանին քով կու գան եւ կըսեն. «Դո՛ւք թուղթի մը վրայ գրեցէք եօթը նոր թաղականներուն անունները եւ մենք պիտի ընդունինք: Ընտրութեան

պէտք չկայ»: Խորագէտ սրբագանը կը պատասխանէ. «Դո՛ւք, երկու կողմերդ միասնաբար համաձայնեցէք, թուղթի մը վրայ գրեցէք եօթը նոր թաղականներուն անունները, պահարանի մը մէջ դրէք, պահարանը գոցեցէք եւ ինծի բերէք: Առանց պահարանը բանալու, պահարանին վրայ ստորագրելով պիտի վաւերացնեմ նոր կազմը»:

(163)

Շաբաթ օր է: Հայաստանէն Ամերիկա եկած զարմիկիս Լոս Անճելըսի տունն էմ: Ան տասը տարեկան տղայ մը ունի՝ Կարէնը, որ համակարգիչին դիմաց խաղեր կը խաղայ: Զարմիկս ներողամտութիւն կը խնդրէ եւ մէկ ժամուան համար շուկայ կ'երթայ: Քառորդ ժամ ետք Կարէնին կըսեմ. «Կը հաճի՞ս ինծի թուղթ մը եւ մելան մը տալ»: Ան զարմացած ինծի կը նայի եւ կը պատասխանէ. “Sorry. I don’t speak Russian”: Կանդրադառնամ, որ Լոս Անճելըս ծնած պատանին միայն շատ լաւ անգլերէն եւ քիչիկ մըն ալ արեւելահայերէն գիտէ. իսկ իմ խօսած արեւմտահայերէնս իրեն ռուսերէն կը թուի....:

(164)

Վանգուվըր հովիւ եմ: Կէս գիշերին հեռաձայնս կը զարնէ: Ահ ու դողով կ'արթննամ մտածելով, որ այս ժամուն գէշ լուր մը պիտի ստանամ. այլապէս ո՞վ պիտի հեռաձայնէ այս անյարմար ժամուն: Տաթեւ արք. Սարգիսեանն է Լոս Անճելըսէն: Քաղաքավարական մի քանի հարց-պատասխանէ յետոյ կը պարզուի, թէ Ֆլորիտա ծառայող Շահէ վրդ. Փանոսեանին հեռախօսի թիւը պէտք ունի: Կու տամ եւ «գիշեր բարի» մաղթելէ ետք կը փորձեմ քնանալ: Քառորդ ժամ անց դարձեալ հեռաձայնս կը զարնէ: Տեղէս կը ցատկիմ: Հայր Շահէն է, որ բարկութեան տուարակը գլուխէս վար կը պարպէ. «Նարե՛կ, դուն խելք չունի՞ս. այս ժամուն հեռաձայն բանա՞լ կըլլայ»: Յայտնեմ, որ երբ Վանգուվըր է Լոս Անճելըս կէս գիշեր էր, Ֆլորիտա կէս գիշերէն ետք ժամը երեք էր: «Ի՞նչ է, գինով ես: Ե՞ս քեզի հեռաձայն բացի, թէ ոչ դուն ինծի: Քառորդ ժամ առաջ Տաթեւ սրբագանը հեռախօսեց եւ թիւդ ուզեց, ես ալ տուի: Ասոր մէջ ես ի՞նչ յան-

ցանք ունիմ: Ինչու, ի՞նչ եղաւ», կը հակադարձեմ: «Դեռ ի՞նչ պիտի ըլլայ: Տաթեւ սրբազանը հեռաձայն բացաւ եւ առտուան երեքին արթնցուց՝ Սարգիս Սողանալեանին թիւը ուզելու համար: Եղբայր, այս բոլորը *նորմալ* ժամու մը չէ՞ ր կրնար ըլլալ», կըսէ ան: «Եղածը եղաւ հիմա: Լաւ որ գէշ բան մը չէ պատահած: Մեր Տաթեւ սրբազանն է. չե՞ս գիտեր, որ երբ մենք քնանանք, ի՛նք կ'արթննայ եւ երբ մենք արթնանք, ի՛նք կը քնանայ: Բարի գիշեր քեզի: Հիմա ալ արթննալու կարգը Սարգիս Սողանալեանին է թերեւս...», ըսելով կը մխիթարեմ հայր Շահէն եւ ինքզինքս:

(165)

Գարեգին Բ. վեհափառ հայրապետ որպէս արժանաւոր կաթողիկոս առաջին անգամ ըլլալով միջինքի առթիւ Ս. Նշան մայր եկեղեցի կ'այցելէ, արեւագալի ժամերգութեան կը նախագահէ, կը քարոզէ եւ նախաճաշին կը մասնակցի: Իր փակման խօսքին մէջ կըսէ. «Ամեն բան լաւ կազմակերպած էիք, բայց սեղանին վրայ *հալվա* չէիք դրած: Ասկէ առաջ երբ որ եկած ենք, հալվան անպակաս եղած է»: Ապա կ'աւելցնէ. «*Հալվա* կայ կամ չկայ կարելոր չէ: Կարելորը՝ դո՛ւք, մեր ժողովուրդը *հալվայէն* աւելի քաղցր է: Ապրի՛ք. հազար ապրիք»:

(166)

Անդրանիկ իր ընկերոջ՝ Ռազմիկին կը հարցնէ. «Մեր շրջանին մէջ լաւ ճաշարան մը գիտե՞ս: Դուրսէն հիւր մը ունիմ. ճաշի ո՞ւր տանիմ»: Ռազմիկ ճաշարան մը կը յանձնարարէ, եւ կ'աւելցնէ. «Չես գղջար, երես կը ճերմկցնէ»: Անդրանիկ իր հիւրը Ռազմիկին ըսած ճաշարանը կը տանի եւ լաւ ժամանակ կ'անցընեն ու համով-հոտով կուտեն-կը խմեն: Քանի մը օր ետք, երբ Անդրանիկ Ռազմիկին կը հանդիպի, կըսէ. «*Ակա՛ւ*, մեզ դրկած ճաշարանդ աղուոր երես ճերմկցուց, բայց աւելի աղուոր ալ գրպան սեւցուց...»: Խեղճ Անդրանիկը երկու անձի համար երկու հարիւր տոլար վճարած էր:

(167)

Մեր հայր սուրբերէն մէկուն հետ մի քանի քաներ առնելու համար գրենական պիտոյքներ վաճառող արաբի մը խանութը գացած էինք: Բաւական յաճախորդ կար, եւ ես երկար տարիներէ ի վեր գործածած չոր կապոյտ մելանիս յատուկ տեսակը կը փնտռէի: Ստիպուած եղանք պաշտօնեայի մը օգնութեան դիմելու: Հայկական դիմագիծերով պաշտօնեայ մը տեսայ, որ յաճախորդ մը ճամբած էր եւ քիչ մը անդին կայնած: «Սագօ՛, Սագօ՛» ըսի՝ բաւական լսելի ձայնով: Ան անմիջապէս քովս եկաւ եւ զարմացական շեշտով հարցուց. «Ինչէ՞ն գիտցաք, որ անունս Սագօ է»: Ես ալ պատասխանեցի. «Մէջէս եկաւ. որովհետեւ հայերուն մէջ Սագօ եւ Յակոբ անունը շատ կայ...»:

(168)

Լիբանանի առաջնորդ եղած շրջանիս, Միսի Ս. Սարգիս եկեղեցւոյ անուանակոչութեան առթիւ սարքուած ճաշկերոյթի ընթացքին, սեղանակից Յակոբ մը կէս-լուրջ կէս-կատակ ըսաւ. «Գիտէ՞ք քանի հատ Յակոբ կայ մեր մէջ: Ի՛նչ լաւ կըլլայ եթէ բոլորս միասին սարկաւազ ձեռնադրէք»: «Այո՛, գոնէ տասնհինգ Յակոբ ունինք Առաջնորդարանի անմիջական շրջանակին մէջ. ազգային երեսփոխան, թաղական, դպիր», պատասխանեցի. «մէկ պայմանով կը ձեռնադրեմ, եթէ բոլորդ ալ ամեն կիրակի եկեղեցի գաք: Ասանկ-անանկ եկեղեցւոյ մէջ էք արդէն. գոնէ այս ձեռով մկրտութեան շնորհին վրայ առաւել ձեռնադրութեան շնորհն ալ կը ստանաք»: Մէյ մըն ալ այս ձեռնադրութեան խօսքը չեղաւ...:

(169)

Կիրակի, 17 յունիս 2012, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ արեղայական ձեռնադրութիւն կատարեցի եւ ընծայեալներէն մին՝ Գեորգ սրկ. Սապունճեանը «Սմբատ քահանայ» օծեցի: Նորօծ հայր սուրբին մայրը արաբախօս ըլլալով՝ «Սմբատ»-ը «Մըպպաթ» (արաբերէն՝ «կօշիկ») հասկցեր է եւ զիս մեղադրեր է ըսելով. «Ա՛ս սրբազանն ալ

ուրիշ անուն չգտա՞ւ, ելաւ տղաս կօշիկ կոչեց»։ Խեղճ կինը ուրկէ իմանա՞ր, թէ ունեցած ենք Սմբատ Բագրատունի (այրաքաջ), Սմբատ Մամիկոնեան, Սմբատ Արծրունի, Սմբատ պատրիկ, Սմբատ Սիսական իշխանաց իշխան, Սմբատ թագաւոր հայոց, Սմբատ մագիստրոս, Սմբատ Օրբելեան, Սմբատ Գունդստապլ, Սմբատ Կիլիկեցի եւ Սմբատ արք. Լափաճեան՝ յիշելու համար մի քանի նշանաւոր Սմբատներ։ Մնացած Սմբատներուն, Սմբատիկներուն եւ Սմբատուհիներուն մասին յաւելեալ տեղեկութիւններ կը գտնուին՝ Հրաչեայ Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, «դ. հատոր, ք. տպագրութիւն, Հալէպ, 2006, էջ 537–564:

(170)

Նիկոսիոյ մէջ հիւանդ բարեկամի մը այցելեցի։ Ան մի քանի օր առաջ հիւանդանոցէն տուն եկած էր եւ նստած տեղէն ոտքի ելլելու դժուարութիւն ունէր։ «Անցած ըլլայ, առողջութիւն եւ այլն» մաղթելէ, աղօթք մը կատարելէ եւ շուրջ կէս ժամ զրուցելէ ետք, երբ մեկնումի ժամս հասաւ, բարեկամս ուզեց ոտքի կանգնիլ եւ ողջագործումով ցտեսութիւն մաղթել ինծի։ «Կեցի՛ր, օգնեմ», ըսի եւ ձեռքս իրեն երկարեցի։ Ան սրամտօրէն հարցուց. «Օգնե՛մ ըսիր, թէ օրհնեմ»։ Պատասխանեցի. «Ես օգնեմ ըսի, բայց օրհնեմ ալ կ'ըլլայ, որովհետեւ երբ օգնեմ՝ օրհնած կ'ըլլամ եւ երբ օրհնեմ՝ օգնած կ'ըլլամ...»։

(171)

Նիկոսիոյ մէջ 95–100 տարեկանի միջեւ տարութերող տէր եւ տիկնոջ մը հիւանդտեսի գացի։ Շուրջ մէկ ժամ տիկինը պատմեց ամուսինին եւ իր ունեցած հիւանդութիւններուն մասին՝ Կիպրոսի ու Անգլիայի մէջ բազմաթիւ բժիշկներու եւ հիւանդանոցներու անուններ թուելով եւ յաճախ հաստատելով, թէ վստահաբար զանոնք գիտեմ։ Տունին տղամարդը միայն քանիցս նոյն քաղաքավարական, սակայն անտրամաբանական հարցումները ուղղեց ինծի. օրինակ՝ «Ինչպէ՞ս էք», «Հո՞ւս կ'ապրիք» եւ այլն։ Երբ յայտնեցի, թէ այցելութիւնս աւարտած կը համարեմ եւ պէտք է մեկնիմ իրենց տունէն, տիկինը ամփոփեց իր մենախօսութիւնը. «Իշտէ՛ ասանկ,

սրբազա՛ն: Փա՛ռք Աստուծոյ, հակառակ տարիքիս՝ ես լաւ եմ. բայց մեր մարդը շատ հիւանդ է. հիմա խելքէն վար մինչեւ ոտքերը ամեն բաները նորմալ չեն աշխատիր...»: Երբ տունէն դուրս ելայ՝ մտածեցի, որ մարդուն խելքն ալ շատ *նորմալ* չէր: Է՛հ, ծերութիւն է. եթէ այս տարիքը հասնինք՝ արդեօք մենք ի՞նչ պիտի ըլլանք:

(172)

Հայրս եւ մայրս, իրենց կեանքի մայրամուտին, Մոնթրէալի մէջ, նոյն սենեակին մէջ, հիւանդանոց-ծերանոց մը բնակեցան: Մայրս երկար տարիներ *ալզայմըրէ* տառապեցաւ, հայրս ալ մէկ տարի անկողինի ծառայեց: Յարաբերաբար հօրս՝ մայրս միշտ աւելի հաղորդական եւ խօսուն եղած է: Ամեն անգամ երբ բժիշկ մը, բուժակ մը, օտար այցելու մը ծնողքիս սենեակը մտած է *«պօնժուռ»* (ֆրանսերէն «բարեւ») ըսելով, մայրս՝ լիբանանեան արաբական սովորութեան համաձայն, *«պօնժուռէյն»* (տառացի թարգմանութեամբ՝ «երկու *պօնժուռ»*) պատասխանած է: Ֆրանսա-խօս մոնթրէալցիներ զարմացած են այս անսովոր պատասխանէն եւ ինծի հարց տուած. «Մամադ ի՞նչ կ'ըսէ»: Ես ալ պատասխանած եմ. «Ձեր մէկ *«պօնժուռիյն»* «երկու *պօնժուռ»* կը մաղթէ»: Անոնք յարած են. «Ո՛հ, այս ի՛նչ լաւ է», եւ իրենք ալ սկսած են նոյնը կատարել:

«Պօնժուռի» ուրիշ պատմութիւն մըն ալ յիշեցի: 1999-ին, Լիբանանէն ինքնաշարժով խումբ մը հայորդիներ Սուրիոյ Պապ-ըլ-Հաուա սահմանը անցնելով պատմական Կիլիկիա պիտի մտնենք: Սահմանապահ զինուորին հրահանգին անսալով՝ ինքնաշարժին դուռը կը բանանք, եւ ան մեր անձնագրերը ստուգած ատեն նաեւ մեր անուն-մականունները կ'արտասանէ: Ես դուռին մօտ նստած ըլլալով՝ քաղաքավարութիւն կը համարեմ «բարի լոյս» մը մաղթել զինուորին եւ լիբանանեան ընդհանրացած բանաձեւին հետեւելով՝ *«պօնժուռ»* (ֆրանսերէն «բարեւ») կ'ըսեմ: Ան զիս կը յանդիմանէ պատասխանելով. «Ինչո՞ւ հետս արաբերէն խօսելու փոխարէն անգլերէն կը խօսիս...»:

(173)

Ամենօրեայ աստուածաշնչական ընթերցումներուս ընթացքին, հայերէն ուղեցոյց-աղբիւրի մը մէջ հանդիպեցայ հետեւեալ մէջբերումին. «*Չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մանանային*» (Աւետարան ըստ Մատթէոսի 6.24). մինչդէռ հարազատ թարգմանութիւնը պէտք էր ըլլար. «*Չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնային*» (Աւետարան ըստ Մատթէոսի 6.24): Այս համարին ժամանակակից թարգմանութիւնն է. «*Չէք կրնար Աստուծոյ ծառայել, որքան ատեն որ կը ծառայէք դրամին*» (Աւետարան ըստ Մատթէոսի 6.24):

(174)

Լիբանանի մէջ, երկու մեծահարուստ ամուրի հայորդիներ, մին՝ առատաձեռն եւ միւսը՝ ազահ, երկար տարիներ բարեկամական կապեր կը պահեն իրարու հետ: Առատաձեռնը շատ հիւրասէր է. գրեթէ ամեն օր ազահը անոր սեղանակից կ'ըլլայ: Ան երբեմն նոյնիսկ բարեկամէն առաջ անոր բնակարանը կը հասնի եւ խոհանոցը կը նստի, ուր սպասաւորը անոր ջուր, օշարակ, սուրճ եւ կարկանդակ կը հրամցնէ: Այս ազահը օր մըն ալ կը նշմարէ, թէ սեղանին վրայ ջուրի շիշ մը կայ՝ վրան «Սոհա» արձանագրութեամբ: Զինք հիւրընկալող սպասաւորէն կ'իմանայ, որ շուկայ իջած բաւական սուղ արժող ջուրի նոր տեսակ մըն է աս: Ան կը համոտեսէ «Սոհան» եւ ամեն այցելութեան միշտ նոյն ջուրէն կը խնդրէ: Բաւական ժամանակ անցնելէն ետք, այս մարդուն ազահութենէն դժգոհած՝ սպասաւորը տիրոջ կընտէր, թէ իր բարեկամը օրէ-օր աւելի պամանջկոտ դարձած է եւ յաճախ մի քանի գաւաթ «Սոհա» կը խմէ: Տէրն ալ կը յանձնարարէ. «Քեզի լուծումը տամ. «Սոհայի» պարպուած շիշին մէջ ծորակէն ջուր լեցուր եւ ատ հրամցուր իրեն: Ան նոյնիսկ տարբերութիւնը պիտի չգիտնայ»: Սպասաւորը տիրոջ պատուէրը կը գործադրէ: Ազահ մարդը ամեն անգամ երբ «Սոհա» դարձած ծորակի ջուրը կը խմէ, կը յարէ. «Օ՛խ, ի՛նչ համով է «Սոհա» ջուրը...»:

Վանգուվրի ընկերներէս մին է պատմողը. «Գրեթէ ամեն կիրակի կէսօրէ ետք չորս ընկերով մեզմէ մէկուն տունը կը հաւաքուինք, կը գրուցենք, գաւաթ մը ուիսքի կը խմենք եւ «պլոթ» (ֆրանսական թղթախաղ) կը խաղանք: Կիրակի մըն ալ մեր ընկերներէն Աբգարը կը հեռախօսէ ինծի եւ կը խնդրէ, որ իրենց տունը հանդիպիմ ու զինք իմ օթոյովս տանիմքերեմ, որովհետեւ իր օթոն նորոգութեան մէջ կը գտնուի: Այդ օր Աբգար այնքա՛ն բախտաւոր կըլլայ, որ «պլոթի» աստէն բարձրագոյն՝ «երկու հարիւր» թիւը կը յայտարարէ, սակայն խաղին օրէնքը կը խախտէ, երբ ճիշդ պահուն իր ունեցած չորս տղայ քարթերը կը մոռնայ ցոյց տալու եւ խաղընկերները կը գոչեն. «Չի՛ քալեր, ուշացար «երկու հարիւրդ» ցոյց տալու. համապատասխան գումարը չի՛ գրուիր, չի՛ հաշուիր»: Աբգար կը բողոքէ, ընկերները կը մերժեն գումարը արձանագրել: Աբգար շատ կը ջղայնանայ, ոտքի կենլէ, խաղաքարտերը սեղանին վրայ կը թափէ եւ կըսէ. «Ես կերթամ կոր», ու դէպի տունին դուռը կը շտապէ: Երեքս անտարբեր իրեն կը նայինք եւ կըսենք. «Ինչպէ՛ս պիտի երթաս. այսօր օթօ չունիս»: Մանկական ժպիտը դէմքին՝ Աբգար խաղի սեղանին կը վերադառնայ՝ յարելով. «Անանկ է նէ, խաղը շարունակենք»: Բոլորս լիաթոք կը խնդանք, եւ Աբգարին «երկու հարիւրն» ալ իրեն կը շնորհենք: Է՛հ, վերջապէս, բարեկամութիւնը խաղէն աւելի արժէքաւոր է»:

Մեսրոպ արք. Աշճեան իր *Պահն ու յաւերժութիւնը* գիրքին «Անցեալ օրերու աղն ու համը» գրութեան մէջ կը յուշագրէ. «Յետոյ գացինք Շանգ Էլիզէ: Շանգ Էլիզէն, ուրեմն, Փարիզի եւ կրնամ ըսել աշխարհի ամենէն երկար պողոտաներէն մէկն է, որ Կոնկորտի հրապարակէն կերթայ մինչեւ Յաղթական կամար: Շատ գեղեցիկ է, եւ, ուրեմն ֆրանսերէնով կը նշանակէ Ելիսեյան դաշտեր: Պատմութիւն մը պատմեցի, որ Աշոտը, իր բոլոր անմեղութեամբ, մինչեւ գրեթէ վերջը հաւատաց, յետոյ ալ ես ամչցայ իր բարութիւնը եւ միամտութիւնը շահագործելուս համար, ինքն ալ բարկացաւ, որ այդպէս վարուեր էի: Ի՞նչ էր պատմութիւնը: Իրեն կըսէի թէ ի՛նչ է Շանգ Էլիզէի անուան ծագումը: Իբր ըստ հին-հին աւանդութեան, Արա

Գեղեցիկ երբ մահացաւ պատերազմի դաշտին վրայ, արաւելները եկան եւ սկսան լիզել զինք, որպէսզի կենդանացնեն: Յանկարծ Արան բարձրացաւ, շուրջը նայեցաւ, տեսաւ որ արաւելները զինք լզած եւ ողջնցուցած են, բայց իր փոքրիկ շանը եղածին պէս թողեր են: Բարկացաւ եւ արաւելներէն մէկուն ըսաւ. «Շանս էլ լիզէ՛, շանս էլ լիզէ՛»: Եւ ատկէ մնացեր է Շանգ Էլիզէ անունը: Չեմ գիտեր, պատմիչները այս մասին վկայութիւններ ունի՞ն, աղբիւրները, չեմ գիտեր, գիտեմ որ Աշոտը շատ-շատ զարմացաւ, խնդաց, բարկացաւ, վշտացաւ, բայց վստահ եմ ներեց» (էջ 434):

(177)

1986-ին Անթիլիասէն Թորոնթօ կը հասնիմ եւ հոս մէկ շաբաթ կը մնամ նախքան Վանգուվըրի հովուական պաշտօնիս մեկնիլը: Առիթէն օգտուելով՝ երկու ընկեր զիս Նիակարա Ֆոլզ կը տանին աշխարհահռչակ ջրվեժը տեսնելու: Հազիւ հասած՝ երկուքն ալ մասնագիտական լուսանրկարչական մեքենաներով զինուած կը հրահանգեն ինծի. «Այսպէ՛ս կեցիր, *զամերայի՛ն* նայէ, քիչ մը այն կո՛ղմ դարձիր», եւ անընդհատ կը լուսանրկարեն: Թորոնթօ վերադարձին, ինքնաշարժին մէջ կը պատմեն, թէ նոր գնած են իրենց լուսանկարչական մեքենաները եւ վստահ են, որ գեղեցիկ պատմական նկարներ պիտի դրկեն ինծի՝ Վանգուվըր: Մէկ ամիս յետոյ, կը հեռաձայնեմ երկուքին ալ եւ իրենց խոստումը կը յիշեցնեմ: «Կը ներես, երբ *զամերաները* լուսանկարչատուն տարինք ֆիլմերը լուալ տալու համար՝ պարգուեցաւ, որ մոռցեր էինք ֆիլմ դնելու...»:

(178)

1991-ին Վանգուվըրէն Նիւ Ճըրզի փոխադրուեցայ եւ հովուական նոր պաշտօնս ստանձնեցի: Ծնողքս ալ ինծի հետ Նիւ Ճըրզի հաստատուեցան: Մեր ժամանումէն երեք շաբաթ ետք հայ ընտանիքի մը տունը հրաւիրուեցանք, ուր շուրջ 40 հայորդիներ եւս ի մի եկած էին: Հիւսիսային Ամերիկայի մէջ, երբ հայեր առաջին անգամ իրարու հանդիպին, առաջին

հարցումներէն մին կ'ըլլայ. «Ո՞ր եկեղեցին կ'երթաք», որպէսզի հասկնան, թէ ո՞ր կողմի կը պատկանիս. որովհետեւ գրեթէ բոլոր քաղաքներուն մէջ թէ՛ էջմիածնական եւ թէ՛ կիլիկեան եկեղեցիներ կան, եւ մէկն ու մէկը յաճախած ըլլալդ «գոյնդ» կը ցոլացնէ: Ըստ երեւոյթին այս հաւաքոյթին ամեն կողմէ հայ կար, եւ անտեղեակ ամերիկացիներ տիկին մը կը ծանօթանայ մօրս հետ ու կը փափաքի մեր ո՞ր կողմի պատկանելիութիւնը իմանալ: Անշուշտ չէր կրնար մօրս հարցնել. «Ո՞ր եկեղեցին կ'երթաք», որովհետեւ բնականաբար մայրս իմ հովուած եկեղեցիս պիտի երթար, այլ ուղղակիօրէն հարց կու տայ. «Դուք դաշնակցակա՞ն էք, հնչակեա՞ն էք, ռամկավա՞ր էք, ի՞նչ էք»: Մայրս կը պատասխանէ. «Մենք աստուածակա՞ն ենք», եւ խօսակցութիւնը կ'աւարտի. տիկինը պատասխանը առած է, սակայն ի՞նչ հասկցած է, չենք գիտեր...:

(179)

Վանգուվըր հովութեանս առաջին երկու տարին՝ Պրիթիշ Գոլումպիայի համալսարանին մէջ ապրեցայ եւ ծանօթացայ այս թաղամասին մէջ տուն ունեցող ծխականներուն: Ասոնցմէ մին՝ Յարութիւն Սաղրեանը օր մը իմացաւ, որ ես ամեն օր, երեկոյեան ժամը 5.00–6.00, որպէս մարզանք համալսարանէն մինչեւ իրենց տունին կողմերը կը քալեմ, եւ առաջարկեց որ միասին քալենք: Համաձայնեցայ Յարութիւնին հետ եւ 5.15-ին իրենց տունին առջեւ հանդիպեցանք ու մեր ճամբան շարունակեցինք: 15–20 վայրկեան յետոյ՝ մեր մարդը յայտնեց, թէ յոգնած է եւ պէտք է դադար առնելով իրենց տունը վերադառնանք ու «*չի-քէօֆթէ* մը զարնենք»: Մի քանի վայրկեան եւս քալելէ ետք՝ պարտաւորութեցայ իր հրահանգին ենթարկուիլ: Հասանք Սաղրեան բնակարանը եւ Յարութիւն 10-ը վայրկեանէն փառաւոր սեղան մը շտկեց՝ *չի-քէօֆթէն* իւր սարօքն հրամցնելով: Աս եղաւ Յարութիւնին հետ իմ առաջին եւ վերջին մարզական արկածախրնդրութիւնս:

(180)

Անթիլիասի մայրավանքի սեղանատունէն խոհանոց ներքին գիծով հեռաձայն կը բանամ՝ սեղանատունի պատասխանատու Վաչէին հետ խօսելու համար: «Բարի լոյս, Վաչէն հո՞ն է», կը հարցնեմ: Խոհարարուհիներէն մին կը պատասխանէ. «Սրբազա՛ն, Վաչէն այսօր արձակուրդ է, այսօր ե՛ւ եմ Վաչէն...»: Պէտք եղած յանձնարարութիւնը կատարեցի, հեռաձայնը անջատեցի եւ կուշտ ու կուռ խնդացի:

(181)

1986-ին Անթիլիասէն Վանգուվըր հասայ երեք ամսուան զբօսաշրջիկի վիզայով: Երկու ամիս ետք քանատական հպատակութեան գրասենեակը գացի մնայուն կեցութեան կարգավիճակի դիմելու համար: Զիւ ընդունողը 50–55 տարեկան թխադէմ եւ հսկայ կին պաշտօնեայ մըն էր, որ շատ ազնիւ ոճով հարց տուաւ. «Ի՞նչ կը խնդրէք: Ինչպէ՞ս կրնամ օգնել ձեզի»: Բացատրեցի, թէ տեղւոյն հայ համայնքին հովին եմ, համալսարան կը յաճախեմ եւ կը փափաքիմ մնայուն կեցութիւն ունենալ: Բոլոր պաշտօնական թուղթերս ստուգեց եւ պատասխանեց. «Ամեն բան կարգին է: Մինչեւ այն ատեն, որ իւրաքանչիւր կիսամեայի համալսարան արձանագրութեան պաշտօնաթուղթը բերէք, ձեզի ուսանողական կարգավիճակի վիզա կու տանք եւ վեց ամիսը մէկ զայն կը վերանորոգենք»: Սկիզբէն չէի մտածած, սակայն գիտնալով որ այս կարգավիճակով ծնողքս չեմ կրնար Լիբանանէն քովս բերել՝ նախախնամական գրգիռ մը ունեցայ, եւ ըսի. «Շնորհակալ եմ. սակայն պէտք է գիտնաք, թէ ես ժամանակաւորապէս ուսանող եմ. մի քանի տարիէն, երբ վկայականս առնեմ, այլեւս ուսումնաւարտած կ'ըլլամ: Միչդեռ ցկեանս հոգեւորական եմ, եւ Քանատայի ամբողջ տարածքին՝ Մոնթրէալ, Թորոնթօ, Գեմպրիճ, Սէյնթ Գաթրինգ եւ այլ քաղաքներ հայ եկեղեցիներ ունինք եւ որեւէ ատեն մեր առաջնորդ սրբազանը կրնայ զիս Վանգուվըրէն այլ եկեղեցի մը դրկել: Ես շատ հպարտ եւ ուրախ պիտի ըլլամ որպէս քանատացի՝ ծառայելու Քանատային»: Կինը անմիջապէս պատասխանեց. «Հաճեցէք դիմացի առաջին աթոռին վրայ նստիլ եւ ինծի տասը վայրկեան տալ: Ես ձեզ ետ կը կանչեմ»: Ճիշդ տասնըրեք վայրկեան ետք նշան ըրաւ եւ իրեն մօտեցայ:

Անցագիրս կնքեց եւ յարեց. «Շնորհաւոր ըլլայ: Դուք արդէն մնայուն կեցութեան արտօնագիր ունիք հիմա: Երեք տարիէն քանատացի դառնալու դիմում կրնաք ընել»: «Շատ շնորհակալ եմ», ըսի եւ հարցուցի. «Ինչպէ՞ս եղաւ այս տնօրինումը»: Ան պատասխանեց. «Գիտէք. Քանատան հասարակապետական կեդրոնական կառավարութիւն եւ նահանգային կառավարութիւն ունի: Երբ «որպէս քանատացի՝ կը փափաքիմ ծառայել Քանատային» ըսիք, շատ տպաւորուեցայ եւ ետեւի գրասենեակը երթալով Օթթաուայի պետիս հեռաձայնեցի ու ձեր ըսածը պատմեցի: Պետս եւս տպաւորուեցաւ եւ իրաւասութիւն տուաւ ինծի, որ ձեզի անմիջապէս այս կարգավիճակը շնորհեմ: Անգամ մը եւս «Շնորհաւոր ըլլայ» կ'ըսեմ. բարի եկաք ձե՛ր նոր երկիրը»: Այսպիսով երեք տարի յետոյ քանատացի դարձայ եւ ապա ծնողքս եւս Քանատա բերի: Աստուած այնպէս տնօրինեց, որ ճի՛շդ ժամուն, ճի՛շդ տեղը, ճի՛շդ անձին հանդիպեցայ...:

(182)

Տէր Աստղիկն է պատմողը. Թուրքիոյ մէջ, երբ զինուորական ծառայութիւնս կը կատարէի, ամեն անգամ երբ զինուոր մը անհանգիստ զգար, Aspirin դեղահատը կու տային: Օր մըն ալ զինուոր մը ոտքի ահաւոր ցաւ կ'ունենայ եւ բժիշկին կը դիմէ: Բժիշկը Aspirin կու տայ: Հիւանդը մէկ շաբաթ կ'առնէ դեղը եւ չի՛ բուժուիր: Դարձեալ բժիշկին քով կ'երթայ: Բժիշկը հարց կու տայ. «Դեղը կ'ըլլէի՞նք յետոյ ի՞նչ ըրիր»: Հիւանդը կը պատասխանէ. «Բան մըն ալ չըրի»: «Չեղաւ», կը շարունակէ բժիշկը, «անշուշտ ցաւդ չ'անցնիր», եւ կ'ըզրափակէ. «Դեղը պիտի առնես եւ ցաւած ոտքդ լաւ մը պիտի շարժես, որպէսզի դեղին ազդեցութիւնը ոտքիդ հասնի...»:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

Այսքան ալ սուտ կըլլա՞յ

Կիրակի օր քարոզիչը ստախոսութեան մասին կը քարոզէ, եւ ապա հաւատացեալներուն կըսէ. «Պիտի խնդրեմ, որ գալ կիրակիի քարոզիս որպէս նախապատրաստութիւն, երբ տուն երթաք, Մարկոսի աւետարանին 17-րդ գլուխը կարդաք»: Յաջորդ կիրակի, քարոզէն առաջ, ան կը հարցնէ. «Ո՞վ կարդաց Մարկոսի աւետարանին 17-րդ գլուխը»: Բոլոր ժողովուրդը ձեռք կը բարձրացնէ. «Այս ի՞նչ պարկեշտութիւն եւ ճշմարտախօսութիւն: Շատ տպաւորուած եմ: Կը փափաքիմ յայտնել, թէ Մարկոսի աւետարանը միայն 16 գլուխ ունի...»:

Հաւատքդ քեզ պիտի փրկէ

Հրաշագործութեան համբաւ վայելող քարոզիչ մը գիւղ մը կու գայ, ուր երկու տարիէ ի վեր անձրեւ չէր տեղացած: Գիւղացիներ անմիջապէս կը դիմեն իրեն, որ Աստուծմէ անձրեւ խնդրէ: Քարոզիչը դրական պատասխան կու տայ անոնց եւ կը հրաւիրէ զիրենք գիւղին հրապարակը հաւաքուիլ յաջորդ օր առաւօտեան ժամը տասին: Իսկապէս ալ մեծ ամբոխ մը կը խոնուի հրապարակը, եւ նախքան աղօթելը՝ քարոզիչը ուշի-ուշով գիւղացիներուն կը նայի եւ կը յանդիմանէ զիրենք, ըսելով. «Կը հիանամ ձեր հաւատքին վրայ, ձեզմէ ո՛չ ոք հովանոց բերած է...»:

Աժան եւ օգտակար

Ամառնային ահռելի տաք կիրակի առտու հայր, մայր եւ Սոնա կ'արթննան, աղուոր նախաճաշ մը կ'ընեն եւ կը սկսին քննարկել, թէ երեքով ո՞ր պիտի երթան հանգստեան օրը վայելելու համար: Մայրը կ'առաջարկէ շուկայ երթալ, հայրը աւելորդ ծախսէ խուսափելու համար, կը փափաքի իր ծնողքին տունը երթալ եւ հոն ալ ճաշել: Սոնա կը վճռէ. «Այս տաք օդին ամենէն լաւ տեղը եկեղեցին է: Նախ՝ air condition-ով լաւ մը զովացուած կըլլայ, երկրորդ՝ մի քանի տուլար նուէր տալով համերգ մը կը լսենք, եւ

երրորդ՝ գոնե տարին մի քանի անգամ ընտանեօք Աստուծոյ տունը այցելած կըլլանք...»:

Պոռպոռան քարոզիչ տէր հայրը

Կիրակի եկեղեցիէն տուն դառնալէ ետք՝ Յակոբիկ ծնողքին կ'ըսէ. «Երբոր մեծնամ, տէր հայր պիտի ըլլամ»: Մինչ հաւատացեալ մայրը ուրախութեամբ գլուխը կը շարժէ եւ հաւանականութիւնը կը յայտնէ, հայրը կը հարցնէ. «Տղա՛ս, հիմա ուրկէ՞ հանեցիր տէր հայր ըլլալը»: Յակոբիկ կը տրամաբանէ. «Այսպէս թէ այնպէս գրեթէ ամեն կիրակի եկեղեցի կ'երթանք կոր: Երբ տէր հայր ըլլամ՝ փոխանակ բարկութիւն լսելու, ես բոլորին վրայ կը պոռամ»: Անշուշտ հասկցաք, թէ ակնարկութիւնը պոռալով-կանչելով տրուած քարոզներուն է...:

Աւետարան ըստ դրամի

Տիկին Վիքթորիա տէր Վարդանին կը հեռախօսէ եւ իրենց նոր տունը օրհնելու կը հրաւիրէ: Չար բախտէն տէր հայրը կը մոռնայ Աւետարանը հետը բերելու եւ հարցը կը պատմէ տանտիրուհիին: «Մի՛ մտահոգուիք, տէր հայր», կ'ըսէ տիկին Վիքթորիան, «հիմա ես ձեզի մեր Աւետարանը կու տամ», եւ մեծ, գեղեցիկ ու ոսկեպատ Աւետարանը տէր Վարդանին կը յանձնէ: Տէր հայրը շատ կը տպաւորուի այս հազուագիւտ Աւետարանէն եւ կը սկսի էջերը դարձնել՝ յարմար հատուած մը կարդալու համար: Մի քանի էջ դարձնելէն յետոյ՝ կը տեսնէ, թէ հինգ-վեց հարիւրնոցներ կան. մի քանի էջ եւս կը թերթատէ՝ դարձեալ նոյնը: Այլեւս պարտաւորուած կ'ըլլայ տիկին Վիքթորիային ուշադրութեան յանձնել այս անսովոր պարագան: Տիկինը հետեւեալ պաղարիւն պատասխանը կու տայ. «Անոնք ես դրած եմ. գրեթէ ամեն էջի մէջ տողարներ պիտի գտնէք: Մեր տունին ամենէն ապահով տեղը աս Աւետարանն է. մեր տնեցիներէն մէկը ձեռք չի՛ տար Աւետարանին...»:

Քարոզի բնաբանը

Կիրակի մը, բարձրաստիճան հոգեւորական մը Կոստանդնուպոլիսի պատրիարքութեան Ս. Աստուածածին աթոռանիստ եկեղեցւոյ մէջ կը քարոզէ. «Մի՛ վախնար, փոքրիկ հօտ» (Աւետարան ըստ Ղուկասի 12.32) բնաբանով: Յաջորդ օր, օրաթերթ մը մեծ գովասանքներ կը շռայլէ հոգեւորականին եւ անոր քարոզին, եւ իր նկարագրականի աւարտին կ'արձանագրէ. «Ան իր քարոզին մէջ ամեն բանի մասին խօսեցաւ՝ բացի ընտրած բնաբանէն»:

Դամբանախօս քահանան

Օր մը, Սուրիոյ հայկական արաբախօս գիւղերէն մէկուն մէջ, քահանայ մը այնքա՛ն տպաւորիչ դամբանական մը կը խօսի, որ յուղարկաւորութեան ներկայ եղողներուն մեռնիլը կու գայ...: Երբ սգաւորներ ննջեցեալին բնակարանը կը հաւաքուին հոգեճաշի համար՝ մեռեալին միամիտ այրին իր երախտագիտական զգացումները երկու բառի մէջ կը խտացնէ. «Ապուս թըմմաք» («Բերանդ համբուրեմ»):

Քնաբեր քարոզիչը

Գիշեր մը, տիկին Աննան շատ կը մտահոգուի, երբ կը տեսնէ, թէ ամուսինը՝ Յովակիմը տանջալից ձայներ հանելով անդադար կ'երթեւեկէ ննջարանին մէջ: «Մարդ Աստուծոյ, ի՞նչ կայ, ի՞նչ ունիս» կը հարցնէ: Միւսը խստիւ կը պատասխանէ. «Բա՛ն չկայ: Դուն քնանալուդ նայէ»: Քիչ ետք՝ Յովակիմին վիճակը աւելի կը ծանրանայ: Աննա դարձեալ կը միջամտէ: Անօգուտ: Յովակիմ նորէն եւ աւելի խիստ ոճով կը հրահանգէ. «Դուն ինծի մի՛ նայիր: Պառկէ՛ ըսի, չէ՞»: Այս անգամ Աննան ալ չի՛ կրնար քնանալ: Կէս գիշերը անց՝ Յովակիմ ճարահատ կը խնդրէ կնոջմէն. «Հաճիս, տէր Պարգեւին թելէֆօն ըրէ, անմիջապէս հոս թող գայ»: «Ա՛յ մարդ, խենթեցա՞ր. այս ժամուն տէր հայրը հոս կանչե՞լ կ'ըլլայ», կը հակադարձէ Աննա: «Քու խելքդ այս գործին չի՛ հասնիր. դուն միայն իմ ըսածս ըրէ՛», ըսելով հարցը կը փակէ Յովակիմ: Աննա հազար ներողութիւն խնդրելով տէր հայրը իրենց

տունը կը հրաւիրէ: Տէր Պարգեւ խորհելով, թէ այսքան ուշ ժամու այս այցելութիւնը անպայման մահամերձի մը համար կրնայ ըլլալ՝ սուրբ հաղորդութիւն, մաշտոց եւ ձեռաչ խաչ առնելով իր ծխականին տունը կը փութայ: Հազիւ տուն մտած՝ Յովակիմ տէր հայրը անկիւն մը կը տանի եւ կ'աղաչէ. «Սա աղուոր քարոզներէդ մէկը խօսիր տէ քնանամ...»:

ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

(Փաուլօ Քոէլոյի հետեւողութեամբ)

Գինետունին մէջ

Քահանայ մը պատահաբար գինետուն կը մտնէ, ուր ոմանք խմելով իսկ ուրիշներ թղթախաղով տարուած էին: Մթնոլորտը անտանելի գտնելով, ան կը հեռանայ՝ առանց բառ մը արտասանելու:

Երիտասարդ մը կը հետեւի իրեն եւ կըսէ. «Գիտեմ թէ տեսածդ հաճելի չթուեցաւ քեզի: Գինետունը մեղաւորներուն վայրն է»:

«Ո՛չ, կը սխալիս. հաւնեցայ տեսածս», կը պատասխանէ քահանան: «Հոն գտնուողները ամեն բան կորսնցնելու պատրաստ եղող մարդիկն են: Երբ ամեն բան կորսնցնեն, անոնց մէկ բան կը մնայ՝ վերադառնալ Աստուծոյ: Քեզ կը վստահեցնեն, որ միայն ա՛յդ վայրկեանէն սկսեալ անոնք Աստուծոյ տիպար աշակերտները պիտի ըլլան»:

Տասը առ հարիւրը

«Ինծի նմանիւր շատ դիւրին է: Միայն պիտի գիտնաս, թէ շահածիդ տասը առ հարիւրը քեզի կը պատկանի», ըսաւ Բաբելոնի ամենէն հարուստ մարդը:

«Ըսածդ անտրամաբանական է: Ինչ որ շահիս հարիւր առ հարիւր քուկդ է», պատասխանեց երիտասարդ մը:

«Դերձակիդ չե՞ս վճարեր: Հացագործեդ ամեն օր հաց չե՞ս գներ: Նոյնիսկ օր մը չես կրնար ապրիլ առանց ծախսելու: Ինքզինքեդ գատ բոլորին կը վճարես: Այս պահէն սկսած շահածիդ տասը առ հարիւրը ինքզինքիդ վճարէ: Միշտ յիշէ, որ հարստութեան ճամբաները կախարդական եւ աննախատեսելի են. եթէ քեզի տուած տասը առ հարիւրիդ լաւ հոգ տանիս, օր մը այդ քայլիդ համար շատ աւելիո՛վ պիտի վարձատրուիս»:

Նաւահանգիստէն անդին

Օր մը, վանական մը կը դիմէ վանահօր. «Շատ լաւ գիտեմ կեանքիս նպատակը: Նաեւ գիտեմ, թէ մարդիկ ինչպէս պետք է Աստուծոյ կամքը կատարեն: Սակայն, հակառակ այս բոլոր գիտութեանս, կ'անդրադառնամ թէ ամբողջապէս չեմ կրնար ծառայել Աստուծոյ»:

«Գիտես, թէ ծովուն միւս կողմը քաղաք մը կայ, սակայն տակաւին չես գտած քեզ հոն տանելիք նաւը, պայուսակներդ չես պատրաստած եւ ծովը չես կտրած: Ի՞նչ արժէք ունի խօսիլ, թէ ինչպէս է այդ քաղաքը եւ ինչպէս կարելի է անոր փողոցներուն մէջ երթելէկէլ: Գործադրէ՛ քիչ առաջ ըսածդ եւ ճամբան ինքնիրեն քեզ պիտի առաջնորդէ», կը յորդորէ վանահայրը:

Միայլ հարցադրումներ

Ի՞նչ է իմաստութիւնը:

Հնդկաստանի մէջ ապրող հայր մը կը լսէ իմաստութեան գաղտնիքը իմացող մեծ իմաստունի մը մասին, որ Պարսկաստան կ'ապրէր: Անմիջապէս կը ծախէ բոլոր ունեցածը, կը բաժնուի ընտանիքէն ու ընկերներէն եւ իմաստութեան փնտռտուքին կը ձեռնարկէ:

Երկար տարիներ ճամբորդելէ ետք, կը հասնի մեծ իմաստունին հիւղակը եւ դրան առջեւ երկիւղածութեամբ կը սպասէ մինչեւ որ իմաստունը իր առաւօտեան պտոյտէն վերադառնայ:

«Հնդկաստանէն մինչեւ հոս եկայ քեզի միայն հարցում մը ուղղելու համար», կ'ըսէ ան:

«Հրամանէ՛ ուղղէ միակ հարցումդ» կը պատասխանէ իմաստունը:

«Որպեսզի հարցումս ամբողջապես հասկնալի ըլլայ քեզի, նախ կ'ուզեմ հարցնել, թե հնդկերեն կրնա մ խօսիլ» կը յարէ ան:

«Կրնաս» կըսէ իմաստունը. «սակայն արդէն իսկ հարցումդ ուղղեցիր. եթէ ուրիշ հարցումներ ունիս, սրտի՛ դ հարցուր: Այսքան երկա՛ր ճամբայ կտրելու պէտք չունէիր գիտնալու համար, թէ ով է լաւագո՛յն խորհրդատուդ» կեզրակացնէ իմաստունը եւ կը փակէ հիւղակին դուռը:

Ինչո՞ւ Աստուած չօգնեց մեզի

Ուսուցիչն ու աշակերտները Արաքական անապատը կը կտրէին եւ ուսուցիչը ամեն առիթ կօգտագործէր աշակերտներուն հաւատքի դասեր տալու:

«Աստուծոյ վստահեցէք ձեր ունեցածները. որովհետեւ, Ան երբեք Իր զաւակները չի՛ լքեր», ըսաւ ան:

Գիշերը երբ քնանալու պատրաստուեցան, ուսուցիչը աշակերտներէն մէկուն յանձնարարեց ձիերը մօտիկ ծառի մը կապել: Աշակերտը մօտեցաւ ծառին եւ ուսուցիչին խրատները մտաբերելով, մտածեց. «Կերելի ուսուցիչս զիս կը փորձէ. ձիերը Աստուծոյ հոգածութեան պէտք է յանձնեմ», եւ զանոնք ծառին չկապեց:

Առաւօտուն նշմարելով, որ ձիերը փախած են, սրտնեղած դիմեց ուսուցիչին. «Աստուծոյ մասին գիտցածդ ա՛յս էր: Երէկ ըսիր, որ կուրօրէն Աստուծոյ վստահիմ եւ ես ձիերը Անոր պահպանութեան յանձնեցի. ահա, հիմա անհետացած են»:

«Աստուած ուզեց տէր ըլլալ ձիերուն, սակայն այդ պահուն ձեռքերուդ պէտք ունեցաւ որպէսզի զանոնք ծառին կապէր եւ դուն ձեռքերդ Աստուծոյ փոխ չտուիր» պատասխանեց ուսուցիչը:

Ո՞րն է առաջին քայլը

Մարդ մը վանականի մը մօտ կերթայ եւ հարց կու տայ. «Հոգեւոր կեանք ապրելու առաջին քայլը ո՞րն է»:

Վանականը զինք ջրհորի մը մօտ կը տանի եւ կը յանձնարարէ , որ ջուրին մէջ իր ցոլացումին նայի: Ապա կը սկսի խիճեր նետել ջրհորին մէջ, որոնք ջուրը կը պղտորեն:

«Դէմքս յստակօրէն պիտի չկարենամ տեսնել եթէ շարունակես այդ քարերը նետել», կը դժգոհի մարդը:

«Այնպէս ինչպէս կարելի չէ դէմքդ տեսնել պղտորած ջուրին մէջ, նոյնպէս ալ անկարելի է զԱստուած փնտռել երբ միտքդ պղտորած է: Հարցումներ ուղղելու փոխարէն միայն հաւատքով ապրէ: Ահա ա՛յս է ամեն բանի նախաքայլը», կ'ըզրակացնէ վանականը: